ԲԱԺԻՆ Գ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1956 - 1965

20—922

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

1. ՍՄԿԿ XX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ։ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ.

1956 թվականի փետրվարին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՄԿԿ XX համագումարը։ Կուսակցությունը համագումար եկավ ավելի համախմբված, ավելի միասնական։ Համագումարին ներկա էին 55 երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների պատվիրակություններ։

Համագումարը քննարկեց ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը, հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի (1956—1960) վերաբերյալ դիրեկտիվները և որոշում ընդունեց ՍՄԿԿ կանոնադրության մեջ մասնակի փոփոխություններ կատարելու մասին։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման վերաբերյալ համագումարը միաձայն ընդունեց բանաձև, որով լիովին հավանություն տվեց Կենտկոմի քաղաքական գծին ու պրակտիկ գործունեությանը և նշեց կուսակցության հերթական խնդիրները կոմունիստական շինարարության բնագավառում։ Համագումարի ընդունած որոշումները տեսական, քաղաքական և գործնական կարևոր նշանակություն ունեն։ Համագումարն ընդգծեց, որ սոցիալիզմը դուրս է եկել մեկ երկրի շրջանակներից և դարձել համաշխարհային սիստեմ։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմն ընդգրկում է հսկայական տերիտորիա՝ շուրջ մեկ միլիարդ բնակչությամբ։ Այդ սիստեմին բաժին էր ընկնում ամբողջ աշխարհի տերիտորիայի 26, բնակչության 35 և համաշխարհային արդյունաբերության արտադրանքի 38 տոկոսը։

Սոցիալիստական պետությունների տնտեսության բնորոշ գիծն այն է, որ նրա վերելքը տեղի է ունենում օրինաչափորեն, առանց ճգնաժամերի։ Սոցիալիզմի երկրները հոգ են տանում ամենից առաջ ծանր արդյունաբերության զարգացման մասին, որը հանդիսանում է ամբողջ էկոնոմիկայի զարգացման հիմքը և հասարակական արտադրության անընդհատ ընդարձակման բազան։ Դրան զուգընթաց տեղի էր ունեցել գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության հետագա վերելք, բարելավվել էր աշխատավորների կենսամակարդակը։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը ցույց տվեց իր անվիճելի առավելությունները կապիտալիստական սիստեմի նկատմամբ։

Համագումարում եղբայրական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ավելի քան 50 ներկայացուցիչների ելույթները հագեցված էին ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ Նրանք մասնավորապես ընդգծեցին, որ ՍՄԿԿ-ն վարում է այնպիսի քաղաքականություն, որը համապատասխանում է ոչ միայն Սովետական Միության ժողովուրդների արմատական շահերին, այլև միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման շահերին։

ՍՄԿԿ XX համագումարը տվեց միջազգային կյանքի և համաշխարհային ասպարեզում տեղի ունեցած նորագույն երևույթների խոր վերլուծությունը, առաջ քաշեց մարքսիզմ-լենինիզմը հարստացնող մի շարք դրույթներ։ Համագումարը նշեց սոցիալական տարբեր սիստեմների խաղաղ գոյակցության մասին լենինյան դրույթները նոր պայմաններում կենսագործելու կոնկրետ խնդիրները, առաջադրեց մի շարք կարևոր միջոցառումներ, որոնց կենսագործմամբ ժամանակակից միջազգային պայմաններում հնարավոր է կանխել պատերազմները։ Համագումարն ընդգծեց, որ խաղաղության համար պայքարում են ոչ միայն սոցիալիստական երկրները, այլև ուրիշ խաղաղասեր պետություններ։ Համագումարը զարգացրեց լենինյան դրույթը տարբեր երկրների՝ սոցիալիզմին անցնելու ձևերի բազմազանության և սոցիալիստական հեղափոխության խաղաղ զարգացման հնարավորության մասին։ Ելնելով լենինյան դրույթներից, համագումարն ընդգծեց, որ ժամանակակից պայմաններում հեղափոխության խաղաղ զարգացման հնարավորություններն առավել ընդլայնվել են։ Միաժամանակ համագումարը նշեց, որ երբեք չի կարելի թուլացնել պայքարը ռեֆորմիզմի և դոգմատիզմի դեմ։

Վերջին տասնամյակներում կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը ավելի համախմբված, միասնական ճակատով է հանդես գալիս, որը խաղաղության պահպանման, պատերազմները կանխելու մեծագույն ազդակ է։ Կապիտալիստական սիստեմն ստացավ լուրջ հարված։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ արագ թափով զարգացավ հեղափոխական-ազատագրական պայքարը Ասիայի երկրներում։

Ընդգծելով սովետական պետության արտաքին քաղաքականության սկզբունքները, համագումարը նշեց, որ սոցիալիզմը իմպերիալիզմին հակադրում է միջազգային հարաբերությունների նոր տիպ։ Սոցիալիստական պետությունների արտաքին քաղաքականության հիմքում ընկած ժողովուրդների խաղաղության, իրավահավասարության, ինքնորոշման, բոլոր երկրների անկախությունը և սուվերենությունը հարգելու սկզբունքները հսկայական ազդեցություն են գործում համաշխարհային իրադրության վրա։ Համագումարն ընդգծեց, որ արդի պայմաններում իմպերիալիզմը դադարել է միջազգային հարաբերություններում գերիշխող դեր խաղալուց։ Դրա փոխարեն գնալով ավելի մեծ դեր է խաղում սոցիալիստական սիստեմը։ Համաշխարհային քաղաքականության մեջ խիստ աճել է ազգային անկախություն նվաճած պետությունների և կապիտալիստական երկրների ժողովրդական մասսաների ակտիվությունը։

ՍՄԿԿ XX համագումարն ամփոփեց սոցիալիստական շինարարության արդյունքները։ ՍՍՀՄ ներքին դրությունը բնութագրվում էր հասարակական

արտադրության անընդհատ վերելքով, սովետական հասարակարգի ամրապնդմամբ և ժողովրդի բարեկեցության բարելավմամբ։

Համագումարն ամփոփեց հինգերորդ հնգամյակի արդյունքները և նշեց, որ արդյունաբերությունը 5-ամյա պլանի առաջադրանքները գերակատարել է արտադրանքի կարևորագույն տեսակների՝ պողպատի, նավթի, էլեկտրաէներգիայի, ցեմենտի, ալյումինի, ավտոմեքենաների, տրակտորների և շատ այլ արտադրատեսակների գծով։ Համագումարը խնդիր դրեց արտադրության մեջ արագորեն արմատավորել գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները, բարձր արտադրողական սարքավորումները և մեքենայացումը, կատարելագործել արտադրության կազմակերպումը։

Համագումարի որոշումներում նշվեց, որ անհրաժեշտ է արագացնել ժողովրդական սպառման առարկաների արտադրության զարգացման տեմպը։ Հատուկ ուշադրություն դարձվեց մասնավորապես արհեստական և սինթետիկ մանրաթելի, պլաստմասսաների, հագուստի, կոշիկի, կենցաղային սպառման և սննդի արդյունաբերության արտադրանքի ավելացման հարցի վրա։ Դրանով մի անգամ ևս արտահայտվեց կոմունիստական կուսակցության հոգատարությունը ժողովրդի կարիքների նկատմամբ։ Դրա փայլուն օրինակներից մեկը եղավ համագումարի որոշումը յոթժամյա, իսկ արդյունաբերության մի շարք ճյուղերում վեցժամյա աշխատանքային օրվա անցնելու մասին։

Համագումարի որոշումներում իրենց արտացոլումը գտան սովետական օրինականության պաշտպանության, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության և բարոյա-քաղաքական միասնության հետագա ամրապնդման հարցերը։

Համագումարը մեծ ուշադրություն դարձրեց սովետական պետական ապարատի աշխատանքների հետագա բարելավմանը։ Խնդիր դրվեց ուժեղացնել պայքարը բյուրոկրատիզմի և քաշքշուկի դեմ, ամրապնդել կապը մասսաների հետ, բանվորներին, կոլտնտեսականներին և մտավորականներին ավելի լայնորեն ներգրավել տնտեսության և կուլտուրական շինարարության ղեկավարման մեջ։ Ելնելով մեր երկրի անվտանգության շահերից, համագումարը անհրաժեշտ համարեց ավելի մեծ ուշադրություն նվիրել սովետական զինված ուժերի հետագա ամրապնդման գործին։

Համագումարն ընդգծեց, որ գաղափարական ճակատում ձեռք բերված նշանակալից հաջողությունների կողքին դեռևս առկա են նաև էական թերություններ, որոնցից գլխավորը գաղափարական աշխատանքի անբավարար կապն էր կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ։ Համագումարը կոչ արեց գաղափարական ամբողջ աշխատանքն ի սպաս դնել տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրների իրականացմանը, աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին, շարունակել պայքարը բուրժուական գաղափարախոսության դեմ։

ՍՄԿԿ XX համագումարի աշխատանքներում կարևոր տեղ գրավեց մարքսիստական-լենինյան ուսմունքին խորթ անհատի պաշտամունքի և նրա վնասակար հետևանքների հաղթահարման հարցը։ Համագումարի փաստաթղթերի և ՍՄԿԿ Կենտկոմի 1956 թվականի հունիսի 30-ի որոշման մեջ բացահայտված է անհատի պաշտամունքի հակալենինյան էությունը և տրված է Ի. Վ. Ստալինի

անձի պաշտամունքի առաջացման պայմանների և պատճառների մարքս-լենինյան բազմակողմանի խոր վերլուծությունը, նշված են նրա վնասակար հետևանքների վերացման ուղիները։

Անհատի պաշտամունքը ծնունդ է առել պատմական բարդ և յուրահատուկ պայմաններում, երբ Սովետական Միությունը, աշխարհում միակ սոցիալիստական պետությունը լինելով, գտնվում էր կապիտալիստական շրջապատման մեջ, երբ արտաքին թշնամիների հարձակման վտանգն անընդհատ կախված էր սովետական երկրի վրա։ Հետևողականորեն կենսագործելով իր գլխավոր գիծը, կուսակցությունը, մյուս կողմից, հանդիպում էր ներքին թշնամիների՝ տրոցկիստների, աջ օպորտունիստների և բուրժուական նացիոնալիստների դիմադրությանը։ Այդ դժվարին պայմաններում պահանջվում էր երկաթյա կարգապահություն, զգոնության անընդհատ բարձրացում, ղեկավարման կենտրոնացում։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Սովետական Միությունը կենսագործեց Վ. Ի. Լենինի պատգամները, կառուցեց սոցիալիստական հասարակարգ։

Ի. Վ. Ստալինը, գտնվելով կուսակցության և սովետական պետության ղեկավար պոստում, մյուս ղեկավարների հետ միասին, ակտիվ աշխատանք կատարեց լենինյան պատգամներն իրականացնելու համար։ Որպես տեսաբան ու խոշոր կազմակերպիչ, նա մեծ ծառայություն է մատուցել սոցիալիզմի հաղթանակի և համաշխարհային կոմունիստական ու բանվորական շարժման զարգացման գործին։ Սոցիալիզմի հաղթանակի համար մղված պայքարում, որպես ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, Ի. Վ. Ստալինը ձեռք բերեց մեծ հեղինակություն և ժողովրդականություն։ Սակայն սովետական ժողովրդի պատմական հաղթանակները սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում սխալ կերպով վերագրվեցին Ի. Վ. Ստալինի անձնական արժանիքներին։ Այդ հաջողությունները և գովերգությունները գլխապտույտի բերեցին Ի. Վ. Ստալինին։ Նա սկսեց ինքնահրապուրմամբ զբաղվել և գերագնահատել իր ծառայությունները, իրեն անսխալական համարելով, սկսեց արհամարհել կոլեկտիվ ղեկավարության լենինյան սկզբունքը։

Այսպիսի պայմաններում աստիճանաբար ձևավորվեց և զարգացավ Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքը, որին նպաստեցին նրա մի շարք անհատական բացասական հատկությունները, որոնց մասին դեռևս իր ժամանակին նշել էր Վ. Ի. Լենինը։ Ի. Վ. Ստալինը կուսակցական և պետական շինարարության բնագավառում կոպիտ կերպով խախտեց լենինյան սկզբունքները և սովետական դեմոկրատիայի ու սոցիալիստական օրինականության ասպարեզում թույլ տվեց բազմաթիվ կամայականություններ, ընդհուպ մինչև կուսակցության և սովետական պետության շատ ղեկավարների, ռազմական գործիչների, ինչպես նաև գիտության ու կուլտուրայի շատ աշքի ընկնող գործիչների մասսայական ձերբակալություններն ու վարչարարությունը։ Ի. Վ. Ստալինի մահից և ժողովրդի թշնամի Բերիայի հակաժողովրդական գործունեության մերկացումից հետո սովետական հազարավոր ազնիվ մարդիկ ազատվեցին կալանքից։

Համագումարը միաժամանակ նշեց կոնկրետ միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է խթաներ անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների արագ ու լիովին վերացմանը։ Համագումարի որոշումներում նշված է, որ

անհատի պաշտամունքի հետևանքների վերացմամբ կստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք ըստ ամենայնի կնպաստեն ազատ ու ստեղծագործական մտքի զարգացմանը։ Դրա լավագույն երաշխիքը կուսակցության կոլեկտիվ ղեկավարության սկզբունքի իրականացումն է, միլիոնավոր մասսաների ստեղծագործական ակտիվ մասնակցությունը երկրի կառավարման գործին։ Այդ կապակցությամբ համագումարի որոշման մեջ ասված է. «Կոմունիստական շինարարության մեծ խնդիրները պահանջում են աշխատավորների ստեղծագործական ակտիվության ու նախաձեռնության հետագա բարձրացում, մասսաների է՛լ ավելի լայն մասնակցություն պետության կառավարմանը, նրա ամբողջ կազմակերպչական-տնտեսական գործունեությանը։ Դրա համար անհրաժեշտ է ամեն կերպ զարգացնել սովետական դեմոկրատիզմը, հաստատակամորեն բարելավել սովետական բոլոր օրգանների աշխատանքը կենտրոնում ու տեղերում, ամրապնդել նրանց կապը մասսաների հետ»[1]։

Այսպիսով, ՍՄԿԿ XX համագումարը պատմական խոշոր իրադարձություն հանդիսացավ կուսակցության և ժողովրդի կյանքում։ Այն նոր էտապ բացեց միջազգային կոմունիստական և բանվորական շարժման մեջ։ Համագումարը նշեց կուսակցության և սովետական ժողովրդի խնդիրները նոր պայմաններում։

Հայաստանի աշխատավորները պայքար ծավալեցին համագումարի որոշումների կենսագործման համար։ Նրանք ավելի ակտիվ ու գործարար մասնակցություն ունեցան հանրապետության բազմաբովանդակ կյանքում։ Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ զգալիորեն ուժեղացավ արհմիութենական, կոմերիտական, կոոպերատիվ, հասարակական կազմակերպությունների և ստեղծագործական միությունների գործունեությունը։

Ակտիվ աշխատանք և մեծ նախաձեռնություն ծավալեցին աշխատավորների դեպուտատների սովետները։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն 1957 թվականի հունվարին որոշում ընդունեց «Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը բարելավելու և մասսաների հետ նրանց կապն ուժեղացնելու մասին»։ Զգալիորեն ուժեղացավ սովետների ակտիվությունն ու գործարար մասնակցությունը ժողովրդական տնտեսության խնդիրների լուծման գործում։ Տեղական սովետներն սկսեցին սիստեմատիկաբար զբաղվել տեղական և կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքով։ Հանրապետության քաղաքային, ավանային, շրջանային և գյուղական սովետների մշտական հանձնաժողովները, որոնց մեջ ընդգրկված էին հազարավոր աշխատավորներ, ավելի ակտիվ մասնակցություն ունեցան աշխատավորների կուլտուր-կենցաղային պահանջների բավարարման գործում։ Սովետների մշտական հանձնաժողովների գործունեությունը նպատակասլաց դարձնելու, նրանց առջև դրված խնդիրները հետևողականորեն իրագործելու ուղղությամբ ձեռնարկվեցին ավելի գործնական միջոցառումներ։ Աշխատավորների ակտիվ մասնակցությամբ բացահայտվում էին նաև սովետների աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները։ 1957 թվականին աշխատավորների առջև հաշվետվություն տվեց Կրասնոսելսկի շրջսովետի գործկոմը։ Գործկոմի հաշ-

---

[1] «Սովետական Միության կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը», Երևան, 1956, էջ 26։

վետվության քննարկումը ցույց տվեց, որ շրջանի մի շարք կոլտնտեսություններ թերակատարում են հացահատիկի և ծխախոտի բերքատվության պլանները, որ գործկոմը այդ ուղղությամբ գործնական միջոցներ չի ձեռնարկել։ Աշխատավորների ակտիվ մասնակցությամբ էական թերություններ բացահայտվեցին նաև Երևանի, Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի և Ղափանի քաղաքային սովետների գործունեության մեջ։ Այսպես, օրինակ, Երևանի քաղսովետի գործկոմի անբավարար հսկողության պատճառով շինարարական կազմակերպությունները թերակատարում էին քաղաքի բարեկարգման ու բնակարանային շինարարության պլանները։ Ղափանի քաղսովետի մշտական հանձնաժողովներն ակտիվ մասնակցություն չէին ունենում քաղաքի հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծմանը։

Արդյունաբերության և շինարարության կառավարումը կատարելագործելու մասին ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի թեզիսները համաժողովրդական քննարկման նպատակով հրապարակվեցին մամուլում (1957)։ Թեզիսների քննարկմանը Սովետական Հայաստանում մասնակցեց ավելի քան 279 հազար մարդ, իսկ 15 հազար աշխատավորներ հանդես եկան կոնկրետ առաջարկություններով[1]։ Այս փաստերը վկայում են երկրի հասարակական-քաղաքական կյանքին աշխատավորական զանգվածների ակտիվ մասնակցության մասին։

Բացահայտվեցին սոցիալիստական օրինականության և սովետական քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումների փաստեր, երբ Սիբիր և երկրի ծայրագույն հյուսիս աքսորվեցին ու կամայականության զոհ դարձան հանրապետության հասարակական-քաղաքական, դիտության ու մշակույթի բազմաթիվ գործիչներ և այլ քաղաքացիներ, իսկ 1949 թվականին Հայաստանից և Անդրկովկասի մի շարք շրջաններից հազարավոր հայ ընտանիքներ աքսորվեցին Ալթայի երկրամաս։

ՍՄԿԿ XX համագումարի որոշումների կենսագործման շնորհիվ արդարացվեցին անհատի պաշտամունքի ժամանակ անհիմն կերպով դատապարտված սովետական քաղաքացիները և վերադարձան իրենց բնակավայրերը։ ՍՄԿԿ շարքերում վերականգնվեցին այն կոմունիստները, որոնք անհիմն կերպով վտարվել էին կուսակցությունից։ Հանրապետությունում հատուկ հանձնաժողովի կողմից ստուգվեցին 1937—1938, 1949 և մյուս թվականներին հերյուրված բոլոր գործերը։ Ժողովրդի թշնամի հայտարարված պետական, կուսակցական, գիտության և մշակույթի նշանավոր գործիչները, ինչպես Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Կասյանը, Ս. Մարտիկյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, անվանի գրողներ, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը և ուրիշներ արդարացվեցին։

Ձեռնարկվեցին մի շարք լուրջ միջոցառումներ, որոնք նպատակ ունեին տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում ընդարձակել միութենական հանրապետությունների իրավունքները։ Միութենական հանրապետությունների ինքնագործունեության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ նրանց իրավունքների ընդարձակումը բյուջեի տնօրինման բնագավառում։ Ինչպես նշվել է, ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1955 թվականի

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1957, № 133։

մայիսի 4-ի որոշմամբ՝ միութենական հանրապետություններին իրավունք վերապահվեց իրենց հայեցողությամբ օգտագործել պետական բյուջեով նախատեսված միջոցները և ուժեղացնել սովետական տեղական օրգանների գործունեությունը։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը մշակեց միջոցառումներ, որոնք ավելի աշխուժացրին հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը, ավելի ճկուն դարձրին պետական, տնտեսական և կուլտուրական աշխատանքների ղեկավարման ձևերը։

ՀՍՍՀ Գերագույն սովետի մշտական հանձնաժողովներն ավելի մեծ ուշադրություն նվիրեցին տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրների լուծմանը։ Ընդարձակվեց մշտական հանձնաժողովների կազմը, բարձրացավ նրանց դերը, հսկողությունն ու օգնությունը տնտեսական կազմակերպությունների գործունեության նկատմամբ։ 1958 թվականի ապրիլին ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահությունը քննարկեց Վեդիի, Թալինի և Սպիտակի շրջանների ոռոգման սիստեմի զարգացման հարցը և մշակեց մի շարք միջոցառումներ, որոնք բարելավեցին այդ շրջանների ջրային տնտեսությունների աշխատանքները։

Ղեկավարվելով ՍՄԿԿ XX համագումարի որոշումներով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը գործնական միջոցառումներ ձեռնարկեց արհմիությունների աշխատանքում գոյություն ունեցող թերությունները վերացնելու և հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում նրանց ակտիվ մասնակցությունն ապահովելու համար։

Արհմիություններն ուժեղացրին իրենց աշխատանքը սոցիալիստական մրցության կազմակերպման և աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման, աշխատանքի պայմանները բարելավելու և նրանց հանգիստը կազմակերպելու բնագավառում։ Գործնական միջոցներ ձեռնարկվեցին ՀԱՄԽ-ի ղեկավարության և արհմիութենական կազմակերպությունների միջև կապն ուժեղացնելու ուղղությամբ։ Չնայած դրան, աշխատավորների շրջանում կատարվող դաստիարակչական աշխատանքները հեռու էին բավարար լինելուց։

ՍՄԿԿ XX համագումարը նշեց լենինյան կոմերիտմիության խնդիրները կոմունիստական շինարարության ասպարեզում։ Համագումարի որոշումները նոր թափ հաղորդեցին Հայաստանի կոմերիտմիության աշխատանքներին։ Ուժեղացավ կոմերիտմիության աշխատանքը աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գործում, լուրջ միջոցներ ձեռնարկվեցին հասարակական-քաղաքական կյանքում կոմերիտական կազմակերպությունների ակտիվությունն ու ձեռներեցությունը ապահովելու համար։ Հայաստանի կոմերիտականները շարունակեցին ակտիվորեն մասնակցել Սովետական Միության խամ ու խոպան հողերի յուրացմանը։ Միայն երկու տարվա ընթացքում՝ 1956—1957 թվականներին, շուրջ 5 հազար կոմերիտականներ ու երիտասարդներ մեկնեցին խոպանը նվաճելու։ Ղազախական ՍՍՀ Կուստանայի մարզի սովխոզներում Հայաստանի երիտասարդների ակտիվ աշխատանքի շնորհիվ հավաքվեց 70 միլիոն փութ հացահատիկ[1]։

---

[1] Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 117, թ. 96։

Սովետական Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման և ՍՄԿԿ XX համագումարի որոշումների կենսագործման համար զգալի աշխատանք կատարեց հանրապետական, քաղաքային և շրջանային մամուլը։ 1956 թվականի նոյեմբերին Երևանում տեղի ունեցավ բանգյուղթղթակիցների հանրապետական համագումարը։ Համագումարին նախորդեցին թղթակիցների քաղաքային և շրջանային կոնֆերանսները, որոնց մասնակցեցին ավելի քան 30 հազար թղթակիցներ և ընթերցողներ։

Այսպիսով, ղեկավարվելով ՍՄԿԿ XX համագումարի որոշումներով, Սովետական Հայաստանի աշխատավորները նոր քայլ կատարեցին երկրի հասարակական-քաղաքական կյանքում, տնտեսության ու մշակույթի զարգացման բնագավառում։

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՄԿԿ XX համագումարի դիրեկտիվների կատարման նշանաբանով ամբողջ երկրում ծավալվեց կոմունիստական աշխատանքի հզոր շարժում, որի մեջ ընդգրկվեցին միլիոնավոր աշխատավորներ։ Այդ սոցիալիստական մրցության նոր էտապ էր։ Դրսևորվեց աշխատավորական զանգվածների աշխատանքային և քաղաքական ակտիվության մեծ ուժը։ Կոմունիստական աշխատանքի շարժումը կարևոր նշանակություն ունեցավ արտադրության տեխնիկական առաջադիմության հասցնելու, բարձրորակ արտադրանք թողարկելու, արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու գործում։

Սովետական Հայաստանի աշխատավորները ձեռնամուխ եղան ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի (1956—1960) իրականացմանը։

ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում հայ ժողովուրդը ոչ մի ջանք չխնայեց հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրական շինարարության վերելքն ապահովելու համար։ Համաժողովրդական սոցիալիստական մրցություն ծավալվեց վեցերորդ հնգամյա պլանի կատարման և գերակատարման նշանաբանով։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը գլխավորեց հանրապետության աշխատավորների ստեղծագործական աշխատանքը՝ ժողովրդական տնտեսության զարգացման նոր հնգամյա պլանով նախատեսվող խնդիրները հաջողությամբ կատարելու համար։

Հայաստանում համաժողովրդական սոցիալիստական մրցության նախաձեռնողներն էին Երևանի, Ղափանի, Ալավերդու, Լենինականի և Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները։ Նրանք պարտավորվեցին ժամկետից շուտ և բարձր ցուցանիշներով կատարել և գերակատարել պետական առաջադրանքները։

Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի կոլեկտիվը սոցիալիստական մրցության շնորհիվ խնայեց մեծ քանակությամբ հումք և հասավ աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացման։ Գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները մեծ աշխատանք կատարեցին նոր տեխնիկայի արմատավորման, տեխնոլոգիական պրո-

ցեսների կատարելագործման ուղղությամբ։ Իրացվեցին գեներատորների և տրանսֆորմատորների կոնվեյերային հավաքումը և այլ միջոցառումներ։

Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանի բանվորական կոլեկտիվը պարտավորվեց երկրին տալ միայն բարձրորակ արտադրանք։ Բաղմահաղարանոց կոլեկտիվը հաջողությամբ կատարեց այդ պարտավորությունը։

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու նպատակով սոցիալիստական մրցության էր հրավիրել եղբայրական Վրաստանի, Ադրբեջանի և Ուկրաինայի համապատասխան ձեռնարկություններին։ Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանի կոլեկտիվը կատարելագործեց արտադրության մի շարք տեխնոլոգիական պրոցեսներ։ Երկրի առաջավոր բանվորական կոլեկտիվների փորձի կիրառման շնորհիվ այդ գործարանի մի շարք ապարատավարներ կրճատեցին տեխնոլոգիական ցիկլերի ժամանակամիջոցը և ավելացրին արտադրանքի թողարկումը։

Հանրապետության արտադրական ձեռնարկությունների կոլեկտիվների սոցիալիստական մրցության մեջ դրսևորվեց սովետական բանվոր դասակարգի առաջատար դերը էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման գործում։ Իր նվիրական աշխատանքով բանվոր դասակարգն օրինակ հանդիսացավ երկրի աշխատավորական լայն մասսաների համար։ Նա ցույց տվեց աշխատանքային կազմակերպվածության այնպիսի օրինակ, որով ոգեշնչված արտադրական նորանոր սխրագործություններ էին կատարում նաև կոլտնտեսային գյուղացիությունը, մտավորականությունը, ամբողջ ժողովուրդը։

Ժողովրդական տնտեսության զարգացման պլանի կատարման համար մղված պայքարում հսկայական նշանակություն ունեցավ ռացիոնալիզատորական շարժումը։ 1958 թվականի հոկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցավ ռացիոնալիզատորների, գյուտարարների և արտադրության նորարարների համամիութենական խորհրդակցություն։ Խորհրդակցության որոշումները և առաջավոր մեթոդներին ու նորարարական առաջարկություններին լայն ասպարեզ տալու հարցերը քննարկվեցին հանրապետության բանվորական կոլեկտիվներում և այդ ուղղությամբ կարևոր միջոցառումներ մշակվեցին։

Հանրապետության արտադրական ձեռնարկություններում ստեղծվեցին գյուտարարների և ռացիոնալիզատորների կազմկոմիտեներ, որոնք մեծ աշխատանք կատարեցին արդյունաբերության նորարարների շարժման զարգացման բնագավառում։ 1957 թվականին ՀՍՍՀ արտադրական ձեռնարկություններում ռացիոնալիզատորական 6500 առաջարկությունների արմատավորումից ստացված տարեկան տնտեսական օգուտը կազմեց ավելի քան 25 միլիոն ռուբլի[1], իսկ 1958 թվականին այդ գումարը գրեթե կրկնապատկվեց[2]։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզատորների շարժման առաջին շարքերում էր Ս. Մ. Կիրովի անվան գործարանի կոլեկտիվը։ Միայն 1957—1958 թվականներին այստեղ ներդրվեց ավելի քան 2500 ռացիոնալիզատորական առաջարկություն[3]։ Հայրենասիրական այդ մեծ գործում

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1958, № 102։

[2] Տե՛ս «Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակը (1920—1960) (թեզիսներ)», Երևան, 1960, էջ 31։

[3] Տե՛ս «Երևան», 1960, 2 նոյեմբերի։

իրենց արժանի ավանդը ներդրեցին ռացիոնալիզատորներ Էմմա Մկրտչյանը, Սմբատ Համբարձումյանը, Գրիշա Փանոսյանը, Գուրգեն Սարգսյանը և ուրիշներ։

Ժողովրդական տնտեսության պլանների կատարման համար մղած պայքարում աշխատանքային բարձր ցուցանիշների հասավ Ս. Մ. Կիրովի անվան գործարանի ապարատավարների բրիգադավար Ս. Ամիրխանյանը, որին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1960 թվականի մայիսի 20-ի հրամանագրով շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Գործարանի արտադրամասը, որտեղ աշխատում էր Ս. Ամիրխանյանը, գտնվում էր հընգամյա պլանի կատարման համար մղվող պայքարի ավանգարդում։ Արտադրամասի կոլեկտիվը հաջողությամբ կատարեց և գերակատարեց արտադրական առաջադրանքները։ Լրիվ մեքենայացնելով տեխնոլոգիական պրոցեսները, Ս. Ամիրխանյանի ղեկավարած բրիգադն արտադրության մեջ մտցրեց խնայողության խստագույն ռեժիմ, որի շնորհիվ տնտեսվեց մեծ քանակությամբ հումք և թողարկվեց միայն բարձրորակ արտադրանք։

Արտադրական պլանների կատարման և գերակատարման համար մղված պայքարում բարձր ցուցանիշների հասավ Ղափանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի՝ Աշոտ Մելքոնյանի ղեկավարած կոմունիստական աշխատանքի բրիգադը։ Ա. Մելքոնյանի արտադրական գործունեությունը լայնորեն ծավալվեց հատկապես վեցերորդ հնգամյակի տարիներին։ Զորացրվելով սովետական բանակից, նա 1956 թվականին աշխատանքի անցավ Ղափանի հանքերում։ Տիրապետելով արտադրության առաջավոր մեթոդներին, Ա. Մելքոնյանը կատարում և գերակատարում էր արտադրական պլանները։ Վերադառնալով Հայաստանի կոմերիտմիության XVIII համագումարից, Ա. Մելքոնյանը կազմեց 13 կոմերիտականներից բաղկացած բրիգադ, որը արտադրական բարձր ցուցանիշների հասնելու համար մտավ համամիութենական սոցիալիստական մրցության մեջ։ Բրիգադը պարբերաբար գերակատարում էր տարեկան արտադրական պլանները։ Բրիգադի յուրաքանչյուր անդամի ամսական աշխատավարձը միջին հաշվով 2000 ռուբլուց անցնում էր։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1960 թվականի մայիսի 28-ի հրամանագրով Աշոտ Մելքոնյանին շնորհեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի կատարման և գերակատարման համար մղված պայքարի առաջավորներից էին Ա. Կոշկակարյանը (Երևանի շինարարական առաջին տրեստ), Ա. Պետրոսյանը (Լենինականի տեքստիլ կոմբինատ), Վ. Ղազարյանը (Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարան), Ս. Մաթևոսյանը (Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատ), Ս. Պանախյանը (Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատ), Ի. Ուտիսինը (Արզնիգէս), ինչպես նաև Երևանի էլեկտրամեքենաշինական ու հաստոցաշինական գործարանների, Կիրովականի քիմիական կոմբինատի, Ալավերդու և Ղափանի հանքաշխարհի, հանրապետության արդյունաբերության և շինարարության այլ ձեռնարկությունների բազմաթիվ բանվորներ։

Աշխատավորական մասսաների հերոսական ջանքերի շնորհիվ հաջողությամբ կատարվեցին վեցերորդ հնգամյակի առաջին երեք տարվա խնդիրները։

Այսպես, արդյունաբերության համախառն արտադրանքի թողարկման պետական պլանը 1957 թվականին կատարվեց 102,2 տոկոսով, իսկ 1958—1959 թվականներին այն զգալի չափով գերակատարվեց։ 1956—1958 թվականներին շահագործման հանձնվեց 87 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն[1]։ Եթե 1928 թվականին ծանր արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր ամբողջ արդյունաբերության արտադրանքի 24 տոկոսը, 1940 թվականին 41, ապա 1958 թվականին այն հասավ 60 տոկոսի[2]։

Կոմունիստական աշխատանքի առաջավորների հավաքը Երևանում

Սովետական Հայաստանում մեծ թափով զարգացավ արդյունաբերությունը, առանձնապես պղնձի, ալյումինի, մոլիբդենի և գունավոր այլ մետաղների արտադրությունը։ Երևանում, Կիրովականում և Ալավերդում զարգացավ ժամանակակից տեխնիկայով զինված քիմիական արդյունաբերությունը։ Հատկապես լայն թափ ստացավ էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական և շինանյութերի արդյունաբերությունը։ Բանվոր դասակարգի հերոսական աշխատանքի շնորհիվ Հայկական ՍՍՀ արդյունաբերության արտադրանքը 1958 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, աճեց 54,7 անգամ[3]։

---

[1] Տե՛ս «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября (статистический сборник)», Երևան, 1967, էջ 7։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 60։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 72։

Մեծ չափով ընդարձակվեց հանրապետության էներգետիկ բազան։ 1958 թվականին Հայաստանի էլեկտրակայանների տարեկան արտադրանքը կազմեց 2.543,8 միլիոն կիլովատտ-ժամ։ Նույն թվականին արտադրված էլեկտրաէներգիայի արտադրանքը մոտ 500 անգամ գերազանցեց Հայաստանի և 1,3 անգամ ցարական Ռուսաստանի 1913 թվականի մակարդակը[1]։

Այդ տարիներին վճռական քայլ կատարվեց տեխնիկական առաջադիմության ուղղությամբ։ Զգալի չափով ընդլայնվեց արտադրական պրոցեսների ավտոմատացումը, բարձրացավ ծանր և աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը։ Մեծ աշխատանք կատարվեց գործարանների կարողությունների ընդլայնման և դրանց տեխնիկական վերազինման ուղղությամբ։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության զարգացման հետ միասին շարունակվեց բանվոր դասակարգի աճը։ Այսպես, արդյունաբերության մեջ աշխատող բանվորների և ծառայողների թիվը 1958 թվականին հասավ 125 հազարի, շինարարության մեջ աշխատողների թիվը՝ 39 հազարի, տրանսպորտում աշխատողներինը՝ 29 հազարի և այլն[2]։

Որակյալ բանվորական կադրերի պատրաստման ուղղությամբ մեծ գործ կատարեցին աշխատանքային ռեզերվների ուսումնարանները, որոնց միջոցով 1956—1959 թվականներին արդյունաբերության, շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսության մեքենայացման համար պատրաստվեց 8400 մասնագետ[3]։ Նույն ժամանակամիջոցում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աճեց նաև բարձրագույն կրթությամբ մասնագետների, մասնավորապես ինժեներա-տեխնիկական անձնակազմը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XVIII համագումարը, որը տեղի ունեցավ 1956 թվականի հունվարին, հանրագումարի բերեց հանրապետության ժողովրդական տնտեսության նվաճումները։ Համագումարը նշեց, որ չնայած շարունակվել է արդյունաբերության բոլոր ճյուղերի աճը, ավելացել է արտադրանքի ծավալը, բարելավվել են ձեռնարկությունների որակական ցուցանիշները, այնուամենայնիվ արդյունաբերության ղեկավարման գործում դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ։ Արդյունաբերության մի շարք ճյուղեր չէին ապահովում պետական առաջադրանքների կատարումը, թերակատարվում էին ինքնարժեքի իջեցման, որակի բարձրացման պետական առաջադրանքները։ Հատկապես ետ էին մնում Լենինականի, Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը, արհեստագործական կոոպերացիայի, սննդառային և թղթի, շինանյութերի, պարենային ապրանքների արդյունաբերության և ավտոմոբիլային տրանսպորտի ու խճուղային ճանապարհների մինիստրությունների ձեռնարկությունները։ Այդ թերությունների գլխավոր պատճառներից մեկը մինիստրությունների և գերատեսչությունների անբավարար աշխատանքն էր։

---

[1] Տե՛ս «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 81։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 247։

[3] Տե՛ս «Советская Армения за 40 лет. Статистический сборник», Երևան, 1960, էջ 172։

Համագումարը արտադրական ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների առաջնակարգ խնդիրը համարեց՝ որակով կատարել պետական պլանները, հայտնաբերել և օգտագործել արտադրական ներքին հնարավորությունները, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել արտադրանքի ինքնարժեքը և բարելավել որակը։

Ղափանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի № 5—6 ճանճի՝ սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Մելքոնյանի կոմերիտական բրիգադը։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին կապիտալ ներդրումները հաջողությամբ իրացնելու, ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու հարցերին։ 1957 թվականին պետական և կոոպերատիվ (առանց կոլտնտեսությունների) կազմակերպությունների կապիտալ ներդրումների գումարը հասավ 1228 միլիոն ռուբլու։

Վեցերորդ հնգամյա պլանի կատարման և գերակատարման համար մղված պայքարում մեծ ակտիվություն ցուցաբերեցին հանրապետության սովետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները։ Կոմերիտմիությունը վերցրեց հանրապետության էլեկտրակայանների, քիմիական, մեքենաշինական ձեռնարկությունների կառուցման շեֆությունը։ Հազարավոր երիտասարդներ, արձագանքելով կուսակցության և կառավարության կոչին, դանկություն հայտնեցին աշխատելու նոր գործարանների և ձեռնարկությունների շինարարություններում։ Արհմիութենական կազմակերպությունները պարբերաբար հանրագումարի էին բերում սոցիալիստական մրցության արդյունքները և խրախուսում առաջավոր բանվորներին ու ինժեներա-տեխնիկական աշխա-

տողներին։ Սակայն հանրապետության արդյունաբերության և շինարարության կառավարման գործում դեռևս գոյություն ունեին լուրջ թերություններ, որոնք խոչընդոտում էին արտադրողական ուժերի զարգացմանը։ Հաշվի առնելով էկոնոմիկայի հետագա զարգացման կարևորությունը, կուսակցությունը և սովետական կառավարությունը դրեցին արդյունաբերության և շինարարության կառավարման ձևերն ու մեթոդները կատարելագործելու հարցը։

ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիան 1957 թվականի մայիսին ընդունեց «Արդյունաբերության և շինարարության կառավարումը էլ ավելի կատարելագործելու մասին» օրենք, որի համաձայն արմատապես վերակառուցվեց արդյունաբերության և շինարարության կառավարումը։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հինգերորդ սեսիան 1957 թվականի հունիսին օրենք ընդունեց հանրապետության արդյունաբերության և շինարարության կառավարման կազմակերպումը կատարելագործելու մասին։ Ստեղծվեց ժողովրդական տնտեսության խորհուրդ, որի սիստեմում գործում էր ավելի քան 250 արդյունաբերական ձեռնարկություն[1]։

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում տեխնիկական առաջադիմությունը արմատավորելու համար։ Կազմակերպվեցին գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք օգնում էին արդյունաբերական ձեռնարկությունները զինելու տեխնիկայի ու գիտության նվաճումներով։ Դրա լավագույն արդյունքներից մեկը եղավ «Հրազդան» և «Արարատ» արագագործ էլեկտրահաշվիչ մեքենաների փորձնական նմուշների թողարկումը։ Հանրապետության քիմիական արդյունաբերության մեջ կարևոր նշանակություն ունեցավ Կիրովականի «Ավտոմատիկա» ինստիտուտի ստեղծումը, որը լուրջ քայլեր կատարեց գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները պրոպագանդելու և արդյունաբերության մեջ արմատավորելու համար։ Հանրապետության արդյունաբերական և շինարարական ձեռնարկություններում միայն 1958 թվականին իրականացվեց նոր տեխնիկայի արմատավորման շուրջ 200 միջոցառում։

1958 թվականի հունվարին Երևանում գումարվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության XIX համագումարը, որը, հանրագումարի բերելով հանրապետության արդյունաբերական և շինարարական ձեռնարկությունների գործունեությունը, նշեց, որ ՍՄԿԿ XX համագումարի որոշումների կենսագործման բնագավառում նշանակալից հաջողություններ են ձեռք բերվել։ Այսպես, օրինակ, միայն երկու տարում կառուցվեց ու շահագործման հանձնվեց երեսուն արդյունաբերական ձեռնարկություն։ Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացումը այդ տարիներին ընթացավ հատկապես ճշգրիտ մեքենաշինության ստեղծման և ընդլայնման ուղղությամբ։ Այդ միջոցառումների շնորհիվ մեքենաշինության արտադրանքը 1957 թվականին, 1955 թվականի համեմատությամբ, աճեց ավելի քան 40 տոկոսով, իսկ գործիքաշինությանը՝ 5 անգամ[2]։

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1957, № 133։

[2] Տե՛ս Ս. Հ. Թովմասյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XIX համագումարին, Երևան, 1958, էջ 20։

ՍՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ վերացավ Հայաստանի դարավոր հետամնացությունը, աղքատությունն ու կա-

Սասունցի Դավթի արձանը Երևանի կայարանամերձ հրապարակում

ռիքը։ Հայաստանը դարձավ ՍՍՀՄ զարգացած արդյունաբերական և կուլտուրական հանրապետություններից մեկը։ 1958 թվականին Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների թիվը կազմում էր

ավելի քան 361 հազար[1]։ Աննախընթաց վերելք ապրեց արդյունաբերությունը, հատկապես էլեկտրատեխնիկան, մեքենաշինությունը, հաստոցաշինությունը և այլ ճյուղեր։

Ընդարձակվեցին Հայաստանի արտաքին տնտեսական կապերը։ Հանրապետության արդյունաբերության արտադրանքը լայն ճանաչում գտավ ոչ միայն Սովետական Միությունում, այլև նրա սահմաններից դուրս։ 1958 թվականին արտասահմանյան 32 երկրներ արտահանվում էր արդյունաբերական 104 արտադրատեսակ։ Հայաստանը ապրանքներ էր արտահանում Արաբական Միացյալ Հանրապետություն, Հունաստան, Լիբանան, Բիրմա, Սուդան, Թուրքիա, Արգենտինա, Մեքսիկա, Հնդկաստան, Չինաստան, Կորեա, Վիետնամ, Ինդոնեզիա, Իրան, Ֆինլանդիա, Հարավսլավիա, Լեհաստան, Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն և այլուր։ Արտահանվում էին հիմնականում մեքենաշինական, հաստոցաշինական և էլեկտրատեխնիկական սարքեր։ Արտասահմանյան երկրներում բարձր էին գնահատվում Սովետական Հայաստանի գեներատորները, տրանսֆորմատորները, մետաղահատ հաստոցները և այլ արտադրանքներ։ Արտասահմանյան բազմաթիվ երկրներում հայտնի դարձավ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, գործիքաշինական և բազմաթիվ այլ գործարանների արտադրանքը։ Բուլղարիայում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, Լեհաստանում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում մեծ համբավ ձեռք բերեցին Հայաստանի սինթետիկ կաուչուկը, պլաստմասսաները, յուղաթթուն, Իտալիայում՝ պեռլիտը և այլն։ Գնալով բազմապատկվում էին արտասահմանյան երկրներից ստացվող պատվերները։ Երևանի, Լենինականի, Զարենցավանի գործարաններում արտասահմանյան մի շարք երկրների պատվերներով պատրաստվում էին ֆրեզերային հղկման և ներտաշ հաստոցներ։ Ընդարձակվեց էլեկտրատեխնիկական սարքերի արտահանումը Կուբա։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները արտասահմանյան բազմաթիվ երկրների մատակարարում էին ավտոմատ դիզելային կայաններ, սինխրոնային գեներատորներ, հիդրավլիկ պոմպեր, պղնձարջասպ և այլն։

Արտասահմանյան երկրներից Սովետական Հայաստան էին այցելում օտարերկրյա պատվիրակություններ և մոտիկից ծանոթանում նրա էկոնոմիկային ու մշակույթին։ Հնդկաստանի մշակույթի և արվեստի գործիչների, վիետնամա-սովետական բարեկամության ընկերության, Շվեդիայի ուսուցիչների, Չեխոսլովակիայի աշխատավորների, անգլիական գիտնականների, բժիշկների և հասարակական գործիչների պատվիրակությունները նշեցին հայ ժողովրդի խոշոր հաջողությունները ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Հայաստան ժամանեցին նաև Լատինա-ամերիկյան երկրների երիտասարդության, Բրազիլիայի և Արևմտյան Գերմանիայի ճարտարապետների, Բելգիայի արհմիութենական գործիչների, Նորվեգիայի և Սիրիայի պառլամենտական, Բիրմայի լուսավորության ու մշակույթի և այլ երկրների պատվիրակություններ, որոնք ի դեմս Սովետական Հայաստանի ականատես էղան ՍՄԿԿ ազգային քաղաքականության հոյակապ նվաճումներին։

---

[1] Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 157։

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, համակողմանիորեն քննարկելով գյուղատնտեսության վիճակը, նշեցին, որ այն ետ է մնում ժողովրդական տնտեսության ընդհանուր պահանջներից։ Այս հանգամանքը լուրջ դժվարություններ էր ստեղծում ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար։ Սոցիալիստական էկոնոմիկայի հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև առաջացել էր անհամամասնություն։

Գյուղատնտեսության ետ մնալը վերացնելու նպատակով սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը իրագործեցին բազմաթիվ միջոցառումներ՝ առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումով, թե սոցիալիստական շինարարության խնդիրները հաջողությամբ կարելի է լուծել «ո՛չ թե անմիջական խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա»[1]։

Կարգավորվեցին գյուղատնտեսական մթերքների մթերման և գնման գները, իջեցվեցին կոլտնտեսությունների կողմից հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի, ձիթատու կուլտուրաների սերմերի, իսկ կոլտնտեսականների կողմից անասնաբուծական մթերքների պարտադիր հանձնումների չափերը։ Զգալի չափով ավելացվեցին գյուղատնտեսությանը հատկացվող գումարները։ Ամրապնդվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան։ Կոլտնտեսությունները, սովխոզները և ՄՏ կայաններն ապահովվում էին բարձրորակ մասնագետներով և փորձված ղեկավար աշխատողներով։ Հատուկ ուշադրության արժանացավ գյուղատնտեսության պլանավորման հարցը։ Փոխվեց պլանավորման գոյություն ունեցող կարգը։ Այդ և մյուս միջոցառումներն զգալիորեն բարելավեցին կոլտնտեսությունների տնտեսական վիճակը, հնարավորություն ստեղծեցին լայն չափով օգտագործել ռեզերվները։ Կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածության խթանմանը նպաստեց կոլտնտեսականների ամենամսյա և եռամսյա ավանսավորումը։ Ավելի ամրապնդվեց քաղաքի և գյուղի կապը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։

Գյուղատնտեսության զարգացման մասին ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության որոշումների հիման վրա Հայաստանի կուսակցական կազմակերպություններն ու սովետական օրգանները մշակեցին կոնկրետ միջոցառումներ գյուղատնտեսության ղեկավարումը բարելավելու համար։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները հսկայական ջանքեր գործադրեցին և եռանդուն գործունեություն ծավալեցին կուսակցության ու կառավարության որոշումներն իրագործելու համար։

Քաղաքից գյուղ մշտական աշխատանքի ուղարկվեցին հարյուրավոր մասնագետներ։ Կոլտնտեսությունների և ՄՏ կայանների ղեկավարությունն ամրապնդվեց մասնագիտական կադրերով։ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունն ստացավ մեծ քանակությամբ տրակտորներ և այլ մեքենաներ։ Հանրապետու-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 46։

թյան արդյունաբերական ձեռնարկությունները շեֆական օգնություն ցույց տվեցին կոլտնտեսություններին ու սովխոզներին։ Այդ տեսակետից հատկապես աչքի ընկան Երևանի Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկությունները։ Կաբելի, ավտոդողերի, Ս. Մ. Կիրովի անվան գործարանների, ծխախոտի ֆաբրիկայի, ձեթ-օճառ կոմբինատի կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները շեֆական մեծ աշխատանք կատարեցին հանրապետության կոլտնտեսություններում։ Նրանց նախաձեռնությամբ և օգնությամբ վերանորոգվում էին էլեկտրական գծերը և ջրատար ուղիները, կառուցվում էին նորերը, գյուղ էին ուղարկվում գյուղատնտեսական գործիքների պահեստամասեր և այլն։

Գյուղատնտեսության առաջավորներին խրախուսելու նպատակով սահմանվեց ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի փոխանցիկ դրոշ։ Սոցիալիստական մրցությունը լայն ծավալ ստացավ Արտաշատի, Ստեփանավանի, Բասարգեչարի, Շամշադինի, Շահումյանի, Վեդու և հանրապետության մյուս շրջանների կոլտնտեսություններում։ Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների նորոգումը ժամկետից շուտ և բարձր որակով կատարելու համար Բասարգեչարի շրջկենտրոնի և Կոտայքի շրջանի Մայակովսկու անվան ՄՏ կայանների կոլեկտիվներն արժանացան ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության և ՀԱՄԿՄ-ի համամիութենական առաջին կարգի մրցանակին և փոխանցիկ կարմիր դրոշին։ Երկրի ՄՏ կայանների միջև ծավալված սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվեց Հոկտեմբերյանի հենակետային-ցուցադրական ՄՏ կայանը, որին հանձնվեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի փոխանցիկ դրոշը և առաջին կարգի մրցանակը։

1958 թվականի մարտին Երևանում կայացած գյուղատնտեսության աշխատողների հանրապետական հավաքը քննության առավ 1957 թվականի գյուղատնտեսական աշխատանքների արդյունքները և հետագա խնդիրները։ Նշվեց, որ աշխատանքի ճիշտ կազմակերպման և սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ հանրապետության մի շարք կոլտնտեսություններ և գյուղատնտեսության առաջավորներ հասել են բարձր ցուցանիշների։

Հանրապետության կոլտնտեսականները սոցիալիստական մրցության մեջ էին եղբայրական հանրապետությունների գյուղատնտեսության աշխատողների հետ։ Գործարար նշանակություն ունեցավ Ադրբեջանական, Ուկրաինական, Մոլդավական և Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների կոլտնտեսությունների միջև ծավալված մրցությունը։ Արտաշատի և Նորաշենի (Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն) բամբակագործները, Գորիսի և Լաչինի (Ադրբեջանական ՍՍՀ) անասնապահները պարբերաբար կատարում էին փոխի փոխանակում։

Սոցիալիստական մրցությունը լայն ծավալ ստացավ Արթիկի և Մոլդավական ՍՍՀ Ջադրլունգի, Ստեփանավանի և Կիևի մարզի Ջերնոբիլի, Արտաշատի և Ուկրաինական ՍՍՀ Վիսոկոպոլյեի շրջանների կոլտնտեսությունների միջև։ Վիսոկոպոլյեի շրջանի աշխատավորները Արտաշատի շրջանի կոլտնտեսություններին ուղարկեցին հազար գլուխ ցեղական հորթեր։ Արտաշատցիները միայն մեկ տարվա ընթացքում ուկրաինացի բարեկամներին տրամադրեցին

հայկական խաղողի լավագույն սորտերի 10 միլիոն մատ։ Ուկրաինայում ստեղծվեցին «Բարեկամության այգիներ»։

Վիսոկոպոլյեի շրջանի Վ. Ի. Լենինի անվան կոլտնտեսության զոոտեխնիկ Թամարա Կոլիչենկոն, լինելով Արտաշատի կոլտնտեսություններում, գրել է. «Տրադիցիոն սոցիալիստական մրցությունը երկու շրջանների միջև այժմ այնքան անկեղծ, գործարար և օգտակար է դարձել, որ ամբողջ հոգով կոչում եմ՝ կեցցե՛ այդ բարեկամությունը»[1]։

Սոցիալիստական մրցության պայմանագիր էին ստորագրել նաև Հայկական ՍՍՀ և Կիրգիզական ՍՍՀ գյուղատնտեսության աշխատավորները։ Կիրգիզիայի պատվիրակությունը 1957 թվականի հոկտեմբերին եղավ Սովետական Հայաստանում, ծանոթացավ սոցիալիստական պարտավորությունների կատարման ընթացքին և նշեց, որ մեր հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները բավարար չափով չեն օգտագործում անասնաբուծության զարգացման հնարավորությունները։ Ընդունելով բարեկամական այդ դիտողությունը, Սովետական Հայաստանի կոլտնտեսականները հատուկ ուշադրություն դարձրին անասնաբուծության զարգացմանը։

Հայկական ՍՍՀ առաջավոր բամբակագործների 1957 թվականի դեկտեմբերին կայացած խորհրդակցության մասնակիցները որոշեցին սոցիալիստական մրցության մեջ մտնել եղբայրական Ադրբեջանի բամբակագործների հետ։ Նրանք միաժամանակ ընդունեցին դիմում՝ ուղղված հանրապետության բամբակացան շրջանների աշխատավորներին։

1956—1958 թվականներին մեծ աշխատանք կատարվեց ոռոգման սիստեմի ընդարձակման ուղղությամբ։ Արզնի-Շամիրամ շրջանցքի, Թալինի ոռոգման սիստեմի, Կոտայքի և այլ շրջանցքների կառուցման շնորհիվ ոռոգելի դարձավ ավելի քան 32 հազար հեկտար անմշակ տարածություն։ Զգալի աշխատանք կատարվեց նաև գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների էլեկտրիֆիկացման և մեքենայացման ուղղությամբ։

Գյուղատնտեսական գիտական հիմնարկները լայնորեն պրոպագանդում էին գիտության և առաջավոր փորձի նվաճումները։

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը գյուղատնտեսության բնագավառի աշխատողների համար դարձավ իսկական ժողովրդական համալսարան։ Միայն 1957 թվականին ցուցահանդես էին այցելել 23 միլիոն մարդ։ Հայկական ՍՍՀ տաղավարում ցուցադրված էին հանրապետության գյուղատնտեսության առաջավորների աշխատանքային նվաճումները։ Երևանում նույնպես բացվեց մշտապես գործող գյուղատնտեսական ցուցահանդես։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում Սովետական Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները կարևոր հաջողությունների հասան մասնավորապես 1958 թվականին։

ՍՄԿԿ Կենտկոմը և Սովետական կառավարությունը բարձր գնահատեցին Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության աշխատավորների աշխատանքը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1958 թվականի դեկտեմբերի 29-ի հրամանագրով Սովետական Հայաստանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Այդ

[1] «Սովետական Հայաստան», 1962, 30 մարտի։

կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների սովետի՝ Հայաստանի բոլոր աշխատավորներին ուղղված ողջույնում ասված է. «Շնորհավորում ենք գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, պետությանը բամբակի, շաքարի ճակնդեղի, հացահատիկի, մսի, կաթի, բրդի վաճառքի պլանները կատարելու և գերակատարելու գործում ձեռք բերած խոշոր հաջողությունների և Լենինի շքանշանով հանրապետության պարգևատրվելու առթիվ»[1]։ Հանրապետությանը Լենինի շքանշան հանձնելու կապակցությամբ տեղի ունեցավ ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հանդիսավոր նիստ, ուր ճառով հանդես եկավ ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության նախագահ Կ. Ե. Վորոշիլովը։

Կառավարական բարձր պարգևին հանրապետության աշխատավորները պատասխանեցին աշխատանքային նոր խանդավառությամբ։

1956—1958 թվականներին գյուղում սկիզբ առավ նոր շարժում, որի նշանաբանն էր՝ «Հարուստ հեկտարի համար»։ Լայն ճանաչում գտավ Թալինի շրջանի Արեգ գյուղի կոլտնտեսության տրակտորային բրիգադի աշխատանքի փորձը։ Բրիգադը գլխավորում էր Սոցիալիստական աշխատանքի հերոս Աշոտ Նիկոյանը։ Արեգի կոլտնտեսության կոմբայնավարները սեղմ ժամկետում հավաքեցին 545 հեկտարի բերք, յուրաքանչյուր հեկտարից ստանալով 15 ցենտներ հացահատիկ։

Հոկտեմբերյանի շրջանի Շախվառուտ գյուղի «Պրավդա»-ի անվան կոլտնտեսությունը 1956—1958 թվականներին բարձր բերք ստացավ։ Հացահատիկային կուլտուրաների մեկ հեկտարի միջին բերքատվությունը 1958 թվականին կազմեց 16 ցենտներ։ Այդ տարի կոլտնտեսությունն ստացավ մեկ միլիոն 50 հազար ռուբլու դրամական եկամուտ։ Կոլտնտեսությունում իր բեղմնավոր աշխատանքով և հասարակական գործունեությամբ աչքի էր ընկնում Սոցիալիստական աշխատանքի հերոս Հոկտեմբերիկ Քոլոզյանը։

1956—1958 թվականներին ակտիվ աշխատանք ծավալեց Էջմիածնի շրջանի Շահումյանի կոլտնտեսության Սոցիալիստական աշխատանքի հերոս Արծվիկ Հարությունյանի ղեկավարած օղակը, որն իր մշակած բամբակի 6 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարի միջին բերքատվությունը հասցրեց 73,4 ցենտների։

Բարձր բերքի համար ծավալված համաժողովրդական պայքարում աճեցին սոցիալիստական դաշտերի բազմաթիվ հերոսներ, որոնցից են Ն. Ղղիաղարյանը, Գ. Գրիգորյանը (Արտաշատի շրջան), Ն. Հարությունյանը, Պ. Բաղդասարյանը, Ք. Քերոբյանը (Ղարիբջանյանի ՄՏԿ-ի կոմբայնավարներ), Թ. Դավթյանը (Ազիզբեկովի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության բրիգադավար), Ս. Զարդարյանը (Շամշադինի շրջան), Մ. Ավագյանը (Թալինի շրջան) և ուրիշներ։

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը 1958 թվականի փետրվարին որոշում ընդունեց մեքենա-տրակտորային կայանների վերակառուցման մասին։ ՍՍՀՄ Գերա-

[1] «Սովետական Հայաստանը Լենինի շքանշանակիր (փաստաթղթերի ժողովածու)», Երևան, 1960, էջ 9։

դույն սովետը նույն թվականի մարտին մեքենա-տրակտորային կայանների վերակառուցման վերաբերյալ ընդունեց օրենք, ուր նշված է, թե ՄՏԿ-ների վերակառուցումը, համատարած կոլեկտիվացումից հետո, խոշոր քայլ է սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում։

Խաղողի բերքահավաքը Կիրովի անվան սովխոզում

Մեքենա-տրակտորային կայանների վերակառուցումը հիմնականում ավարտվեց 1958 թվականին։ 1959 թվականի հունվարի մեկի դրությամբ երկրի 56.791 կոլտնտեսություններն արդեն ձեռք էին բերել 482 հազար տրակտոր և 214 հազար կոմբայն։

Սովետական Հայաստանի կոլտնտեսությունները նույնպես գնեցին գյուղատնտեսական տեխնիկա և սկսեցին այն օգտագործել առավել շահավետ։ ՄՏ կայանների վերակառուցումով հանրապետության կոլտնտեսությունները ձեռք բերեցին ոչ միայն հարուստ տեխնիկա, այլև ստացան գյուղատնտեսական բարձրորակ մասնագետներ և մեխանիզատորներ։ Գյուղատնտեսության տեխնիկական զինվածության աճի շնորհիվ ավելի բարձրացավ աշխատանքների մեքենայացումը։

ՍՍՀՄ գյուղատնտեսության զարգացման արդյունքները հանրագումարի բերվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թվականի դեկտեմբերյան պլենումում։ Պլե-

նումը նշեց, որ կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ կոլտնտեսություններն ու սովխոզները տնտեսապես ամրապնդվում են, նոր հեռանկարներ են բացվում սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման համար։

4. ՊԱՅՔԱՐ ՅՈԹՆԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Կոմունիստական շինարարության հետագա ծավալման համար կուսակցությունը և կառավարությունը ձեռնամուխ եղան ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի մշակմանը։ 1958 թվականին ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը որոշեց հրավիրել կուսակցության XXI արտահերթ համագումար, որը քննարկելու էր յոթնամյա պլանը։ Նույն թվականի նոյեմբերի 12-ին ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը հավանություն տվեց առաջիկա համագումարում «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների ստուգիչ թվերի մասին» զեկուցման թեզիսներին, որոնք հրապարակվեցին համաժողովրդական քննարկման համար։ Նոր պլանի նախագիծը համակողմանիորեն քննարկվեց արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտի, շինարարությունների, սովխոզների, կոլտնտեսությունների և մյուս բոլոր կոլեկտիվների ժողովներում։ Ջերմորեն հավանություն տալով յոթնամյա պլանի նախագծին, ինչպես ողջ սովետական երկրի, այնպես էլ Հայաստանի աշխատավորները միաժամանակ արեցին մի շարք կոնկրետ դիտողություններ և առաջարկություններ։

1959 թվականի հունվարի 10-ին Երևանում բացվեց Հայաստանի կոմկուսի XX արտահերթ համագումարը, որը քննարկեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի նախագիծը և Հայաստանի կոմկուսի խնդիրները։ Հավանություն տալով յոթնամյա պլանի նախագծին, համագումարը միջոցառումներ մշակեց ՍՍՀՄ-ում կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման համաժողովրդական պայքարում հանրապետության աշխատավորական զանգվածների ուժերի մոբիլիզացումն ապահովելու համար։

1959 թվականի հունվարի 27-ին Մոսկվայում բացվեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXI արտահերթ համագումարը։ Որոշելով կուսակցության գլխավոր խնդիրները գալիք յոթնամյակում, համագումարը նշեց, որ տնտեսական բնագավառում անհրաժեշտ է հասնել երկրի արտադրողական ուժերի համակողմանի զարգացման, ծանր արդյունաբերության հիմքի վրա՝ արտադրության բոլոր ճյուղերի վերելքին, որը հնարավորություն կտար վճռական քայլ կատարել կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման և կապիտալիստական երկրների հետ խաղաղ տնտեսական մրցման մեջ ՍՍՀՄ հաղթանակի ապահովման ուղղությամբ։

Քաղաքական բնագավառում համագումարը նախատեսում էր սոցիալիստական հասարակարգի հետագա ամրապնդում, սովետական դեմոկրատիայի զարգացում, կոմունիստական շինարարության մեջ ժողովրդական լայն զանգվածների ինքնագործունեության և ակտիվության ուժեղացում, պետական կառավարման մեջ հասարակական կազմակերպությունների իրավունքների ընդլայնում, կուսակցության և պետության. կազմակերպական ու դաստիարակչա-

կան դերի բարձրացում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի և ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդում։

Համագումարը կուսակցության կարևոր խնդիրը համարեց գաղափարական-դաստիարակչական աշխատանքների ուժեղացումը, աշխատավորական զանգվածների կոմունիստական գիտակցության բարձրացումը, նրանց դաստիարակումը սովետական հայրենասիրության և աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով, մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը և անդնդում պայքարը բուրժուական գաղափարախոսության դեմ։

ՍՄԿԿ XXI համագումարը միջազգային հարաբերությունների բնագավառում կանխագծեց կուսակցության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրները. խաղաղության պահպանում, ժողովուրդների անվտանգության ապահովում, համաշխարհային սոցիալիստական սիստեմի և եղբայրական ժողովուրդների բարեկամական միասնության հետագա ամրապնդում։

Երկրի տնտեսական զարգացման խնդիրների հաջող լուծման համար համագումարը կոնկրետ միջոցառումներ նշեց արտադրության առաջընթացի բարձր տեմպերի և ժողովրդական տնտեսության զարգացման մեջ անհրաժեշտ համամասնությունների ապահովման ուղղությամբ։

Համագումարի հաստատած ստուգիչ թվերում որոշված էին միութենական հանրապետությունների հետագա զարգացման ուղիներն ու խնդիրները։ Նախատեսվում էր յուրաքանչյուր հանրապետությունում ամենից առաջ զարգացնել տնտեսության այն ճյուղերը, որոնց համար կային բնական և տնտեսական նպաստավոր պայմաններ։ Պետք է ուժեղացվեր աշխատանքի սոցիալիստական բաժանումը հանրապետությունների միջև, ամրապնդվեին նրանց տնտեսական կապերն ու փոխօգնությունը։

ՀՍՍՀ տնտեսական ու կուլտուրական զարգացման յոթնամյա պլանը ՍՍՀՄ յոթնամյա պլանի բաղկացուցիչ մասն էր։ Այն համապատասխանում էր երկրի տնտեսության բոլոր ճյուղերի հզոր վերելքի համապետական խնդիրներին և սովետական ժողովրդի կենսամակարդակի անընդհատ բարձրացման պահանջներին։ Յոթնամյա պլանում արտացոլված էր հանրապետության ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ ծանր արդյունաբերության առավել զարգացման տենդենցը, որը բխում էր երկրի հնարավորությունների գիտականորեն հիմնավորված վերլուծումից։

Յոթնամյա պլանը Հայկական ՍՍՀ արդյունաբերության աճի զգալիորեն ավելի բարձր տեմպեր էր նախատեսում, քան Սովետական Միության միջին տեմպերն էին։ Այսպես, եթե ամբողջ երկրում արդյունաբերության արտադրանքն աճելու էր 80 տոկոսով, ապա Հայաստանում այն կազմելու էր 129 տոկոս։ Հանրապետության արդյունաբերության արտադրանքի տարեկան աճը անցյալ յոթնամյակի 11 տոկոսի փոխարեն պետք է կազմեր 12,8 տոկոս։

Նոր պլանում լուրջ ուշադրություն էր դարձվում գունավոր մետալուրգիային, մեքենաշինությանն ու մետաղամշակությանը, ամբողջ արդյունաբերության հետագա առաջադիմությունն ապահովող այնպիսի նոր ճյուղի զարգացմանը, ինչպիսին ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունն է։

Յոթնամյա պլանը ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում թիմիայի զարգացման ու ծավալման պլան էր։ Արտադրության միջոցների արտադրության աճին զուգընթաց նախատեսվում էր սպառման միջոցների արտադրության հետագա բուռն զարգացում։ Ելնելով աղքատության աճող պահանջարկից, նախատեսվում էր հանրապետությունում մեծ չափով ընդարձակել թեթև ու սննդի արդյունաբերությունը։

Արդյունաբերության հետագա զարգացումը հրամայական պահանջում էր ընդարձակել ու ամրապնդել հանրապետության էներգետիկ բազան։ Նախատեսվում էր կառուցել նոր ջերմաէլեկտրակայաններ ու հիդրոկայաններ, ավարտել Մինգեչաուրի հիդրոէլեկտրակայանը Հայաստանի էլեկտրասիստեմին միակցող էլեկտրահաղորդման գծի շինարարությունը։

Յոթնամյա պլանը կանխանշում էր հանրապետության անասնապահության, խաղողագործության, բանջարաբուծության, ծխախոտագործության զարգացման նոր հեռանկարներ։ Մեծ կարևորություն էր տրվում հացահատիկային և մյուս կուլտուրաների բերքատվության բարձրացմանը։

Յոթնամյակում զգալի չափով բարելավվելու էին աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանները։ Նախատեսվում էր բնակարանային և կոմունալ-կենցաղային շինարարության հետագա ծավալումը։

Ժողովրդական տնտեսության վերելքին զուգընթաց տեղի էր ունենալու դիտության և մշակույթի հետագա զարգացում։

Յոթնամյա պլանի նախագծումները խթանեցին աշխատավորական զանգվածների ստեղծագործական նախաձեռնության և ինքնագործունեության հետագա ծավալմանը։ ՍՄԿԿ XXI համագումարի առաջադրած խնդիրները հաջող կատարելու համար առաջ եկան ու զարգացան սոցիալիստական մրցության նոր ձևեր։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի առաջադրած խնդիրների կենսագործումը պահանջում էր լարել երկրի աշխատավորության ուժերը, մոբիլիզացնել ներքին բոլոր հնարավորությունները, կատարելագործել տնտեսության ղեկավարումը և աշխատանքի կազմակերպումը, զարգացնել ժողովրդական զանգվածների ստեղծագործական լայն նախաձեռնությունը։ Այդ պահանջների ոգով վերակառուցվեց կուսակցական, արհմիութենական, կոմերիտական, սովետական մարմինների աշխատանքը։ Արդյունքը եղավ այն, որ յոթնամյակի առաջին տարվա պլանը գերակատարվեց։ Նախորդ՝ 1958 թվականի համեմատությամբ, 1959 թվականին 11 տոկոսով աճեց արդյունաբերության թողարկումը. երկիրն ստացավ շուրջ 50 միլիարդ ռուբլու արտապլանային արտադրանք։ Որոշ տեղաշարժեր կատարվեցին նաև գյուղատնտեսության մեջ, մասնավորապես հացահատիկային տնտեսության, բամբակագործության և գյուղատնտեսական արտադրության մի շարք այլ ճյուղերում։

Այդ հաջողությունների մեջ իր ավանդն ուներ Սովետական Հայաստանի աշխատավորությունը։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում լայն սոցիալիստական մրցություն ծավալվեց յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։ Սոցմրցումը սերտորեն միահյուսվեց կոմունիստական աշխատանքի շարժման հետ, որի մեջ ներգրավվեցին արտադրության

հարյուրավոր առաջավորներ։ Այն ծնունդ առավ Մոսկվա—Կազան երկաթուղու՝ Մոսկվա—Սարտիրովոչնայա դեպոյում, այնտեղ, ուր շուրջ կես դար առաջ տեղի էր ունեցել առաջին կոմունիստական շաբաթօրյակը։ Նույն դեպոյի բանվորները կրկին հանդես եկան իբրև աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների նախաձեռնողներ։ Սակայն, ի տարբերություն անցյալի, այս անգամ նրանք կոչ էին անում ոչ միայն աշխատել, այլև ապրել ու սովորել կոմունիստաբար։

Մոսկվացիների նախաձեռնությունը լայն արձագանք գտավ ամբողջ երկրում։ Շարժման մեջ ընդգրկվեց նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը։ Իբրև շարժման պիոներներ մեր հանրապետությունում հանդես եկան Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսագործական կոմբինատի և Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի երիտասարդական բրիգադները (բրիգադավարներ՝ Երեմ Ասլանյան և Վիկտոր Թադևոսյան), որոնց 1958 թվականի նոյեմբերին շնորհվեց կոմունիստական աշխատանքի բրիգադի կոչում։

Հայաստանում օրավուր ծավալվում էր շարժումը կոմունիստական աշխատանքի համար։ Արդեն 1958 թվականի վերջին, այսինքն՝ իր ծննդից կարճ ժամանակ անց, այդ շարժումն ընդգրկել էր հազարից ավելի երիտասարդ բանվորներ և կոլտնտեսականներ, իսկ մեկ տարի հետո արդյունաբերական ձեռնարկություններում կային արդեն նոր ձևով աշխատող 470 բրիգադ, որոնցից 54-ը տարեվերջին արժանացան կոմունիստական աշխատանքի կոչման. արտադրության 160 առաջավորների շնորհվեց կոմունիստական աշխատանքի հարվածայինի կոչում[1]։

1959 թվականի մարտի 17-ին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների մի շարք կոլեկտիվներ կոչով դիմեցին հանրապետության բոլոր բանվորներին, ինժեներներին, տեխնիկներին ու ծառայողներին։ «Հետևելով Մոսկվայի, Լենինգրադի, Սվերդլովսկի և երկրի արդյունաբերական մյուս խոշոր կենտրոնների առաջավոր ձեռնարկությունների կոլեկտիվների հայրենասիրական օրինակին,—ասված էր դիմումի մեջ,—մենք՝ Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական, ավտոպահեստամասերի, կոմպրեսորների և փոքր հիդրոտուրբինների գործարանների աշխատողներս որոշեցինք սոցիալիստական մրցության մեջ մտնել յոթնամյակը վեց տարում կատարելու համար...»[2]։

Այդ կոչը ջերմ արձագանք գտավ հանրապետության ինչպես արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտի, կառույցների կոլեկտիվներում, այնպես էլ գյուղատնտեսական աշխատողների շրջանում։

Յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար ծավալված մրցությունը զուգադիպեց կարևոր քաղաքական կամպանիայի՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրություններին, որոնք տեղի ունեցան աշխատանքային ու քաղաքական նոր վերելքի պայմաններում։ Տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ ժամկետից շուտ կատարեցին 1959 թվականի պլանը։ Աչքի ընկնող հաջողությունների հասան շատ կոլտնտեսություններ ու սովխոզներ։

---

[1] Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 180, թ. 48։

[2] «Սովետական Հայաստան», 1959, 17 մարտի։

1959 թվականի մարտի 15-ին կայացած հանրապետության Գերագույն սովետի ընտրությունները մի անգամ ևս ցուցադրեցին կոմունիստների ու անկուսակցականների անխախտ բլոկի միասնությունը։ Ընտրություններին մասնակցեց ընտրողների ընդհանուր թվի 99,99 տոկոսը, որից 99,8 տոկոսը ձայն տվեց առաջադրված թեկնածուների օգտին։ Ընտրված դեպուտատներից 97-ը կամ բոլոր դեպուտատների 32,3 տոկոսը կանայք էին, 134-ը կամ 44,7 տոկոսը՝ բանվորներ ու ծառայողներ, 204 մարդ կամ բոլոր դեպուտատների 68 տոկոսը ՍՄԿԿ անդամներ և անդամության թեկնածուներ էին, 96-ը կամ 32 տոկոսը՝ անկուսակցականներ[1]։

Հանրապետության արդյունաբերությունը յոթնամյակի առաջին տարվա համախառն արտադրանքի թողարկման պլանը կատարեց 105 տոկոսով՝ նախորդ տարվա համեմատությամբ պլանով նախատեսված 6,8-ի փոխարեն տալով 12 տոկոսի աճ։

Յոթնամյակի առաջին տարում արտադրության լավագույն առաջավորների բնագծում կանգնեցին Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատի ավագ ձուլող, Սոցիալիստական աշխատանքի հերոս Արշակ Ղազարյանը, Արարատի ցեմենտ-թերթաքարային կոմբինատի կոմպլեքսային բրիգադի բրիգադավար Սղիտաղար Գալստյանը, Քանաքեռի ալյումինի գործարանի ձուլողների բրիգադավար Բաբկեն Նավասարդյանը, Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի հորատող հաստոցի մեքենավար Էդիկ Համբարձումյանը և շատ ուրիշներ։ Նրանք սիստեմատիկաբար գերակատարում էին արտադրական առաջադրանքները։

Յոթնամյակի առաջին տարին արդյունաբերական նոր կառույցները շահագործման հանձնելու տարի էր։ Յոթնամյակի առաջնեկները հանդիսացան Լուսավանի դազգահաշինական, Լենինականի հղկող ու միկրոշարժիչների գործարանները, ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանը Արզնիում, Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կորունդի արտադրամասը Կիրովականում, կատարողական մեխանիզմների գործարանը Սևանում և արդյունաբերական մի շարք այլ ձեռնարկություններ։

1959 թվականի նոյեմբերի 5-ին տեղի ունեցավ Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը շահագործման հանձնելու հանդիսավոր արարողությունը, հիդրոէլեկտրակայան, որի պատմությունը՝ սկսած գծագրողների սեղանին նրա ծննդյան օրից մինչև առաջին տուրբինների պտույտը՝ լեցուն է պայքարի և սխրանքների պայծառ էջերով։ Այդ հիդրոէլեկտրակայանը բարդ և ամենատարբեր հիդրոտեխնիկական սարքերի ու կառույցների ուշագրավ կոմպլեքս է, ջրատարների և ստորերկրյա ուղիների, տուրբինային անցուղիների, հիդրոագրեգատների, օժանդակ տնտեսությունների և բանվորական ավանի ներդաշնակ մի աշխարհ։ Հաղթահարելով բնական խոչընդոտները, շինարարները կատարել էին 2,5 միլիոն վերերկրյա և 228 հազար խորանարդ մետր ստորգետնյա հողային աշխատանք, մոնտաժել 2.390 տոննա մետաղական կոնստրուկցիաներ, կառուցել 6,5 կիլոմետր երկարությամբ թունել, 8 կիլոմետր երկարությամբ բաց ջրանցքներ, հիդրոէլեկտրակայանի շենքը, ճնշող ջրավազանը,

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1959, 17 մարտի։

տուրբինային անցուղին, չօգտագործվող ջրի արտահոսքի ճանապարհը և այլն։ Չնայած դժվարություններին՝ հիդրոէլեկտրակայանի շինարարությունը ավարտվեց ժամկետից երկու ամիս շուտ։ Նրա շահագործումը հնարավորություն ստեղծեց՝ սկսած 1960 թվականից, Սևանա լճից տարեկան տնտեսելու 200 միլիոն խորանարդ մետր ջուր։

Աթարբեկյանգէսի կառուցմանը մասնակցում էին Սովետական Միության տարբեր ազգությունների ներկայացուցիչներ։ Այստեղ մեծ աշխատանք ներդրեցին հայ, ռուս, ադրբեջանցի, հույն, բելոռուս փորձված շինարարներն ու մոնտաժողները՝ Ս. Մխիթարյանն ու Գ. Ստեփանյանը, Վ. Մարկուշևը, Ա. Յուրիկը, Ա. Ալիևը, Ֆ. Ռուսովը, Տ. Մելնիկովը և շատ ուրիշներ։

Արդյունաբերական արտադրության, տրանսպորտի և շինարարության վերելքն ուղեկցվում էր աշխատողների թվի անշեղ աճով։ 1958 թվականի համեմատությամբ, 1959 թվականին հանրապետության ժողովրդական տնտեսության այդ ճյուղերում զբաղված բանվորների թիվն աճեց 12,6 հազարով, ընդ որում, արդյունաբերության մեջ՝ 4,2 հազարով։ 1959 թվականին արդյունաբերության ու շինարարության մեջ, տրանսպորտում և կապի ցանցում աշխատում էր ավելի քան 199,8 հազար մարդ[1]։ Ըստ 1959 թվականի մարդահամարի տվյալների՝ Հայկական ՍՍՀ-ում արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և կապի սիստեմում զբաղված էր հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների 31,5 տոկոսը, մինչդեռ ամբողջ Միության մեջ այն կազմում էր 36,3 տոկոս։ Ընդ որում, եթե ամբողջ երկրի նյութական արտադրության վերոհիշյալ ճյուղերում կանայք կազմում էին աշխատողների 39 տոկոսը, ապա Հայկական ՍՍՀ-ում նրանք կազմում էին միայն 28,3 տոկոս։

Յոթնամյակի առաջին տարում հանրապետությունում որոշ չափով ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Կարևոր հաջողությունների հասան խաղողագործները, 1958 թվականի 50,4 ցենտների դիմաց 1959 թվականին յուրաքանչյուր հեկտարից հավաքելով 83,1 ցենտներ խաղող։ Շաքարի ճակնդեղի միջին բերքատվությունն ավելացավ 26 ցենտներով[2]։

Այդ հաջողություններն ավելի նշանակալից կլինեին, եթե անհրաժեշտ ուշադրություն դարձվեր հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկային, օգտագործվեին բավարար քանակությամբ քիմիական պարարտանյութեր։ Որոշ չափով դրանով էր բացատրվում հանրապետությունում հացահատիկային կուլտուրաների ցածր բերքատվությունը, որը 1959 թվականին հեկտարից միջին հաշվով հազիվ հասնում էր 9,2 ցենտների[3]։ Յոթնամյակի առաջին տարին սակավ արդյունավետ էր բամբակագործների համար, որոնք պետությանը բամբակի հումքի հանձնման պլանը կատարեցին 92,3 տոկոսով։ Անասնաբուծության բնագավառում ցուցանիշները փոքր-ինչ

---

[1] Տե՛ս «Советская Армения за 40 лет, статистический сборник», Երևան, 1960, էջ 158—159։

[2] Տե՛ս Ս. Հ. Թովմասյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XXI համագումարին, էջ 42։

[3] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1964 г., статистический ежегодник», Երևան, 1965, էջ 90։

բարձր էին 1958 թվականի համեմատությամբ։ Չնայած դրան, 1959 թվականի անասնապահության զարգացման պլանը թերակատարվեց։ Անասնաբուծության անբավարար կազմակերպումը, կերի բազայի ապահովված չլինելը հացըրին անասունների գլխաքանակի որոշ անկման։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 5,6, մանրերինը՝ 8, խոզերինը՝ 14,3 տոկոսով[1]։

ՀԿԿ Կենտկոմի 1959 թվականի հոկտեմբերյան պլենումը քննարկեց հանրապետության գյուղատնտեսության բնագավառում ստեղծված դրությունը, կոնկրետ միջոցառումներ նշեց վերացնելու ինչպես դաշտավարության, այնպես էլ անասնապահության զարգացման գործում եղած թերությունները։ Պլենումը մասնավորապես ցույց տվեց, որ բարձր ու կայուն բերք կարելի է ապահովել հողագործության սիստեմում գիտականորեն հիմնավորված մեթոդների ներդրմամբ, կոմպլեքս միջոցառումների իրականացմամբ՝ ելնելով յուրաքանչյուր տնտեսության առանձնահատկություններից։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXI համագումարը, որը բացվեց 1960 թվականի փետրվարի 10-ին Երևանում, քննարկեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հարցերը։ Համագումարը արդյունաբերության բնագավառում անհրաժեշտ գտավ իրականացնել գործող արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցում և ընդլայնում, արտադրության պրոցեսների հետագա կոմպլեքսային մեքենայացում և ավտոմատացում։

Գյուղատնտեսության բնագավառում համագումարի նշած միջոցառումներն ուղղված էին խաղողագործության և պտղաբուծության, անասնաբուծության, ծխախոտագործության հետագա զարգացմանը, ինչպես նաև բամբակի ու շաքարի ճակնդեղի բերքատվության բարձրացմանը։

Յոթնամյա պլանի կենսագործման համար հանրապետությունում մեծ աշխատանք կատարվեց աշխատավորական զանգվածների ուժերի մոբիլիզացման ուղղությամբ։ Լուրջ ուշադրություն դարձվեց սոցիալիստական մրցության ծավալման և կոմունիստական աշխատանքի զարգացման հարցերին։

1960 թվականի մայիսի 27—28-ը Մոսկվայում տեղի ունեցավ կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների կոչման համար մրցության առաջավորների համամիութենական անդրանիկ խորհրդակցությունը, որին Հայկական ՍՍՀ-ից մասնակցեցին արտադրության 20 առաջավորներ։

Ողջունելով խորհրդակցության մասնակիցներին, ՍՄԿԿ Կենտկոմը նշում էր, որ կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների կոչման համար մրցությունը, շաղկապելով աշխատանքը, ուսումն ու կենցաղը, ակտիվորեն ներգործում է մարդու կյանքի ու գործունեության բոլոր կողմերի վրա և կարևոր գործոն է մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունների վերացման համար[2]։

Հայրենասիրական նոր շարժման նախաձեռնողների փառահեղ գործերը, անձնուրաց աշխատանքն արժանացան բարձր գնահատականի։ ՍՍՀՄ Գերա-

---

[1] Տե՛ս Ս. Հ. Թովմասյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի զեկուցումը ՀԿՊ XXI համագումարին, էջ 51։

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1960, 28 մայիսի։

դուն սովետի նախագահության 1960 թվականի մայիսի 28-ի հրամանագրով կոմունիստական աշխատանքի 52 առաջավորներ արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, 2.563 հոգի պարգևատրվեցին «Աշխատանքային արիության համար» և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով։ Հայկական ՍՍՀ-ից Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում ստացողների թվում էին Ղափանի պղնձահանքային կոմբինատի հորատողների բրիգադավար Աշոտ Մելքոնյանը, Երևանի Կիրովի անվան գործարանի ապարատավարների բրիգադավար Սերգեյ Ամիրխանյանը։ «Աշխատանքային արիության համար» և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով պարգևատրվեցին արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և շինարարության տասը առաջավորներ։

Համամիութենական խորհրդակցության մասնակիցները երկրի աշխատավորությանն ուղղած դիմումում կոչ արեցին՝ ակտիվորեն ներգրավվել հայրենասիրական նոր շարժման մեջ։ Այդ կոչը ջերմ արձագանք գտավ ողջ երկրում, ինչպես նաև Հայաստանում։ Եթե 1960 թվականի մայիսին Հայաստանում կոմունիստական աշխատանքի հարվածայինի կոչման համար պայքարում էր ինը հազար մարդ, ապա մեկ ամիս անց նրանց թիվը ավելի քան կրկնապատկվեց։

1960 թվականի հունիսի 15-ին Երևանում բացվեց կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների կոչման համար մրցության առաջավորների հանրապետական առաջին հավաքը, որի պատվիրակները ներկայացնում էին ավելի քան 1500 արտադրական բրիգադներ, կոլտնտեսային ֆերմաներ և օղակներ[1]։

Կոմունիստական աշխատանքի համար շարժումը ոչ միայն համալրվում էր նորանոր մասնակիցներով, այլև փոխվում էր որակապես։ 1960 թվականի ամռանից մրցությունն ծավալվեց ոչ միայն բրիգադների և հարվածայինների, այլև կոմունիստական աշխատանքի հերթափոխությունների, արտադրամասերի և ձեռնարկությունների միջև։ Այդ ժամանակվանից կոմունիստական աշխատանքի շարժման մեջ սկսվեց զարգացման նոր փուլ՝ մրցում կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար։

Հայաստանում կոմունիստական աշխատանքի համար պայքարի նոր ձևի նախաձեռնողներ հանդիսացան Երևանի Ս. Մ. Կիրովի անվան, ալյումինի և էլեկտրամեքենաշինական գործարանները, Վ. Ի. Լենինի անվան մետաքսի, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական, Քաջարանի պղնձա-մոլիբդենային և Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատները։ 1961 թվականի սեպտեմբերի 6-ին Երևանում կայացած կոմունիստական աշխատանքի մրցության առաջավորների երկրորդ հանրապետական հավաքի ժամանակ Հայաստանում արդեն հաշվվում էր կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար պայքարող ավելի քան 200 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, շինարարական օբյեկտ, կոլտնտեսություն ու սովխոզ, իսկ նոր շարժման մասնակիցների ընդհանուր թիվը հասել էր 76 հազարի։ Այդ նույն

[1] Տե՛ս ՀԱՄԽ-ի ընթացիկ արխիվ, «Կոմունիստական աշխատանքի համար պայքարողների առաջին հանրապետական հավաքը» գործը։

ժամանակ ավելի քան 300 բրիգադներ, հերթափոխություններ, կոլտնտեսային ֆերմաներ և օղակներ արժանացել էին կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի պատվավոր կոչման։

Յոթնամյակի հետագա երկու տարվա ընթացքում հանրապետության արդյունաբերությունը յուրացրեց ավելի քան 150 տեսակի առավել կատարյալ ճշգրիտ հաստոցների, մեքենաների ու սարքերի, նոր նյութերի և արտադրանքների արտադրությունը։ Գործող ձեռնարկությունների շարքը մտան երկաթբետոնե արտադրանքների գործարանը, Երևանի ալյումինի գործարանի ֆոլգագլանման, Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատի էլեկտրոլիզի, Լենինականի լուսատեխնիկական գործարանի ապակու արտադրամասերը, Երևանի ձեթ-օճառի կոմբինատի, «Պոբեդա» կահույքի ֆաբրիկայի նոր կորպուսները և այլն։

Արդյունաբերության հաջողությունները զգալի չափով պայմանավորված էին արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումների լայն ներդրմամբ։ Յոթնամյակի հիշյալ երկու տարում հանրապետության արդյունաբերության մեջ իրագործվեց սարքավորումների կատարելագործման, մեքենայացված-կոմպլեքս տեղամասերի ստեղծման, կոնվեյերային և հոսքային գծերի կազմակերպման, ավտոմատ և կիսաավտոմատ մեքենաների և հաստոցների տեղադրման ավելի քան 600 միջոցառում։ Արտադրության մեջ ներդրվեցին հարյուրավոր նորարարական առաջարկություններ, որոնք տվեցին 143,8 միլիոն ռուբլու տարեկան պայմանական տնտեսական օգուտ[1]։

Հետագա տեխնիկական առաջադիմության գործում կարևոր դեր խաղացին գիտահետազոտական ինստիտուտները, կոնստրուկտորական բյուրոներն ու լաբորատորիաները, որոնց ցանցը հանրապետությունում տարեցտարի ընդլայնվում էր։ 1961 թվականին Հայաստանում հաշվվում էր արդյունաբերության արտադրության հետ կապված 8 նախագծային ինստիտուտ, 165 կոնստրուկտորական բյուրո ու լաբորատորիա, որտեղ աշխատում էին արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման հարցերով զբաղվող, նոր տեխնոլոգիական պրոցեսներ և կոնստրուկցիաներ մշակող ավելի քան 5000 մասնագետներ։

Բացի այդ, հասարակական հիմունքներով կազմակերպվեցին համալսարաններ ու տեխնիկայի տներ, նորարարների ինստիտուտներ ու կոնստրուկտորական բյուրոներ։ Եթե 1959 թվականի սկզբին դրանց թիվը ընդամենը 16 էր, ապա 1961 թվականի վերջին այն համարյա եռապատկվեց։ Այդ գործի նախաձեռնողները եղան Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանի երիտասարդ բանվորները. 1959 թվականի հունիսին քաղաքում հասարակական հիմունքներով ստեղծվեց երիտասարդ նորարարների ինստիտուտ։ 1961 թվականին ուսման երկամյա դասընթացն ավարտեց ավելի քան 150 մարդ։

Նույնպիսի ուսումնական հաստատություններ բացվեցին Ղափանում, Ալավերդում, Լենինականում և այլուր։ Տեխնիկայի հանրապետական տանը հասարակական հիմունքներով ստեղծվեց նոր տեխնիկայի ինստիտուտ, ուր

---

[1] Տե՛ս ՀԱՄԽ-ի ընթացիկ արխիվ, «Կոմունիստական աշխատանքի համար պայքարողների առաջին հանրապետական հավաքը» գործ։

արդյունաբերության աշխատողների մի մեծ խումբ հնարավորություն ստացավ ուսումնասիրել գիտության և տեխնիկայի նվաճումները, երկրի լավագույն ձեռնարկությունների առաջավոր փորձը։ Պայմաններ ստեղծվեցին արտադրության նորարարների գիտելիքների հարստացման, նրանց մտահորիզոնի ընդլայնման համար։ Համալսարանի աշխատանքները գլխավորում էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մարտին Կասյանը։ Չնայած աշխատանքի հասարակական բնույթին, նոր տեխնիկայի համալսարանը իր հիմնադրման առաջին օրից դարձավ հուսալի ուսումնական հաստատություն, որն ուներ չորս ֆակուլտետ՝ 960 ունկնդրով։

1961 թվականին ավարտվեց Աղստաֆա-Աթարբեկյան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շինարարությունը, որով Հայաստանը սկսեց էլեկտրաէներգիա ստանալ եղբայրական Ադրբեջանից։ Միաժամանակ շահագործման հանձնվեցին Քաջարան—Ագարակ, Շինուհայր—Գորիս և մի շարք ուրիշ էլեկտրահաղորդման գծեր։

Յոթնամյակի առաջին տարիների խոշորագույն կառույցներից էր Ղայախ—Երևան գազամուղը։ Տարբեր մասնագիտությունների և ազգությունների հազարավոր մարդիկ էին աշխատում բարեկամության այդ կառույցի վրա։ Այստեղ ձեռք ձեռքի գործում էին հարյուրավոր բանվորներ, տեխնիկներ ու ինժեներներ, որոնք եկել էին Մոսկվայից, Ուկրաինայից, Ադրբեջանից Վրաստանից և եղբայրական մյուս հանրապետություններից։ 180 կիլոմետր երկարությամբ ձգվող գազատար ուղին նրանց հերոսական աշխատանքով 80 անգամ կտրեց-անցավ լեռնային գետերը, ավտոխճուղային ճանապարհները, ջրանցքներն ու ջրատարները, 110 անգամ՝ ձորերն ու ձորակները։ Ողղպատյա խողովակներն անց էին կացվում ծովի մակերևույթից 2—2,5 հազար մետր բարձրության վրա գտնվող կիրճերով ու լեռնանցքներով։ Աշխատանքային հերոսության իսկական օրինակներ ցույց տվեցին լենինյան կոմերիտմիության ուղեգրով այստեղ եկած Ալեքսանդր Ռակիտինսկին, Վիկտոր Ստոյանցևը, Սլավա Ժերկովը, Վալյա Սաբուրովան, Վազգեն Գրիգորյանը, Աբբաս Այերպերովը և ուրիշներ։ Հաղթահարելով դժվարությունները, շինարարները ժամկետից շուտ շահագործման հանձնեցին գազամուղի հիմնական մասը։ Հայաստանի կոմկուսի XX համագումարի բացման օրը՝ 1960 թվականի փետրվարի 10-ին, Ղարադաղի գազը եղբայրական Ադրբեջանից հասավ Հայաստանի մայրաքաղաք։ Փետրվարի 12-ին Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակում բոցավառվեց Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորության հավերժական, անխախտ բարեկամության ջահը։

Ղարադաղից այդպիսի գազամուղ անցկացվեց նաև մինչև Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի։ Բաքու—Թբիլիսի—Երևան գազամուղն իրավամբ անվանվեց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության գազամուղ։

Հանրապետությունում երկար տարիներ էներգետիկական բազայի և ոռոգման ղարգացումը կենսագործվում էր Սևանա լճի հաշվին, որը հասցրել էր հանրապետության միակ խոշոր ջրավազանի մակարդակի զգալի իջեցմանը և մակերեսի կրճատմանը։ Սևանա լճի հայելին իր բնական մակարդակին մոտ պահելու, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մեջ էլեկտրաէներգիայի աճող պահանջները բավարարելու նպատակով հանրապետությունում մշակվեցին էլեկ-

տրաէներգիայի նոր աղբյուրների որոնման մի շարք միջոցառումներ։ Որոշվեց կառուցել Երևանի, Հրազդանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանները, Տաթևի հիդրոէլեկտրակայանը՝ Որոտան գետի վրա և այլն։ Սակայն այդ միջոցառումները չէին կարող լուծել Սևանի պրոբլեմը։ Անհրաժեշտ էր որոնել նոր հնարավորություններ։ Մասնագետները առաջ քաշեցին Արփա գետի ջրերը Սևանա լիճ տեղափոխելու հարցը։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Մինիստրների սովետը հավանություն տվեցին այդ առաջարկությանը։ 1961 թվականի օգոստոսի 12-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը, Սևանա լճի մակարդակը բնական վիճակին մոտ պահելու նպատակով, որոշում ընդունեց Արփա գետի ջրերի մի մասը Սևան տեղափոխելու մասին։ Կարճ ժամանակ անց լայն ճակատով սկսվեցին շինարարական աշխատանքները։

ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը ամենօրյա օգնություն էին ցույց տալիս Հայաստանի կուսակցական, սովետական ու տնտեսական օրգաններին, ղեկավարում նրանց աշխատանքը։ ՍՄԿԿ Կենտկոմը խորամուխ լինելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի գործերի վիճակին, հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և գաղափարական աշխատանքներում բացահայտեց մի շարք լուրջ թերություններ ու բացեր։ ՍՄԿԿ Կենտկոմը միջոցառումներ մշակեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի աշխատանքների արմատական բարելավման, սխալների ու թերությունների շուտափույթ վերացման ուղղությամբ։ Այլ աշխատանքի փոխադրվելու կապակցությամբ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը 1960 թվականի դեկտեմբերին Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատեց Ս. Հ. Թովմասյանին։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Յա. Ն. Զարոբյանը։

ՍՄԿԿ Կենտկոմի 1961 թվականի հունվարյան պլենումը, այլ հարցերի թվում, լսեց նաև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի զեկուցումը՝ պետությանը գյուղատնտեսական և անասնապահական մթերքների վաճառքի ուղղությամբ 1960 թվականի պլանի, սոցիալիստական պարտավորությունների կատարման և հանրապետության գյուղատնտեսության զարգացման հետագա միջոցառումների մասին։ Նշելով Հայաստանի գյուղատնտեսության զարգացման որոշ հաջողությունները, ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը միաժամանակ լուրջ թերություններ բացահայտեց կուսակցական կազմակերպությունների աշխատանքներում և նշեց դրանց վերացման ուղիները։

1961 թվականի փետրվարին Թբիլիսիում կայացավ Անդրկովկասի հանրապետությունների գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցություն, որին մասնակցեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հողագործության ու անասնապահության ավելի քան 1200 փորձված վարպետներ, գյուղատնտեսական արտադրության մասնագետներ ու կազմակերպիչներ, գյուղատնտեսական մեքենաշինության ձեռնարկությունների աշխատողներ, գիտնականներ, կուսակցական և սովետական ղեկավար աշխատողներ։ Խորհրդակցությունում ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումի արդյունքների և Անդրկովկասի հանրապետություններում գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին զեկուցումներով հանդես եկան Անդրկովկասի հանրապետությունների կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարները։ Մտքերի փո-

խանակությանը մասնակցեցին գյուղատնտեսության առաջավորներ, կուսակցական և սովետական աշխատողներ։ Խորհրդակցության ամբիոնից Անդրկովկասի բարձր բերքի վարպետների շարքում հիշվեցին նաև Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության արտադրության առաջավորների՝ Էջմիածնի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության օղակավարուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Արծվիկ Հարությունյանի, Շահումյանի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության կթվորուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Աշխեն Ավետիսյանի, Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղի կոլտնտեսության հովիվ Բախտո Գալստյանի և ուրիշների անունները։

Խորհրդակցությունը դիմեց երկրամասի գյուղատնտեսության բոլոր աշխատողներին՝ կոչ անելով ներդնել իրենց «արժանի բաժինը՝ մեր երկրում մթերքների առատության ստեղծման պատմական խնդիրների կենսագործման մեջ»[1]։

Այդ միջոցառումներն օգնեցին հանրապետության կուսակցական կազմակերպություններին՝ մոբիլիզացնելու աշխատավորական զանգվածների ուժերը գյուղատնտեսության առջև կանգնած խնդիրների կենսագործման համար։ ՀԿԿ Կենտկոմի 1961 թվականի մարտին կայացած պլենումն ընդգծեց մասնավորապես ներքին հնարավորությունների մոբիլիզացման անհրաժեշտությունը։

Հայաստանի մի շարք շրջանների գյուղատնտեսության աշխատողներ 1961 թվականի երաշտային տարում կարողացան հասնել որոշ հաջողություններ։ Հատկապես լավ աշխատեցին Շամշադինի, Եղեգնաձորի, Իջևանի շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները, որոնք հաղթահարելով երաշտի առաջացրած դժվարությունները, կարողացան պահպանել տեխնիկական մշակույթների ու խաղողի բերքը և հանրային հոտն ապահովել ձմեռային կերով։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների անձնուրաց ջանքերի շնորհիվ 1961 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացավ անասունների բոլոր տեսակների գլխաքանակը, զգալիորեն աճեց կաթնամսային մթերքների արտադրությունը։

Սակայն երաշտը ծանր հետևանքներ թողեց։ Հացահատիկի ցանքատարածություններն ու խոտհարքները խիստ վնասվել էին, լուրջ դժվարություններ էին առաջացել հանրային անասնապահությունը կերով ապահովելու գործում։ Հաշվի առնելով հանրապետության գյուղատնտեսության մեջ ստեղծված դրությունը, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեցին Հայկական ՍՍՀ-ին հացահատիկով և անասնակերով օգնություն ցույց տալու մասին։ Կոլտնտեսություններին և սովխոզներին տրամադրվեց անհրաժեշտ քանակությամբ սերմացու, 50 հազար տոննա հացահատիկ։ Նրանց հնարավորություն տրվեց անասնակեր մթերել Հյուսիսային Կովկասում։

Գյուղատնտեսության արտադրության մակարդակի բարձրացման նպատակով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների սովետի որոշմամբ սակավազոր կոլտնտեսությունների հիմքի վրա կազմակերպվեցին 35 մասնա-

[1] «Սովետական Հայաստան», 1961, 17 փետրվարի։

գիտացված սովխոզներ։ Սովխոզների ղեկավարումն ուժեղացնելու համար 1961 թվականին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից ստեղծվեց սովխոզների գլխավոր վարչություն, որի տնօրինությանը հանձնվեցին հանրապետության բոլոր սովխոզները։ Սակայն սովխոզների մի մասը աշխատում էր վնասով։ 1961 թվականին 48 սովխոզներ տնտեսական տարին փակեցին 2,5 միլիոն ռուբլու վնասով։ Հատկապես քաղաքամերձ մասնագիտացված սովխոզների ետ մնալը խափանում էր կաթնամթերքներով ու թարմ բանջարեղենով արդյունաբերական կենտրոնների՝ Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի, Հրազդանի և այլ վայրերի բնակչության կանոնավոր մատակարարումը։ Սովխոզների ետ մնալու գլխավոր պատճառներն էին սխալ պլանավորումը, աշխատանքի վատ կազմակերպումը, որակյալ մասնագետների պակասը և այլն։

Որակյալ մասնագետների պակաս էին զգում ոչ միայն սովխոզները, այլև կոլտնտեսությունները։ 1961 թվականին Հայաստանի 646 կոլտնտեսություններում և 118 սովխոզներում աշխատում էր գյուղատնտեսության 4.899 մասնագետ, որոնցից բարձրագույն կրթությամբ՝ 2.358 մարդ[1]։ Ընդ որում 214 կոլտնտեսություններ բոլորովին չունեին գյուղատնտեսներ, 346-ը՝ անասնաբույծներ և 409-ը՝ անասնաբույծներ. ինժեներ-մեխանիզատորներ կային միայն 5 կոլտնտեսությունում. բարձրագույն կրթություն ունենին կոլտնտեսությունների միայն 250 նախագահներ և միջնակարգ՝ 228-ը[2]։

Ստեղծված դրությունը բնավ չէր բացատրվում բարձրագույն և միջնակարգ կրթությամբ գյուղատնտեսության մասնագետների պակասով։ Հիշյալ տարիներին Հայաստանում գյուղատնտեսական կադրեր էին պատրաստում երկու բարձրագույն և 10 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք յոթնամյակի միայն առաջին երկու տարում տվեցին 936 բարձրագույն և 1.248 միջնակարգ կրթությամբ մասնագետներ։ 1961 թվականին Հայաստանում հաշվվում էր 8.400 գյուղատնտեսական մասնագետ, 4.800-ը՝ բարձրագույն կրթությամբ։ Սակայն մասնագետների միայն կեսն էր աշխատում գյուղատնտեսական արտադրության մեջ[3]։

1961 թվականի մայիսին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, քննարկելով գյուղատնտեսական արտադրության մեջ մասնագետների օգտագործման հարցը, նշեց այդ գործում եղած լուրջ թերությունները և միջոցառումներ մշակեց նրա բարելավման համար։ Դրանից հետո հանրապետական հիմնարկների ապարատներում աշխատող որոշ թվով գյուղատնտեսներ, անասնաբույծներ և մեխանիզատորներ աշխատանքի ուղարկվեցին գյուղատնտեսական արտադրություն։

Չնայած առկա թերություններին, յոթնամյակի առաջին տարիներին Հայաստանում ստեղծվեցին արտադրական նոր հզորություններ, որոշ չափով ավելացավ գյուղատնտեսության մի շարք ճյուղերի համախառն արտադրանքը։

---

[1] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», էջ 70—71, 132—133։
[2] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», էջ 133—134։
[3] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», էջ 174—175։

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԸ

Հայ ժողովրդի կյանքում կարևոր իրադարձություն էր Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման և Հայաստանում սովետական իշխանության հաստատման 40-ամյակի հանդիսավոր տոնակատարությունը։ Իր ազգային վերածննդի մեծ տոնը հայ ժողովուրդը նշեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության նկատմամբ անսահման սիրո, նվիրվածության և հավատարմության զգացումով։

Հոբելյանական տոնակատարությունները կայացան 1961 թվականի մայիսին։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար Երևան ժամանեցին ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովը, միութենական բոլոր հանրապետությունների պատվիրակությունները, Հայաստանում սովետական իշխանության համար մղված հեղափոխական պայքարի շատ մասնակիցներ, սփյուռքահայերի ներկայացուցիչներ։

1961 թվականի մայիսի 6-ին Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում բացվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի հանդիսավոր նիստը։ Նիստում լսվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանի՝ «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության և Հայաստանի կոմունիստական կուսակցության 40 տարին» զեկուցումը, որի մեջ արտացոլված էին սովետական իշխանության հաղթանակի համար Հայաստանի աշխատավորության պայքարը, սովետական իշխանության 40 տարիների ընթացքում տնտեսական և մշակութային կյանքի բոլոր մարզերում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները։ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների սովետի ողջույնում ասված է. «Անդրկովկասյան մյուս ժողովուրդների հետ ջերմ բարեկամության, Սովետական Միության եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում Հայաստանի աշխատավորները անձնվիրաբար պայքարում են... կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման համար... Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը հաստատ վստահություն են հայտնում, որ Հայաստանի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր ջանքերը կգործադրեն, որպեսզի է՛լ ավելի արագ տեմպերով առաջ շարժվեն կոմունիստական շինարարության ուղիով և պատվով կկատարեն հանրապետության առջև կանգնած մեծ ու պատասխանատու խնդիրները»[1]։

Սրտագին ողջույններով հանդես եկան Ռուսաստանյան Ֆեդերացիայի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Ադրբեջանի, Վրաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարները։

Մեծ էին հանրապետության հաջողությունները։ Սովետական իշխանության 40 տարում կառուցվել էին շուրջ 500 գործարան, ֆաբրիկա և արդյունա-

[1] «Սովետական Հայաստան», 1961, 7 մայիսի։

բերական այլ ձեռնարկություններ։ 1913 թվականի համեմատությամբ 1960 թվականին Հայաստանի արդյունաբերության արտադրանքն աճել էր 68,2 անգամ[1]։ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը թողարկում էր ժամանակակից հաստոցներ և էլեկտրամեքենաներ, բարձր ճշգրտության տարբեր և տարբեր քիմիկատներ, գունավոր մետաղներ ու սինթետիկ կաուչուկ, կոշիկ, դործվածքներ, գինի ու կոնյակ, բազմատեսակ այլ արտադրանք։ Արդյունաբերական արտադրանքի ավելի քան 60 տեսակներ 1960 թվականին արտահանվեցին Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի 57 երկրներ։ Նույն թվականին Հայաստանն արտադրեց 2,6 անգամ ավելի մետաղամշակման հաստոցներ, քան ամբողջ ցարական Ռուսաստանը 1913 թվականին[2]։

40 տարում կառուցվել էր 30-ից ավելի խոշոր ու միջին էլեկտրակայան, որոնք 1960 թվականին արտադրեցին ավելի քան 2,7 միլիարդ կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա։ Դա 1,4 անգամ ավելի էր, քան արտադրում էր ամբողջ ցարական Ռուսաստանը 1913 թվականին։ Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Սովետական Հայաստանը առաջ էր անցել այնպիսի զարգացած կապիտալիստական երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Ճապոնիան, Իտալիան։ Բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվում էր 15 անգամ ավելի էլեկտրաէներգիա, քան Թուրքիայում, 41 անգամ ավելի, քան Իրանում։ Պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը դարձավ համատարած էլեկտրիֆիկացիայի հանրապետություն։ Էլեկտրականությունը հաստատորեն մուտք գործեց գյուղատնտեսական արտադրության մեջ։

Մեծ աշխատանք կատարվեց նաև ոռոգման ասպարեզում, որի շնորհիվ բոլոր ցանքատարածությունները 1960 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, ընդարձակվեցին համարյա 20 տոկոսով, այդ թվում տեխնիկական կուլտուրաներինը՝ 33 տոկոսով[3]։ Ջրովի տարածությունների ընդլայնումը լայն հնարավորություններ ստեղծեց խաղողագործության, պտղաբուծության և տեխնիկական մշակույթների ավելի արագ զարգացման համար։ 1960 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, հանրապետության խաղողի այգիների տարածությունը ավելացել էր ավելի քան երեք անգամ, իսկ պտղատու այգիներինը՝ համարյա 6 անգամ[4]։ Ոռոգելի հողատարածությունների ընդլայնման ուղղությամբ Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների հերոսական աշխատանքի, հողագործության մեջ ագրոտեխնիկական գիտության նվաճումների լայն կիրառման շնորհիվ 1960 թվականին հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը, համադրելի գներով, 1913 թվականի համեմատությամբ, ավելացավ շուրջ 3 անգամ[5]։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում զգալիորեն ավելացավ երկաթուղիների ցանցը։ Կառուցվեցին Լենինական—Արթիկ, Ղափան—Մինջևան երկաթուղային նոր

---

[1] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», էջ 30—31։

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1961, 7 մայիսի։

[3] Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 81։

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 94—95։

[5] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1961, 7 մայիսի։

Հյուսիսը։ Յոթնամյակի սկզբում հանրապետության մայրաքաղաքը երկաթուղային գծով կապվեց Սևանի հետ։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանը պատվեց ավտոխճուղային ճանապարհների խիտ ցանցով։ 1960 թվականին նրանց երկարությունը հասավ 6,2 հազար կիլոմետրի, իսկ ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունը կազմեց 648 միլիոն տոննա-կիլոմետր[1]։

Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և առևտրի աճին զուգընթաց մեծ չափով ավելացել էր Սովետական Հայաստանի ազգային եկամուտը, բարձրացել աշխատավորության նյութական բարեկեցությունն ու կուլտուրական մակարդակը։ Տարեցտարի ավելանում էին սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար պետական հատկացումները։ Այդ կարիքների համար միայն 1960 թվականին առանձնացվեց հանրապետության բյուջեի 52 տոկոսը։ Հատուկ ուշադրություն դարձվեց աշխատավորության բնակարանային-կենցաղային պայմանների բարելավմանը։ 1921—1960 թվականներին պետական ու կոոպերատիվ կազմակերպությունները կառուցեցին ավելի քան 3 միլիոն 300 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Բացի դրանից, միայն 1946—1959 թվականներին պետական վարկով և բնակչության միջոցներով 1,6 միլիոն քառակուսի մետր բնակարաններ կառուցվեցին քաղաքներում ու բանվորական ավաններում։ Նույն ժամանակամիջոցում կոլտնտեսականների և գյուղական մտավորականության կողմից կառուցվեց 77 հազար բնակելի տուն[2]։ Սովետական իշխանության տարիներին կատարված արդյունաբերական, կոմունալ-կենցաղային և բնակարանային շինարարության հսկայական մասշտաբները հիմնովին փոխեցին հանրապետության քաղաքների, բանվորական ավանների, շրջանային կենտրոնների և գյուղերի տեսքը։ Բարեկարգված խոշոր քաղաքներ դարձան Երևանը, Լենինականը, Կիրովականը, կառուցվեցին մի շարք նոր քաղաքներ։

Մեծ հաջողություններ էին ձեռք բերվել առողջապահության մարզում։ Եթե նախահեղափոխական Հայաստանն ուներ միայն 6 հիվանդանոց և 226 բժշկական աշխատող, որոնցից բժիշկ էին միայն 73-ը, ապա 1960 թվականին Հայաստանում հաշվվում էր 269 հիվանդանոց, ուր աշխատում էին 4,6 հազար բժիշկ և շուրջ 11 հազարանոց միջին բժշկական անձնակազմ։ 1960 թվականին Հայաստանում ազգաբնակչության յուրաքանչյուր 10 հազար մարդուն համարյա 9 անգամ ավելի շատ բժիշկ էր ընկնում, քան Թուրքիայում և 14 անգամ ավելի, քան Իրանում[3]։ Ստեղծվել էր կանանց ու երեխաների բժշկական կոնսուլտացիաների լայն ցանց։ Սովետական Հայաստանի 40-ամյակի նախօրյակին գործում էր 416 մանկապարտեզ ու մանկամսուր, որոնցում ընդգրկված էր 29.830 երեխա[4]։

Եթե մինչև հեղափոխությունը Հայաստանում խոսք չէր կարող լինել աշխատավոր զանգվածների պետական-սոցիալական ապահովագրության մասին,

---

[1] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», էջ 143։

[2] Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 143—144։

[3] Տե՛ս «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 363։

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 369։

ապա սովետական իշխանությունը այդ նպատակի համար հատկացրել էր տասնյակ միլիոն ռուբլի։

Անճանաչելիորեն փոխվել էր Հայաստանի կուլտուրական տեսքը։ Նա դարձել էր բարձրագույն ու միջնակարգ հաստատությունների, կուլտուր-լուսավորական և գիտահետազոտական հիմնարկների ցանցով պատած հանրապետություն։

Աշխատավորության բարեկեցության և կուլտուրայի անշեղ աճի, առողջապահության նկատմամբ մեծ ուշադրության, մոր և մանկան իրավունքների պահպանման, սոցիալական ապահովագրությանը տրվող հատկացումների շնորհիվ Սովետական Հայաստանում մեծ չափով աճեց ծննդաբերությունը և կրճատվեց մահացությունը։ Հիմնականում դրանով է բացատրվում այն իրողությունը, որ 40 տարում հանրապետության ազգաբնակչությունը աճեց 2,5 անգամ[1]։

1959 թվականին քաղաքային ազգաբնակչությունը կազմում էր հանրապետության ողջ բնակչության 50 տոկոսը, այն ժամանակ, երբ 1913 թվականին այն հասնում էր 10 տոկոսի[2]։

Սովետական Հայաստանը դարձավ այն կենտրոնը, որը դեպի իրեն է ձգում պատմական հանգամանքների բերումով հայրենիքից հեռացած և օտար երկրներում գտնվող հայ ժողովրդի հազարավոր զավակների։ Քառասուն տարում աշխարհի տարբեր երկրներից Սովետական Հայաստան ներգաղթեց ավելի քան 130 հազար հայ։

Արտահայտելով Հայաստանի բոլոր աշխատավորների կամքը, ՀՍՍՀ Գերագույն սովետի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հանդիսավոր նիստի մասնակիցները ՍՄԿԿ Կենտկոմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին ուղղված նամակում նշեցին. «Հանրապետության աշխատավորները միշտ հիշում են, որ Սովետական Հայաստանի հաջողությունները հնարավոր դարձան միմիայն սովետական իշխանության, կոմունիստական կուսակցության, նրա Կենտրոնական կոմիտեի և սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ, սովետական ժողովուրդների ու ամենից առաջ մեր անծայրածիր Հայրենիքի բոլոր ժողովուրդների մեծ եղբոր ու բարեկամի՝ ռուս մեծ ժողովրդի անխախտ բարեկամության և անշահախնդիր օգնության շնորհիվ»[3]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման տարեդարձի առթիվ հանդիսավոր նիստեր տեղի ունեցան Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում և Սովետական Միության մի շարք այլ քաղաքներում։

Սովետական Հայաստանի հոբելյանը լայնորեն նշվեց նաև արտասահմանում՝ Ռումինիայում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Արաբական Միացյալ Հանրապետությունում և հայաբնակ մյուս երկրներում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման հանդիսավոր տոնակատարությունը

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1960, 7 մայիսի։

[2] Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1959 г., Армянская ССР», էջ 11։

[3] «Սովետական Հայաստան», 1961, 7 մայիսի։

կուգադիպեց ՍՄԿԿ XXII համագումարի նախապատրաստությանը։ 1961 թվականի ամռանը մամուլում հրապարակվեցին Սովետական Միության կոմունիստական կուսակցության նոր ծրագրի և կանոնադրության նախագծերը։ Ամբողջ երկրում, այդ թվում և Հայաստանում, սկսվեց հիշյալ փաստաթղթերի համակուսակցական և համաժողովրդական քննարկումը։



ՀՍՍՀ կառավարության շենքը Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակում

Հայաստանում այդ քննարկման արդյունքներն ամփոփվեցին 1961 թվականի սեպտեմբերին Երևանում կայացած Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարում։ Կուսակցական դռնբաց ժողովներում, շրջանային ու քաղաքային կուսակցական կոնֆերանսներում ՍՄԿԿ ծրագրի և կանոնադրության նախագծերի քննարկմանը մասնակցել էին ավելի քան 115 հազար մարդ, որոնցից ելույթ էին ունեցել շուրջ 14 հազար մարդ։ Հանրապետական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ ծրագրի և կանոնադրության մասին իրենց խոսքն ասացին ավելի քան 15 հազար քաղաքացիներ։ Արտահայտելով կոմունիստների, հանրապետության բոլոր աշխատավորների կարծիքը, համագումարը միաձայն հավանություն տվեց ՍՄԿԿ ծրագրի և կանոնադրության նախագծերին։

Հայաստանի կոմկուսի XXII համագումարն ամփոփեց հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության կուսակցական կազմակերպությունների բազմակողմանի աշխատանքի արդյունքները, մշակեց հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի և մշակույթի հետագա զարգացման նոր առաջադրանքներ։ Համագումարը խնդիր դրեց բարձրացնել գաղափարական աշխատանքի մակարդակը, այն սերտորեն կապել կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ։

ՀԿԿ XXII համագումարում նշվեց, որ արտասահմանում, կոմունիստների հետ համատեղ, օգտակար, հայրենասիրական աշխատանք են տանում նաև մի շարք սփյուռքահայ կազմակերպություններ։ Սովետական Հայաստանին աջակցելու գիծ է տանում, օրինակ, հնչակյան կուսակցությունը, որը պրոպագանդում է մեր հանրապետության նվաճումները, պայքարում դաշնակցականների և մյուս հետադիմական ուժերի դեմ։ Համագումարն ընդգծեց իմպերիալիզմի և պատերազմի վտանգի դեմ միասնական ճակատի ստեղծման ու խաղաղության համար պայքարող սփյուռքի առաջադիմական բոլոր կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելու անհրաժեշտությունը։

ՀԿԿ XXII համագումարը կոմունիստներին, հանրապետության աշխատավորներին կոչ արեց աշխատանքային նոր հաջողությունների հասնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

6. ՍՄԿԿ XXII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ։ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1961 թվականի հոկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցավ Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXII համագումարը, որը պատմության մեջ մտավ իբրև կոմունիզմ կառուցողների համագումար։ Այն ամփոփեց կուսակցության XX և XXI համագումարների որոշումների կատարման համար կոմունիստական կուսակցության և ամբողջ սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի արդյունքները։

Հաշվետու շրջանում սովետական ժողովուրդը խոշոր հաջողությունների էր հասել։ 1956—1961 թվականներին ՍՍՀՄ-ում կառուցվեց ու շահագործման հանձնվեց շուրջ վեց հազար արդյունաբերական խոշոր ձեռնարկություն։ Արդյունաբերական արտադրանքի թողարկումն աճել էր մոտ 80 տոկոսով[1]։ Նույն ժամանակաշրջանում գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ հինգ տարիների համեմատությամբ ավելացել էր 43 տոկոսով[2]։ Տնտեսական հաջողություններին զուգընթաց բարձրանում էր աշխատավորների կենսամակարդակը։ Աշխատավարձի բարձրացման, ցածր աշխատավարձ ստացողների հարկերի վերացման, փոխառությունների թողարկումը դադարեցնելու, թոշակների չափերի մեծացման և այլ միջոցառումների շնորհիվ ազգաբնակչության եկամուտները 1960 թվականին, 1955 թվականի համեմատությամբ, համադրելի գներով, աճել էին 24 միլիարդ ռուբլով։ 1956—1961 թվականներին երկրում ավելի շատ բնակելի տուն կառուցվեց, քան նախորդ 15 տարվա ընթացքում։ Նոր բնակարաններ ստացան 50 միլիոն մարդ։

Լենինյան նորմաների վերականգնման ու ամրապնդման, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման գործում կարևոր դեր խաղաց կուսակցության կողմից Ստալինի անձի պաշտամունքի քննադատությունը և նրա վնասակար հետևանքների հաղթահարումը։

---

[1] Տե՛ս «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 53։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 74։

Համագումարը կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ բարձրացնել աշխատավորների գիտակցական մակարդակը, ամենօրյա աշխատանք տանել կադրերին լենինյան ոգով դաստիարակելու ուղղությամբ, հմտորեն համակցել կուսակցական գաղափարական աշխատանքը նրա կազմակերպական աշխատանքի հետ։

ՍՄԿԿ XXII համագումարը ի մի բերեց կուսակցության և սովետական կառավարության արտաքին քաղաքականության արդյունքները, նշեց արդի համաշխարհային զարգացման որակական նոր առանձնահատկությունները։

Համագումարը հավանություն տվեց կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության արտաքին քաղաքական կուրսին, որի նպատակն էր միջազգային լարվածության մեղմացումը, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանումն ու ամրապնդումը։

Համագումարն ընդունեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության նոր Ծրագիրը՝ կոմունիզմի կառուցման ծրագիրը։ Այնտեղ նշված է, որ կուսակցության և ժողովրդի գործունեության համաշխարհային պատմական նշանակություն ունեցող գլխավոր հանրագումարը դա ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակն է։ ՍՄԿԿ նոր ծրագրում տրված է կոմունիստական հասարակության մարքսիստական-լենինյան բնութագիրը, նշված են ՍՍՀՄ-ում կոմունիզմի շինարարության ուղիները և սոցիալիզմի՝ կոմունիզմին վերաճելու օրինաչափությունները։

Կոմունիստական շինարարության ընթացքում կուսակցությունը նախատեսում է իրականացնել երեք կարևորագույն խնդիր. կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական արտադրական հարաբերությունների հետագա զարգացումը և նոր մարդու դաստիարակությունը։

Արտադրողական ուժերի աննախընթաց զարգացումը, նշված է կուսակցության ծրագրում, հիմք կծառայի սոցիալիստական արտադրական հարաբերությունները կոմունիստականի վերափոխելու համար։ Այդ խնդրի լուծումը ամենից առաջ ենթադրում է գոյություն ունեցող սոցիալիստական սեփականության երկու ձևերի հետագա զարգացում, որը կհասցնի քաղաքի ու գյուղի միջև էական տարբերությունների, բանվոր դասակարգի և գյուղացիության միջև դասակարգային սահմանների վերացման։

Սովետական պետության աստիճանական զարգացման, նրա հետագա դեմոկրատացման և կոմունիստական հասարակական ինքնավարության փոխակերպման ուղիների մասին ՍՄԿԿ ծրագրի դրույթները ստեղծագործորեն զարգացնում են պետության մասին մարքսիստական-լենինյան ուսմունքը։ Սովետական պետությունը, ասված է կուսակցության ծրագրում, «որը առաջ եկավ որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետություն, նոր, ժամանակակից փուլում վերածվեց համաժողովրդական պետության, դարձավ ամբողջ ժողովրդի շահերն ու կամքն արտահայտող օրգան»[1]։ Սակայն դա բնավ չի բացասում կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի ղեկավար դերը։

Կոմունիստական ծավալուն շինարարությունը, ասված է ծրագրում, նոր

---

[1] «Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը», Երևան, 1961, էջ 120։

փուլ է նշանավորում ազգային հարաբերությունների զարգացման մեջ, որը բնորոշվում է ազգերի հետագա մերձեցմամբ և նրանց լիակատար միասնության իրագործմամբ։ Ելնելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից, կուսակցությունը ազգային հարաբերությունների ասպարեզում առաջ քաշեց հետևյալ խնդիրները. հասնել բոլոր ազգերի ու ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետագա հոմակողմանի զարգացման, ըստ ամենայնի ընդլայնել միութենական հանրապետությունների իրավունքները՝ նրանց փոխադարձ կապերի և փոխադարձ օգնության պայմաններում, հետագայում ևս ապահովել ՍՍՀՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացում և թույլ չտալ որևէ առավելություններ, սահմանափակումներ կամ հարկադրանք այս կամ այն լեզվի օգտագործման հարցում։

Ծրագրում գիտականորեն հիմնավորված է կոմունիզմի շինարարության ժամանակաշրջանում Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավար դերը, հստակորեն որոշված են սովետների, արհմիությունների, կոմերիտմիության, կոոպերացիայի և մյուս հասարակական կազմակերպությունների խնդիրները։

Ծրագրում, ինչպես նաև XXII համագումարում ընդունված ՍՄԿԿ կանոնադրության մեջ, նախագծված են ներկուսակցական դեմոկրատիայի հետագա զարգացման, կոմունիստական հասարակության կառուցման ժամանակաշրջանում կուսակցական-քաղաքական և կուսակցական-կազմակերպական աշխատանքի բարձրացման ուղիները։

ՍՄԿԿ նոր ծրագիրը համաշխարհային պատմության մեջ կոմունիստական հասարակության կառուցման առաջին կոնկրետ, գիտական ու գործնական պլանն է։ Այն տոգորված է սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և կոմունիստական մարդասիրության ոգով, առաջավոր մարդկության պայծառ երազանքների իրականացման մեծ գաղափարներով, լուսավորում է ամբողջ աշխարհի աշխատավորների ուղին՝ դեպի պայծառ գալիքը։ Ահա թե ինչու ՍՄԿԿ ծրագիրը ջերմ հավանություն գտավ կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, պրոլետարիատի, ամբողջ աշխարհի աշխատավորների կողմից և իրավացիորեն կոչվեց արդի դարաշրջանի կոմունիստական մանիֆեստ։

Կենսագործելով ՍՄԿԿ XXII համագումարի որոշումները, Սովետական Միության աշխատավորները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հասան կարևոր հաջողություններ։

Աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացման, արտադրական նոր հզորությունների շարք մտնելու շնորհիվ անընդհատ ավելանում էր արդյունաբերության արտադրանքը։ Մեկը մյուսի ետևից շարք էին մտնում արդյունաբերական նոր հսկաներ։ Շահագործման հանձնվեց Բրատսկի հիդրոէլեկտրակայանի առաջին ագրեգատը, Դնեպրոպետրովսկում սկսեց աշխատել Եվրոպայում խոշորագույն ավտոդողերի գործարանը։ Միայն 1963 թվականին շահագործման հանձնվեցին 700 արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, ինչպես նաև մեծ քանակությամբ նոր գործարանամասեր ու արտադրական տեղամասեր։ Նույն թվականին կապիտալ շինարարության մեջ պետական ներդրումների ընդհանուր գումարը կազմեց 31,5 միլիարդ ռուբլի, 11 տոկոսով ավելի, քան 1962 թվականին։ Հինգ տոկոսով բարձրացավ աշխատանքի ար-

տադրողականությունը, արդյունաբերական արտադրանքի տարեկան աճը կազմեց 8,5 տոկոս։ Արդյունաբերական ձեռնարկությունները յուրացրին երկրում առաջին անգամ արտադրվող արտադրանքի շուրջ հազար տեսակներ[1]։

Մեծ աշխատանք կատարվեց գյուղատնտեսության մեքենայական բազայի ամրապնդման ուղղությամբ։ 1963 թվականին երկրի գյուղատնտեսությունն ստացավ 15 ձիաուժի 439 հազար տրակտոր, 86 հազար բեռնատար ավտոմեքենա, 180 հազար տարբեր տեսակի կոմբայն և շատ ուրիշ գյուղատնտեսական մեքենաներ ու սարքավորումներ[2]։

Սովետական Հայաստանում նույնպես զգալի զարգացում տեղի ունեցավ արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության ու գյուղատնտեսության մի շարք ճյուղերում։ 1962—1963 թվականներին արդյունաբերության տարեկան արտադրանքն ավելացավ միջին հաշվով 9 տոկոսով, ընդ որում, այդ աճի զգալի մասը տեղի էր ունեցել աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրության ինտենսիվացման, ձեռնարկությունների ներքին հնարավորությունների ավելի լավ օգտագործման հաշվին։ Հայաստանի արդյունաբերության զարգացումը բնութագրվում էր ոչ միայն արտադրանքի ծավալի աճով, այլև նրա արտադրատեսակների ավելացմամբ։ Յուրացվեց ավելի քան երկու հարյուր ժամանակակից մեքենաների, հաստոցների ու սարքերի արտադրությունը[3]։

Բարելավվեցին նաև արդյունաբերության որակական ցուցանիշները։ Գնալով մեծանում էր Հայաստանի արդյունաբերության արտադրանքի պահանջարկը ոչ միայն ՍՍՀՄ-ում, այլև նրա սահմաններից դուրս։

Արդյունաբերության համախառն արտադրանքի ավելացման մեջ մեծ տեղ ունեին նոր արտադրական հզորությունները։ Յոթնամյակի չորրորդ և հինգերորդ տարիներին շարք մտան 48 արդյունաբերական նոր ձեռնարկություն և արտադրամաս։ Առաջին արտադրանքը տվեցին Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատն ու Կիրովականի արհեստական մետաքսաթելի գործարանը, Երևանի պոլիվինիլացետատ գործարանի և Կիրովականի քիմիական կոմբինատի արտադրական նոր օբյեկտները։ Նորակառույցների թվում էին պահածոների և կաթի մի շարք գործարաններ և այլ ձեռնարկություններ։

Երևանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանների շահագործմամբ հզոացավ հանրապետության էներգետիկ բազան։ 1962—1963 թվականներին արդյունաբերական շինարարության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմեց 250 միլիոն ռուբլի, այսինքն՝ 25 տոկոսով ավելի, քան 1960—1961 թվականներին։

Արդյունաբերության զարգացումն ուղեկցվում էր տեխնիկական առաջադիմությամբ՝ նրա բոլոր ճյուղերում։ Ամրապնդվում էր ձեռնարկությունների տեխնիկական բազան։ Արդյունաբերությունը հագեցվում էր նորագույն սարքավորումներով։ 1962—1963 թվականներին միայն մեքենաշինական ձեռնարկություններում տեղադրվեցին ավելի քան 850 մետաղահատ նոր հաստոց,

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1964, 24 հունվարի։

[2] Տե՛ս նույն տեղում։

[3] Տե՛ս Ցա. Ն. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIII համագումարին. Երևան, 1964, էջ 12։

դարբնոցա-մամլիչային, ձուլող և այլ սարքավորումներ։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում մեքենայացվեցին և ավտոմատացվեցին ավելի քան 190 արտադրական պրոցեսներ, տեղադրվեցին 1050 բարձրարտադրողական ժամանակակից մեքենաներ ու հաստոցներ[1]։

Տեխնիկապես վերազինվեցին հանրապետության տրանսպորտն ու կապը։ Էլեկտրիֆիկացվեցին Երևան-Սևան և Ալավերդի-Այրում երկաթուղային ուղեմասերը, նախապատրաստական աշխատանք տարվեց Երևան-Լենինական ուղեմասի էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Երևանում, Լենինականում և հանրապետության մի շարք գյուղական շրջաններում շահագործման հանձնվեցին նոր ավտոմատ հեռախոսակայաններ, ընդլայնվեց միջքաղաքային հեռախոսային գծերի ցանցը, հաջողությամբ ծավալվում էր Երևանի հեռուստատեսային կայանի շինարարությունը։

Տեխնիկական առաջադիմության մեջ մեծ էր բանվոր նորարարների, ինժեներների ու տեխնիկների ներդրումը։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում ստեղծվեցին կոմպլեքսային, մեքենայացված ու ավտոմատացված տեղամասեր, հոսքային ու կոնվեյերային գծեր։ Արտադրության մեջ ներդրվեց ավելի քան 21,3 հազար գյուտարարական և ռացիոնալիզատորական առաջարկություն, որոնց տարեկան միջին տնտեսական օգուտը կազմեց մոտ 19,9 միլիոն ռուբլի[2]։

Որոշակի հաջողություններ հասավ նաև Հայկական ՍՍՀ գյուղատնտեսությունը։ 1961 թվականի համեմատությամբ 1962 թվականին ցանքատարածությունները աճեցին 5,2 տոկոսով։ Բարձրացավ մի շարք գյուղատնտեսական մշակույթների բերքատվությունը. ցորենինը՝ 63,6 տոկոսով, խաղողինը՝ 24, բամբակինը՝ 12,7, շաքարի ճակնդեղինը՝ 15,1, կարտոֆիլինը և բանջարեղենինը՝ 11,3 տոկոսով և այլն[3]։ Բազմամյա խոտաբույսերի և այլ մշակույթների զգալիորեն ավելի բերք հավաքվեց։ Սակայն դրանով չէր կարող լուծվել հանրապետության անասնակերի հարցը։ Կերի պակասի պատճառով 1962 թվականին տեղի էր ունեցել խոշոր ու մանր եղջերավոր անասունների գլխաքանակի անկում։

1963 թվականի անբարենպաստ կլիմայական պայմանները առավել ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի գյուղատնտեսության համար։ Նախընթաց տարիների համեմատությամբ կրճատվեցին բուսաբուծության հիմնական մթերքների արտադրությունն ու մթերումը։ Հատկապես տուժեցին գյուղատնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են բամբակագործությունը, ծխախոտագործությունը, խաղողագործությունն ու պտղաբուծությունը։ Բանջարեղենի բերքը մնաց 1961 թվականի մակարդակին, իսկ կարտոֆիլինը նույնիսկ մի քանի անգամ կրճատվեց[4]։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները, այնուամենայնիվ,

---

[1] Տե՛ս Յա. Ն. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIII համագումարին, էջ 15։

[2] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1965 г., статистический ежегодник». Երևան, 1966, էջ 25։

[3] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.». էջ 98—99, 108։

[4] Տե՛ս նույն տեղում։

կոլտնտեսային-սովխոզային արտադրության մի շարք ճյուղերում կարողացան հաղթահարել անբարենպաստ եղանակի հետ կապված դժվարությունները և հասնել որոշ հաջողությունների, գերակատարելով հացահատիկի արտադրության, մսի, կաթի, բրդի պետական պլանը։ Դրան զգալիորեն նպաստեց կոլտնտեսությունների ու սովխոզների տեխնիկական բազայի ամրապնդումը, ոռոգվող հողատարածությունների ընդարձակումը։

Հանրապետության գյուղատնտեսությունը երկու տարում ստացավ 15 ձիաուժի 1915 տրակտոր, 1160 բեռնատար ավտոմեքենա և շատ ուրիշ գյուղատնտեսական մեքենաներ։ Իրագործվեց ևս 12,1 հազար հեկտար անջրդի հողերի և 50 հազար հեկտար արոտավայրերի ոռոգում[1]։

Գործարաններում ու ֆաբրիկաներում, տրանսպորտում ու կառույցներում, կոլտնտեսային դաշտերում օրավուր մրցություն էր ծավալվում յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։ Մրցողների առաջին շարքերում էին կոմունիստական աշխատանքի շարժման մասնակիցները, աշխատանքի բարձր արտադրողականության, գերազանց որակի արտադրանքի թողարկման և շատ ուրիշ հայրենասիրական նախաձեռնությունների համար պայքարողները։ Կոմունիստական աշխատանքի շարժման մեջ 1963 թվականին ընդգրկված էր ավելի քան 130 հազար մարդ։ Կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար պայքարում էին ավելի քան 6600 բրիգադ, տեղամաս, ֆերմա, արտադրամաս և ձեռնարկություն։ Այդ կոչմանն էին արժանացել 1350 բրիգադ, 160 արտադրամաս, տեղամաս ու ֆերմա[2]։

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդը և Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի նախագահությունը 1963 թվականի օգոստոսին կոմունիստական աշխատանքի ձեռնարկության կոչում շնորհեցին Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանին։ Կիրովցիներն այդ բարձր կոչմանն արժանացան աշխատանքի նկատմամբ իսկական կոմունիստական վերաբերմունքի շնորհիվ։ Գործարանում համախառն արտադրանքի թողարկման պլանը 1963 թվականին կատարվեց 103,6 տոկոսով, իսկ մեկ ռուբլու ապրանքային արտադրանքի ծախսերն իջեցվեցին 1,5 տոկոսով։ Յոթնամյակի առաջին չորս տարում ձեռնարկության բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողներն արեցին մոտ չորս հազար նորարարական առաջարկություն, որոնց ներդրումից գործարանն ստացավ տարեկան ավելի քան երեք հարյուր հազար ռուբլու օգուտ։ Գործարանի կոլեկտիվը աշխատանքը հմտորեն զուգակցում էր ուսման հետ։ 1959—1963 թվականներին, առանց արտադրությունից կտրվելու, բարձրագույն ուսումնական հաստատություններ, տեխնիկումներ ու բաներիտ դպրոցներ ավարտեցին ձեռնարկության ավելի քան 200 բանվոր-ծառայողներ։ Այդ ժամանակ գործարանի յուրաքանչյուր հինգերորդ աշխատող ուներ բարձրագույն կամ միջնակարգ տեխնիկական կրթություն[3]։

Հայաստանի Ժողտնտխորհի և Արհեստակցական միությունների հանրապետական խորհրդի նախագահության որոշմամբ կոմունիստական աշխատան-

---

[1] Տե՛ս «Коммунист», 1964, 23 հունվարի։

[2] Տե՛ս ՀԱՄԽ-ի ընթացիկ արխիվ, նախագահության 1963 թվականի նիստերի արձանագրությունները։

[3] Տե՛ս նույն տեղում։

քի ձեռնարկության կոչում շնորհվեց նաև Շահումյանի տրիկոտաժի ֆաբրիկային, որի կոլեկտիվը նույնպես մեծ հաջողություններ էր հասել՝ «ապրել, աշխատել և սովորել կոմունիստաբար» նշանաբանի կենսագործման ուղղությամբ։

1963 թվականի օգոստոսին Երևանում տեղի ունեցավ կոմունիստական աշխատանքի շարժման առաջավորների հանրապետական չորրորդ հավաքը, որը նշեց հասարակական հիմունքների լայն տարածման ուղղությամբ աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության զարգացման, առաջավոր փորձի տարածման և տնտեսության բոլոր ճյուղերում տեխնիկական առաջադիմության կարևորությունը։ 1963 թվականին արդյունաբերական ձեռնարկություններում, կառույցներում, կոլտնտեսություններում և գիտահետազոտական ինստիտուտներում կոմունիստական աշխատանքի մասնակիցների նախաձեռնությամբ ստեղծվել և նրանց օգնությամբ գործում էին հասարակական՝ 58 կոնստրուկտորական, 82 տեխնիկական նորմավորման և տնտեսական վերլուծության բյուրոներ, 11 նորարարական խորհուրդ, 10 հասարակական գիտա-հետազոտական ինստիտուտ ու խումբ, 105 ստեղծագործական կոմպլեքս բրիգադ, կոմունիստական աշխատանքի տասնյակ դպրոցներ։ Հասարակական հիմունքներով գործում էին վեց ինստիտուտ և ինը շինարարական տեխնիկում[1]։ Նրանցում, առանց վարձատրության, աշխատանքից ազատ ժամերին դասախոսում էին բուհերի և տեխնիկումների հարյուրավոր դասախոսներ, ինժեներներ, տեխնիկներ, գյուղատնտեսության մասնագետներ, արդյունաբերության առաջավորներ և բարձր բերքի վարպետներ։ Հասարակական հիմունքներով գործող ուսումնական հաստատություններում, կոնստրուկտորական և տեխնիկական բյուրոներում երիտասարդ շատ բանվորներ ու գյուղատնտեսության աշխատողներ ձեռք էին բերում մասնագիտական գիտելիքներ, ուսումնասիրում էին արտադրության առաջավորների փորձը։

Ժողովրդա-տնտեսական խնդիրների հաջող կատարումը պահանջում էր շինարարության ղեկավարման և արդյունաբերության կառավարման կատարելագործում։ Սակայն, ինչպես ցույց տվեց կյանքը, այդ տարիներին մտցված տնտեսական և կուսակցական ղեկավարման ոչ բոլոր ձևերն էին, որ օգտակար դուրս եկան։ Կյանքում իրեն չարդարացրեց ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի (1962) որոշմամբ մտցված կուսակցական շինարարության արտադրական սկզբունքը, որը, իբր թե, ապահովելու էր արդյունաբերության ու գյուղատնտեսության առավել կոնկրետ կուսակցական ղեկավարությունը։ Իրականում ստացվեց այլ բան։ Այդ վերակառուցումը կուսակցական օրգաններին հասցրեց անդեմության՝ ժողովրդական տնտեսության ղեկավարման գործում, նսեմացրեց նրանց դերը։

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը առաջ էր քաշում վերահսկողության կազմակերպման և ներքևից վերև որոշումների կատարման ստուգման խնդիրը. «Ստուգել մարդկանց և ստուգել գործի փաստական կատարումը—ա՛յս է, դարձյալ ա՛յս է, միմիայն ա՛յս է այժմ ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականության մեխը»[2]։ Վ. Ի. Լե-

[1] Տե՛ս ՀԱՄԽ-ի ընթացիկ արխիվ, նախագահության 1963 թվականի նիստերի արձանագրությունները։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 265։

նինի ղեկավարությամբ երկրում ստեղծվեց կուսակցական-պետական միասնական վերահսկողություն՝ հանձին Կենտրոնական վերահսկողության հանձնաժողովի-Բանվորա-գյուղացիական տեսչության, որի աշխատանքներում ներգրավվեցին աշխատավորական լայն զանգվածներ։ Վերահսկողության այդ սիստեմը անհատի պաշտամունքի տարիներին փաստորեն փոխարինվել էր մասսաներից կտրված վերահսկողության բյուրոկրատական ապարատով։



Բարձրաձարկ շենք Երևանի Հոկտեմբերյան պողոտայում

ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1962) պլենումը որոշեց վերակառուցել վերահսկողության սիստեմը։ Ստեղծվեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի կուսակցական-պետական վերահսկողության կոմիտե։ Հայաստանում ստեղծվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կուսակցական-պետական վերահսկողության կոմիտե, որը հետագայում վերակազմվեց ժողովրդական վերահսկողության կոմիտեի։

Աճեց աշխատավորների դեպուտատների սովետների դերը։ Նրանց միջոցով պետական կառավարմանը հաղորդակից էին դառնում ժողովրդական տնտեսության հետագա զարգացման ձգտումով տոգորված աշխատավորության լայն զանգվածները։

1963 թվականի մարտի 17-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների ընտրությունները, որոնք անցան աշխատավորության արտադրական և քաղաքական

վերելքի պայմաններում և ցուցադրեցին կոմունիստների ու անկուսակցականների անխախտ բլոկի միասնությունն ու անքակտելիությունը։

Տեղական իշխանության մարմիններում ընտրված 23.591 դեպուտատների 69,69 տոկոսը բանվորներ ու կոլտնտեսականներ էին, 47,88 տոկոսը՝ կուսակցականներ, 52,12 տոկոսը՝ անկուսակցականներ։ Տեղական սովետներում ընտրված բոլոր դեպուտատների 38,7 տոկոսը կանայք էին[1]։

1963 թվականի ապրիլին տեղի ունեցած Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի վեցերորդ գումարման առաջին նստաշրջանը ընտրեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նոր կազմ։ Նստաշրջանը Հանրապետության Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Ք. Հարությունյանին։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահ ընտրվեց գրականագետ Է. Ս. Թոփչյանը։

Նստաշրջանը որոշում ընդունեց Հայկական ՍՍՀ կառավարություն՝ Մինիստրների սովետ կազմելու մասին։ Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ հաստատվեց Ա. Ե. Քոչինյանը։

Իրենց աշխատանքը վերակառուցեցին նաև հանրապետության կոմերիտմիությունը ու արհմիութենական կազմակերպությունները։ Հայաստանի կոմերիտմիությունը, որի շարքերում հաշվվում էին 200 հազարից ավելի պատանիներ ու աղջիկներ, հսկայական շեֆական օգնություն էր ցույց տալիս հանրապետության 11 կարևորագույն նոր ձեռնարկությունների, արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության մեջ հանդես էր գալիս բազմաթիվ նախաձեռնություններով։ Արհմիութենական և տնտեսական կազմակերպությունների հետ միասին կոմերիտմիությունն ակտիվորեն օժանդակում էր ժողովրդա-տնտեսական խնդիրների կենսագործմանը։

1963 թվականի սեպտեմբերին Երևանում կայացավ Հայաստանի արհեստակցական միությունների XI համագումարը, որը ներկայացնում էր արհեստակցական միությունների 495 հազար անդամներ կամ հանրապետության բանվորների ու ծառայողների 95,4 տոկոսը[2]։ Համագումարն ամփոփեց կոմունիստական շինարարության համաժողովրդական պայքարում արհեստակցական միությունների կատարած աշխատանքի արդյունքները և խնդիր դրեց ըստ ամենայնի աջակցել բանվորների ու ծառայողների նախաձեռնությանն ու ակտիվությանը, զարգացնել աշխատանքի կոմունիստական ձևերը, լինել տեխնիկական առաջադիմության պայքարի կազմակերպիչներ։

ՍՄԿԿ XXII համագումարի որոշումները նոր հեռանկարներ բացեցին կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում միութենական հանրապետությունների հնարավորությունների ավելի լայն օգտագործման համար, նպաստեցին ժողովուրդների մերձեցմանն ու նրանց բարեկամության հետագա ամրապնդմանը։ Անդրկովկասյան միացյալ էներգետիկ սիստեմի ստեղծումը թույլ տվեց բարձրացնել Անդրկովկասի երեք հանրապետությունների էլեկտրակայանների հզորության օգտագործման գործակիցը, բավա-

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1963, 19 մարտի։

[2] Տե՛ս ՀԱՄԽ-ի արխիվ, «Հայաստանի արհեստակցական միությունների XI համագումարը» գործ։

բարել բոլոր շրջանների կարիքները։ Ղարադաղ-Աղստաֆա-Թբիլիսի և Աղստաֆա-Երևան դաղամուղի կառուցումը հնարավորություն տվեց բնական էժան գազ մատակարարել Հայաստանին։

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացումն ուղեկցվում էր աշխատավորների քանակական անշեղ աճով. ժողովրդական տնտեսության մեջ աշխատող բանվորների և ծառայողների թիվը հինգ տարվա ընթացքում աճեց 160 հազարով, 1963 թվականին հասնելով 530 հազարի[1]։

Հայ ժողովուրդը, ինչպես նաև Սովետական Միության բոլոր ժողովուրդները կոմունիստական կուսակցության հոգատարության և ղեկավարության մեջ են տեսնում իրենց հաջողությունների մեծագույն աղբյուրը, իրենց ազգային վերածնունդն ու ծաղկումը։ Դրանով պիտի բացատրել այն հսկայական սերն ու վստահությունը, որ սովետական մարդիկ տածում են իրենց հարազատ կոմունիստական կուսակցության նկատմամբ։ Թարմ ուժերի մշտական հոսքը դեպի ՍՄԿԿ շարքերը՝ նրա հանդեպ սովետական ժողովրդի անսահման վստահության վառ դրսևորումն է։ Այդ տեսակետից բնորոշ է ՍՄԿԿ XXII համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցության՝ ՍՄԿԿ մարտական ջոկատներից մեկի՝ քանակական և որակական աճը։ 1964 թվականի հունվարին կայացած Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIII համագումարը նշեց, որ 1961 թվականի հոկտեմբերից մինչև 1963 թվականի վերջը Հայաստանի կոմկուսի շարքերն է ընդունվել ավելի քան 11.300 մարդ։

1963 թվականի վերջին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն իր շարքերում ուներ 98.344 կոմունիստ, որոնց ավելի քան 60 տոկոսը զբաղված էր նյութական արտադրության ոլորտում։ Ավելի քան 50 հազար կոմունիստ ուներ բարձրագույն և միջնակարգ կրթություն[2]։

Կոմունիստական կուսակցության հեղինակության աճը ոչ միայն նրա ներքին ճիշտ քաղաքականության, այլև ամբողջ աշխարհի խաղաղության պահպանության, սոցիալիզմի միջազգային լագերի զարգացման ու ամրապնդման, խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի կողմնակիցների շարքերի աճի մտահոգությամբ տոգորված նրա լենինյան արտաքին քաղաքականության հետևողական կենսագործման արդյունք է։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության արտաքին քաղաքականության խոշոր հաղթանակը՝ Կարիբյան ծովի շրջանում 1962 թվականի ամռանն առաջ եկած ճգնաժամի հաղթահարումը, առաջ բերեց բոլոր խաղաղասեր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, ջերմ հավանությունը։ Դրանով կանխվեց համաշխարհային նոր պատերազմի վտանգը։

1963 թվականի օգոստոսին Մոսկվայում ՍՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի կառավարությունների միջև ստորագրվեց պայմանագիր՝ մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների արգելման մասին։

---

[1] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», էջ 187։

[2] Տե՛ս Ցա. Ն. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIII համագումարին, Երևան, 1964, էջ 75։

Յոթնամյակի վերջին երկու տարիները՝ 1964—1965 թվականները, նշանավորվեցին կարևոր իրադարձություններով։ ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թվականի հոկտեմբերյան և նոյեմբերյան պլենումներում վճռականորեն քննադատվեցին կուսակցական ու պետական շինարարության, երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարման գործում թույլ տրված սուբյեկտիվիզմի և վոլյունտարիզմի դրսևորումները։ Հոկտեմբերյան պլենումը ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Լ. Ի. Բրեժնևին, այդ պաշտոնից ազատելով Ն. Ս. Խրուշչովին։ Պլենումը սովետական կառավարության ղեկավարի պաստում երաշխավորեց Ա. Ն. Կոսիգինին։ Կուսակցության Կենտկոմի հոկտեմբերյան պլենումը կարևոր պատմական սահմանագիծ է կուսակցության կյանքում։ Նոյեմբերյան պլենումը վերականգնեց կուսակցական շինարարության տերիտորիալ-արտադրական սկզբունքը, մշակեց կուսակցական ազդեցությունը տնտեսական պրոբլեմների լուծման գործում ուժեղացնելու միջոցառումներ։ Այդ պլենումների որոշումները, որոնք ուղղված էին կուսակցական կյանքի լենինյան նորմաների վերականգնմանը, է՛լ ավելի բարձրացրին կոմունիստական կուսակցության՝ իբրև սովետական հասարակության ղեկավարություն և ուղղություն տվող ուժի դերը։ Այդ որոշումները, որոնք միահամուռ հավանության արժանացան ամբողջ կուսակցության և սովետական ժողովրդի կողմից, կարևոր դեր խաղացին ՍՄԿԿ շարքերի հետագա համախմբման, կոմունիստների և բոլոր աշխատավորների ստեղծագործական ակտիվության բարձրացման, ժողովրդի հետ կուսակցության կապերի ընդլայնման և ամրապնդման գործում։

ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի սեպտեմբերյան պլենումը գիտականորեն հիմնավորված կարևոր միջոցառումներ մշակեց արդյունաբերության հետագա զարգացման, արտադրության էֆեկտիվության, աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ։ Պլենումը նշեց, որ արդյունաբերության ղեկավարման գոյություն ունեցող կազմակերպական կառուցվածքը չի համապատասխանում ժամանակակից պայմաններին և սովետական հասարակության արտադրողական ուժերի զարգացման մակարդակին։ Պլենումը հավանություն տվեց ձեռնարկությունների ու միավորումների տնտեսական ինքնուրույնության ու նախաձեռնության ընդարձակման միջոցառումներին, որոնք պետք է նպաստեին նրանց, իբրև սովետական տնտեսության հիմնական բջիջների, դերի բարձրացմանը։ Կենտկոմի պլենումը մեծ ուշադրություն դարձրեց արդյունաբերության ղեկավարման կազմակերպական կառուցվածքի բարելավմանը, անհրաժեշտ համարեց վերացնել ժողտնտխորհները, արդյունաբերության ղեկավարումը կազմակերպել ըստ ճյուղային սկզբունքի, ստեղծել միութենական-հանրապետական և ընդհանուր-միութենական մինիստրություններ։

1965 թվականի հոկտեմբերին տեղի ունեցավ ՀԿԿ Կենտկոմի պլենումը, որը հավանություն տվեց արդյունաբերության կառավարման կազմակերպումը բարելավելու և ղեկավարությունն ուժեղացնելու վերաբերյալ կուսակցության ու կառավարության մշակած միջոցառումներին։ Պլենումից հետո տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հերթական նստաշրջանը։ Քննարկելով հանրապետության արդյունաբերության ղեկավարման բարելավման հար-

ցը, նստաշրջանը որոշեց Հանրապետության վերացված ժողտնտխորհի վարչությունների հիման վրա ստեղծել համապատասխան մինիստրություններ։

Կուսակցական կյանքի հետագա դեմոկրատացման, երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարման կատարելագործման ուղղությամբ ՍՄԿԿ Կենտկոմի ձեռնարկած միջոցառումները բարերար ազդեցություն ունեցան ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ յուրաքանչյուր միութենական հանրապետության, այդ թվում և Հայկական ՍՍՀ տնտեսական ու մշակութային զարգացման հետագա ընթացքի վրա։

Շարունակելով պայքարը յոթնամյա պլանի կատարման համար, Հայաստանի բանվոր դասակարգը նոր հաջողությունների հասավ նաև յոթնամյակի վերջին տարում։ 1965 թվականին արդյունաբերության տարեկան պլանը կատարվեց 102,6 տոկոսով։ 1954 թվականի համեմատությամբ արտադրանքի աճը կազմեց 12,3 տոկոս[1]։ Զգալիորեն բարձրացան արդյունաբերական ձեռնարկությունների որակական ցուցանիշները։ Կատարվեցին արտադրանքի ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության բարձրացման, հումքի, նյութերի ու էլեկտրաէներգիայի տնտեսման առաջադրանքները։ Միայն արտադրանքի ինքնարժեքի իջեցումից տարեկան արտապլանային տնտեսումը կազմեց 8 միլիոն ռուբլի[2]։ Նախորդ թվականի համեմատությամբ 9,7 տոկոսով աճեց երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառությունը, գերակատարվեց շոգեքարշների օրական միջին վազքի արագությունը, աճեց նրանց աշխատանքի արտադրողականությունը, իջավ փոխադրումների ինքնարժեքը։ Շարունակվում էր երկաթուղիների էլեկտրիֆիկացումը[3]։ Աճեց օդային ու խճուղային տրանսպորտի բեռնաշրջանառությունը, ընդլայնվեց օդային ուղիների և խճուղային հանապարհների ցանցը։ Հետագա զարգացում ստացավ հեռախոսային-հեռագրական կապը։ Մեծացավ քաղաքային հեռախոսակայանների կարողությունը։ Քաղաքներում ու գյուղերում ստեղծվեցին կապի ավելի քան 30 նոր բաժանմունքներ։

Մեծ աշխատանք կատարվեց գիտության ու արտադրության կապի ամրապնդման ուղղությամբ։ Գիտահետազոտական, նախագծային և կոնստրուկտորական կազմակերպությունները զգալի գործ կատարեցին գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման, արտադրության մեջ նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի ներդրման ասպարեզում։ Մեկ տարվա ընթացքում ստեղծվեց մեքենաների, մեխանիզմների, ապարատների և այլ սարքավորումների 28 նոր տեսակ։ Արդյունաբերությունը յուրացրեց արտադրանքի 25 նոր տեսակ, այդ թվում՝ բարձր արտադրողական հաստոցներ, նոր մակնիշի սինթետիկ կաուչուկներ, քիմիական մանրաթելեր, պարարտանյութեր, ինչպես նաև լայն սպառման առարկաների մի շարք նոր տեսակներ, կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող առարկաներ։ Դրան խոշոր չափով նպաստեց արտադրության նորարարների ստեղծագործական նախաձեռնության աճը։ 1965 թվականին ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 13 հազար գյուտարա-

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1966, 6 փետրվարի։
[2] Տե՛ս նույն տեղում։
[3] Տե՛ս նույն տեղում։

ական և ռացիոնալիզատորական առաջարկություն։ Միայն արդյունաբերության մեջ նորացվեց մոտ երեք հազար միավոր արտադրական սարքավորում[1]։

Յոթնամյակի վերջին տարում նկատելի հաջողությունների հասան Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները։ Կենսագործելով գյուղատնտեսության հետագա զարգացման մասին ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թվականի մարտյան պլենումի որոշումները, նրանք, չնայած կլիմայական աննպաստ պայմաններին, հասան գյուղատնտեսական մշակույթների համախառն բերքի բարձրացման։ Նախորդ տարվա համեմատությամբ հացահատիկի արտադրությունն աճեց 6 տոկոսով, գործարանային շաքարի ճակնդեղինը՝ 25, մրգերինը՝ 60, խաղողինը՝ 158 տոկոսով։ Աճեց խոշոր ու մանր եղջերավոր անասունների հոտը և մթերատվությունը։ Չորս տոկոսով ավելացավ կաթնատվությունը, հինգ տոկոսով՝ բուրդը[2]։

7. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1962—1965 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երկրում նյութական բարիքների արտադրության անշեղ աճը հնարավորություն տվեց վերստին օրակարգի հարց դարձնել բախտի քմահաճույքով օտարության դատապարտված հայերի՝ Սովետական Հայաստան վերադարձնելու խնդիրը։

1961 թվականի օգոստոսի 12-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեց հայերի նոր հայրենադարձություն կազմակերպելու մասին։ Դա, և համանման նախորդ որոշումները վկայում էին հազարավոր հայ աշխատավորների հանդեպ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության, նրանց մարդասիրական քաղաքականության մասին՝ կապիտալի երկրներում ազգային և սոցիալական ճնշման դառնությունը ճաշակող հազարավոր հայ աշխատավորների հանդեպ։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի այդ որոշմանը համապատասխան, Հայաստանի կուսակցական ու պետական օրգանները միջոցառումներ մշակեցին սփյուռքահայերի նոր հայրենադարձությունը կազմակերպված անցկացնելու համար։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի և կառավարության որոշմամբ 1961 թվականի օգոստոսի 29-ին վերակազմակերպվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն։ Ներգաղթողների համար, բնակարանների կառուցման նպատակով, կառավարությունը հատուկ միջոցներ հատկացրեց։ Բնակելի շենքերի նոր զանգվածներ ստեղծվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում և Հրազդանում։ Տուֆակերտ բազմահարկ տների բնակարանները կահավորվեցին կահույքով և պատրաստ էին հայրենիք վերադարձողներին տրամադրելու համար։ Բաքվի և Բաթումիի նավահանգիստներում ստեղծվեցին ընդունման կետեր։

1962 թվականի սկզբներին Կիպրոսից Բաթումի ժամանեց հայրենադարձների առաջին խումբը։ Դրան հաջորդեց Արաբական Միացյալ Հանրապետու-

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1966, 6 փետրվարի։

[2] Տե՛ս նույն տեղում։

թյունից մեկնած քարավանը։ «Պիոներ» ջերմանավը 1962 թվականի վերջին Փեհլեվիի նավահանգստից Բաքու բերեց իրանահայերի առաջին խումբը։ Սկիզբ դրվեց սփյուռքահայության նոր ներգաղթին։ Հայրենիքը ջերմորեն դիմավորեց իր որդիներին ու դուստրերին։

Սովետական կառավարությունը մեծ հոգատարություն ցուցաբերեց հայրենադարձների նկատմամբ։ Սկսած արտասահմանյան նավահանգիստներից, որտեղից նրանք մեկնում էին, ընդհուպ մինչև մշտական բնակավայրեր հասնելը, հայրենադարձների տեղափոխման, բուժսպասարկման և մյուս ծախսերը կատարվում էին սովետական պետության հաշվին։ Նրանց տրամադրվել էին դյուրահարմար ջերմանավեր և գնացքներ, իսկ ընդունման կետերում բոլորին տրվում էր միանվագ դրամական օգնություն։

1962—1965 թվականներին Սովետական Հայաստան եկավ 1.655 ընտանիք, թվով 6.949 մարդ։

Հայերի այս ներգաղթը կատարվեց 18 երկրներից։ 3.363 մարդ վերադարձավ Սիրիայից, 1.959-ը՝ Իրանից, 705-ը՝ ԱՄՆ-ից, 500-ը՝ Կիպրոսից։ Մյուսները ներգաղթել են Թուրքիայից, Եթովպիայից, Արգենտինայից, Ուրուգվայից և աշխարհի այլ երկրներից։

1962—1965 թվականներին հայրենիք վերադարձած հայերից 1.374 ընտանիք, բաղկացած 5.372 անձից, տեղավորվեցին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Հրազդանում, Լուսավանում և հանրապետության այլ քաղաքներում, իսկ 281 ընտանիք՝ բաղկացած 1.577 մարդուց՝ գյուղական շրջաններում։ Վերջիններս հիմնականում բնակություն հաստատեցին Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Վեդու և Արտաշատի այգեգործական սովխոզների ավաններում։

Հայրենադարձները, ճնշող մեծամասնությամբ, արհեստավորներ էին՝ փականագործներ, խառատներ, հյուսներ, կոշկակարներ և դերձակներ։ Տեղական օրգանները մեծ հոգատարությամբ զբաղվում էին ներգաղթածներին աշխատանքի տեղավորելու գործով, հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի մասնագիտությունը և նախասիրությունը։ Հարյուրավոր ներգաղթածներ հնարավորություն ստացան արտադրական աշխատանքը զուգակցել ուսման հետ՝ երեկոյան դպրոցներում, տեխնիկումների ու բուհերի հեռակա և երեկոյան բաժիններում։ Ուսման տարիքի բոլոր երեխաները ընդգրկվեցին դպրոցներում, իսկ երիտասարդության զգալի մասը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Սովետական Հայաստանի նոր քաղաքացիների մեջ զգալի թիվ էին կազմում անդրագետները և կիսագրագետները։ Նրանց համար կազմակերպվեցին հատուկ խմբակներ՝ գրագիտություն սովորեցնելու համար։

Հայրենադարձներից ավելի քան 400 մարդու նշանակվեց ծերության կենսաթոշակ։ Իբրև անվերադարձ միանվագ օգնություն, պետությունը հատկացրեց 205 հազար ռուբլի։ Բացի դրանից, շատ ձեռնարկություններ, կառույցներ և հիմնարկներ դիրեկտորական կամ արհմիութենական ֆոնդերի հաշվին իրենց նոր աշխատողների համար ձեռք բերեցին կահույք, առաջին անհրաժեշտության տնային իրեր և այլն։

Հայրենադարձների հանդեպ հոգատարությունը մշտապես գտնվում է հանրապետության կուսակցական, սովետական և տնտեսական կազմակերպու-

թյունների ուշադրության կենտրոնում։ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը 1963 թվականի հոկտեմբերի 4-ին քննարկեց սովետական նոր քաղաքացիների տեղաբաշխման և աշխատանքի տեղավորման հարցը և ընդունեց ծավալուն որոշում։ Այդ որոշումով նախատեսվում էր արագացնել դպրոցական նոր շենքերի, կուլտուր-լուսավորական և նախադպրոցական հիմնարկների կառուցումը։ Միայն 1962—1963 թվականներին աշխատավորների դեպուտատների տեղական սովետները հայրենիք վերադարձածներին տրամադրեցին 53 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն՝ կոմունալ բոլոր հարմարություններով։

Հայրենադարձները ներգրավվեցին հասարակական-քաղաքական կյանքի մեջ։ Արաբական Միացյալ Հանրապետությունից ներգաղթած Խաչիկ Էմջյանը դեպուտատ ընտրվեց Կիրովականի քաղաքային սովետում, Իրաքից եկած Մուշեղ Միրզոյանը՝ Հրազդանի քաղսովետում, իսկ ԱՄՆ-ից վերադարձած Օգսեն Սարյանը՝ Երևանի քաղաքային սովետում։

1955—1966 թվականներին մոտ 1.300 հայրենադարձներ ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատությունները, դարձել ինժեներներ, բժիշկներ, մանկավարժներ։ Նրանցից շատերն այժմ ճանաչված գիտնականներ են, արվեստի ու գրականության գործիչներ։ Հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս ընդհանուր ճանաչման են արժանացել ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, հանրապետության ժողովրդական արտիստներ Հովհաննես Բաղալյանը և Միհրան Երկաթը, դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, գրողներ Հովհաննես Ղուկասյանը, Ստեփան Ալաջաջյանը, Արիկ Ավագյանը և ուրիշներ։

Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները ջանասիրությամբ աշխատում են արդյունաբերական ձեռնարկություններում, կառույցներում, սովխոզներում և կոլտնտեսություններում, ակտիվ մասնակցում հասարակական կյանքին, պետության կառավարմանը։ Բարձր ցուցանիշների համար էջմիածնի շրջանի № 3 սովխոզի բանվորներ Ամիր Առաքելյանը և Գաբրիել Թամազյանը արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի փականագործ Ժիրայր Արայանը, Արաբկիրի տրիկոտաժի ֆաբրիկայի բանվորուհի Անժելա Դուրյանը, Շահումյանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի բանվորուհի Շաքե Թորեղյանը ընտրվեցին իշխանության բարձրագույն օրգանի՝ հանրապետության Գերագույն սովետի դեպուտատներ, իսկ Գոհար Գասպարյանը՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ։

Հայրենիք վերադարձած հայերի հանդեպ ցուցաբերվող ամենօրյա հոգատարությունը արտասահմանյան հարյուր հազարավոր հայերի շրջանում ուժեղացնում է Հայաստան վերադառնալու ցանկությունը։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության Մինիստրների սովետը գործադրում են բոլոր միջոցները հայերի ներգաղթը արագացնելու համար։ Հայրենադարձների նոր քարավաններ ընդունելու նպատակով հանրապետության քաղաքներում և ավաններում կառուցվում են բնակելի նոր շենքեր, կուլտուր-կենցաղային օբյեկտներ և այլն։

Իրականացվող միջոցառումների ընդհանուր ծրագրում կարևոր նշանակություն է տրվում սփյուռքահայերի հետ հաստատված մշակութային կապերի ամ-

բապնդմանը։ 1964 թվականին ստեղծված սփյուռքահայության հետ մշակութային կապերի հայկական կոմիտեն, ծավալելով իր գործունեությունը, ընդլայնեց կապերը սփյուռքի հետ։ Հատուկ ուշադրություն է դարձվում սփյուռքահայ դպրոցների հետ կապերի սերտացմանը։ Սփյուռքի 24 գաղթօջախներում գործող 300 հայկական դպրոցներում մոտ 90 հազար հայ երեխաներ կրթություն էին ստանում մայրենի լեզվով։ Սովետական Հայաստանը նրանց ցույց է տալիս բազմակողմանի օգնություն։ Հանրապետության ժողովրդական կրթության օրգանները սերտ կապ են հաստատել սփյուռքահայ շատ դպրոցների հետ։ ՀՍՍՀ լուսավորության մինիստրությունը հայկական դպրոցների ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպում է կատարելագործման դասընթացներ։ Միայն 1965 թվականին այդ դասընթացներին մասնակցում էին 23 ուսուցիչ Լիբանանից, Սիրիայից, Հորդանանից, Կիպրոսից, Եթովպիայից, Ֆրանսիայից և ԱՄՆ-ից։

Սփյուռքահայ դպրոցների համար Հայաստանում հրատարակվում են դասագրքեր։ 1965 թվականին սփյուռքահայ 163 դպրոցների համար ուղարկվել են ութ անուն, 42 հազար օրինակ, դասագիրք և 10 հազար օրինակ (երկու հարյուր անուն) գեղարվեստական գրքեր։ Բացի դրանից, 1965 թվականին Սովետական Հայաստանից սփյուռք են ուղարկվել 92 հազար օրինակ տարբեր գրքեր, բազմաթիվ կինոնկարներ, ցուցադրական նյութեր և այլն։ 1965 թվականին Բեյրութ մեկնեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մորուս Հասրաթյանը։ Մեկուկես տարի նա հայագիտական թեմաներով դասախոսություններ կարդաց Հայկազյան վարժարանում և Երվանդ Հյուսյանի հայագիտական ամբիոնում։ Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ զեկուցումներով ու զրույցներով Մորուս Հասրաթյանը հանդես եկավ նաև Լիբանանի բազմաթիվ հայկական դպրոցներում։

Սփյուռքահայ գաղթօջախներ այցելեցին գրողներ Հր. Քոչարը, Ս. Խանչադյանը, բանաստեղծներ Ս. Կասպուտիկյանը, Հր. Հովհաննիսյանը, դրականագետ Էդ. Թոփչյանը և ուրիշներ, որոնք հանդիպումներ ունեցան սփյուռքի հայ աշխատավորության հետ և նրանց ծանոթացրին Սովետական Հայաստանի նվաճումներին։

Իրականացվող միջոցառումների կարևոր օղակներից է սփյուռքահայ մշակութային միությունների, ակումբների և առաջադիմական այլ կազմակերպությունների հետ կապերի ամրապնդումն ու ընդլայնումը։

Զարգացել են Սովետական Հայաստանի համապատասխան կազմակերպությունների և ստեղծագործական կոլեկտիվների կապերը Ֆրանսիայի և Բուլգարիայի հայ մշակութային միությունների, ԱՄՆ-ի հայկական առաջադիմական կազմակերպությունների, Լոնդոնի Հայ տան, Բեյրութի Թեքեյան մշակութային միության, Միլանի Հայ տան, Արգենտինայի Հայ մշակութային միության, Ուրուգվայի Հայ ազգային կենտրոնի հետ։ Վերջիններս աշխատանք են տանում տնտեսության, գիտության և մշակութային ասպարեզում Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները պրոպագանդելու ուղղությամբ, օգնում են հայրենադարձության գործին, կազմակերպում են հայ ժողովրդի մշակութային արժեքները հավաքելու և Սովետական Հայաստան ուղարկելու գործը։ Ֆրանսահայ մշակութային միությունը հայրենիք է ուղարկել գրողներ Զապել

Եսայանի, Արշակ Չոպանյանի, Վահան Մալեզյանի, Գեղամ Աթմաճյանի (Ա. Սեմա) արխիվները, քանդակագործ Գյուրջյանի ավելի քան երեք հարյուր աշխատանքները, Հովհաննես Այվազովսկու ավելի քան քառասուն կտավ։ Եգիպտոսից ստացվել է պատմաբան Արշակ Ալպոյաճյանի արխիվն ու գրադարանը։ Հայաստան ուղարկվեցին նաև Թորոս Աղատյանի, Վազգեն Շուշանյանի, Մերուժան Պարսամյանի և ուրիշների արխիվները։ Միայն գրականության թանգարանը մինչև 1968 թվականը սփյուռքից ստացել է 43 խոշոր արխիվ՝ 91.660 միավորով։

Սփյուռքահայ մարզիկների, երգիչների, երաժիշտների, գրողների և գիտնականների հաճախակի այցելությունները Սովետական Հայաստան նրանց ավելի է համոզում այն բանում, որ հայերի միակ հայրենիքը Սովետական Հայաստանն է, որտեղ ժողովուրդը ապրում է թե՛ հոգևոր և թե՛ ֆիզիկական վերածնունդ և որտեղ հայ ժողովրդի բազմադարյան մշակույթը հասել է նոր, աննախընթաց ծաղկման։

Սիրիայի ու Լիբանանի հայկական գաղթավայրերում ջերմ ընդունելություն գտան ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանի ղեկավարած հայկական ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլի ելույթները, իսկ Ալժիրում, Թունիսում, Իրանում, Մարոկկոյում, Իսրայելում մեծ հաջողությամբ հանդես եկավ հանրապետության ժողովրդական արտիստ Էդուարդ Մանուկյանի ղեկավարած Հայաստանի պարի պետական անսամբլը։

Հանրապետության պարբերական մամուլը նույնպես մեծ տեղ է հատկացնում սփյուռքի մեր հայրենակիցների հետ Սովետական Հայաստանի կապերի ամրապնդմանը։ «Ավանգարդ» թերթին կից գործում է «Միածան» ակումբը, որը կապ է պահպանում ավելի քան երեսուն սփյուռքահայ կազմակերպությունների, բազմաթիվ հայ ուսանողների հետ։ «Պիոներ կանչ» թերթը սփյուռքահայ դպրոցականների համար կազմակերպում է «Դուք ինչ գիտեք ձեր հայրենիքի մասին» թեմայով վիկտորինաներ։ Միայն 1965 թվականին հանրապետության լրագրողները սփյուռքահայ 82 թերթի և հանդեսի խմբագրություններին ուղարկել են 530 հոդված և ակնարկ՝ Սովետական Հայաստանի, հայրենադարձների կյանքի և այլ թեմաների շուրջը։

Սովետական Հայաստանի և սփյուռքահայ գաղթօջախների միջև կապերի ամրապնդման գործում կարևոր դեր է կատարում «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը, որը լույս է տեսնում 1966 թվականից։

Սովետական Հայաստանն իր գիրկն է ընդունում տարագիր որդիներին ու դուստրերին։ Նրանք կրում են Սովետական Միության քաղաքացու պատվավոր կոչումը, հանրապետության աշխատավորների հետ եռանդուն աշխատանք ծավալում իրենց սովետական հայրենիքի հետագա ծաղկման ու բարգավաճման համար։

Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները մեծ երախտագիտությամբ են լցված սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության նկատմամբ։ Այդ երախտագիտությունն էր արտահայտում 1966 թվականի ապրիլին Երևանում կայացած սովետական նոր քաղաքացիների հանրապետական ժողովի ողջույնի հեռագիրը, որն ուղղված էր Սովետական Միության կառավարությանը և կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին։

Մենք՝ աշխարհի զանազան երկրներից հայրենիք վերադարձած հայերս, Սովետական Միության նոր քաղաքացիներս,—ասված է այնտեղ,—մայիսյան տոնի նախօրյակին հավաքվելով հանդիսավոր ժողովի, հղում ենք երախտագիտական և շնորհակալական մեր անկեղծ խոսքը Սովետական Միության Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, ՍՍՀՄ Մինիստրների սովետին՝ հայրենի երկրում, հարազատ ժողովրդի հետ լինելու հնարավորությունը ընձեռելու, մեր նկատմամբ ցուցաբերվող ջերմ հոգատարության համար։

Ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայ մարդիկ ապրում են իրենց նոր, ծաղկող հայրենիքը վերադառնալու երազանքով ու ձգտումով։

Միայն սովետական կարգերի, լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ հնարավոր դարձավ մեր ազգային, հայրենասիրական իղձերի ու ցանկությունների իրականացումը։ Սովետական Հայաստանը հարազատ մոր նման իր գիրկն է ընդունում տարագիր որդիներին ու դուստրերին, որոնք հնարավորություն են ստացել կրելու Սովետական մեծ Միության քաղաքացու պատվավոր կոչումը, աշխատելու ու ստեղծագործելու մարդկության ամենապայծառ գաղափարների իրագործման նշանաբանով։

«...Ապրելով սովետական մարդկանց բազմամիլիոն ընտանիքում, մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, որ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գերագույն նպատակը աշխատավոր մարդու նկատմամբ հոգատարությունն է, ամբողջ աշխարհի խաղաղության պաշտպանումը։

...Գալով Սովետական Հայաստան՝ մեր նախնիների դարավոր ոսոսանը, մենք ձեռք բերեցինք մեծ հայրենիք՝ Սովետական Միությունը, որը աշխարհում առաջինն է կառուցում նոր, կոմունիստական հասարակարգ»[1]։

8. ՅՈԹՆԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Հայաստանի աշխատավորության համառ աշխատանքի ու պայքարի յոթ տարիները հասցրին տնտեսական և մշակույթի հետագա զարգացման, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման։ Սովետական մյուս հանրապետությունների հետ միասին Հայաստանը կարևոր առաջընթաց քայլ կատարեց կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։

Յոթնամյա պլանի կատարման արդյունքներն ամփոփեց Հայաստանի կոմկուսի XXIV համագումարը, որ կայացավ 1966 թվականի մարտին։ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, որով հանդես եկավ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը և Մինիստրների սովետի նախագահ Բ. Հ. Մուրադյանի՝ «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության 1966—1970 թվականների հնգամյա պլանի վերաբերյալ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին» զեկուցման մեջ համակողմանիորեն արտացոլված էին յոթնամյակում Հայկական ՍՍՀ աշխատավորության նվաճումները։

---

[1] «Սովետական Հայաստան», 1966, 5 մայիսի։

Յոթնամյակը նշանավորվեց արդյունաբերության արտադրանքի ավելացմամբ (2,2 անգամ), արդյունաբերության առաջատար նոր ճյուղերի՝ էլեկտրոնիկայի ու ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության ու գործիքաշինության, հաշվիչ մեքենաների արտադրության և այլ ճյուղերի ստեղծմամբ։

Յոթնամյակի տարիներին հանրապետությունում կառուցվեցին 300 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, արտադրական խոշոր արտադրամասեր և տեղամասեր։ Նոր ձեռնարկությունների շինարարությունը և եղածների կատարելագործումը թույլ տվեցին յուրացնել արտադրանքի 600 նոր տեսակների թողարկումը[1]։ Ասորտիմենտի ընդլայնմանը զուգընթաց՝ բարձրացավ արտադրանքի որակը, որի շնորհիվ աճեց Հայաստանում թողարկվող ապրանքների պահանջարկը ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Յոթնամյակի վերջում Հայաստանի 55 արդյունաբերական ձեռնարկություններ աշխարհի 69 երկրներ արտահանեցին 130 անուն արտադրանք, այդ թվում՝ ժամանակակից հաստոցներ, մեքենաներ, սարքեր, գինի, կոնյակ, պահածոներ և այլն։

Յոթնամյակի խոշորագույն նորակառույցներն էին Աթարբեկյանի և Երևանի հիդրոէլեկտրակայանները, Երևանի ջերմաէլեկտրակայանը, որոնք զգալիորեն հարստացրին հանրապետության էներգետիկ բազան։ Դա թույլ տվեց արդյունաբերության մեջ էլեկտրաէներգիայի օգտագործումն ավելացնել 1,5 անգամ, գյուղատնտեսության մեջ և կոմունալ-կենցաղային կարիքների համար՝ 2 անգամ։ Էլեկտրաէներգիայի օգտագործումն ավելացավ 1,8 անգամ[2]։ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները հիշյալ ժամանակաշրջանում կազմեցին 2.024 միլիոն ռուբլի, այսինքն՝ 1,5 անգամ ավելի, քան Հայաստանում սովետական իշխանության անցած 37 տարվա ընթացքում։

Արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողություններն արդյունք էին Հայաստանի բանվոր դասակարգի և արտադրական-տեխնիկական մտավորականության հերոսական աշխատանքի։ Կոմունիստական աշխատանքի համար շարժումը ծավալվեց, ընդունելով համաժողովրդական բնույթ։ Յոթնամյակի վերջում հայրենասիրական այդ նոր շարժման մեջ ընդգրկված էր շուրջ 57 հազար մարդ, 4944 բրիգադ, 952 արտադրական տեղամաս և հերթափոխություն, 91 ձեռնարկություն[3]։

Արդյունաբերական ձեռնարկությունների շատ կոլեկտիվներ անցան առաջավորների շարքը, նրանց մի մասն արժանացավ կառավարական պարգևների։

Յոթնամյակը լավ ցուցանիշներով ավարտեցին Քաջարանի հանքագործները։ Պղնձա-մոլիբդենային կոմբինատի կոլեկտիվը անցած յոթ տարվա ընթացքում 3,7 անգամ ավելացրեց արտադրության ծավալը, զգալի չափով

---

[1] Տե՛ս Բ. Հ. Մուրադյան, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿՊ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, Երևան, 1966, էջ 5—6։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 7։

[3] Տե՛ս Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 12։

բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, որի շնորհիվ ստացվեց 80 միլիոն ռուբլու շահույթ, որից 2,5 միլիոնը՝ արտապլանային։

Քաջարանցիների հերոսական աշխատանքն արժանացավ բարձր գնահատականի։ 1966 թվականի մայիսին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Բանվորների ու մասնագետների մի մեծ խումբ արժանացավ շքանշանների ու մեդալների։

Ձեռնարկության առաջավորներից են Լենինի շքանշանակիր, վարորդ Օնիկ Ավետիսյանը, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, էքսկավատորավար Արծրուն Առաքելյանը, վարպետ Արտեմ Աբրահամյանը, որը պարգևատրվեց Պատվո նշան շքանշանով և շատ ուրիշներ։

Առաջավոր ձեռնարկության փառք նվաճեց Հայաստանի քիմիայի առաջնեկը՝ Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը։ Յոթնամյա պլանի հաջող կատարման, բարձր որակական ցուցանիշների համար ձեռնարկությունը 1966 թվականին պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Գործարանի հարյուր բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ և ծառայողներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Ապարատավար, կոմունիստ Ս. Մ. Պետրոսյանն արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, իսկ մեխանիկական ցեխի բրիգադավար Հ. Ազիզյանը, կարբիդագործ Խ. Նազարյանը, ապարատավար Կ. Գևորգյանը և շատ ուրիշներ պարգևատրվեցին Լենինի շքանշանով։

Յոթնամյա պլանի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու և արտադրանքի թողարկումն ավելացնելու համար նույն թվականին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց նաև Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանը։ Էլեկտրամեքենաշինարարները յոթնամյակի առաջադրանքը կատարեցին ժամկետից շուտ և երկրին տվեցին 15 միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք։ Նրանք գեներատորների արտադրությունն ավելացրին 28 տոկոսով, շարժական էլեկտրակայաններինը՝ 16, ուժային տրանսֆորմատորներինը՝ 17 տոկոսով։ Գործարանում յուրացվեց 170 տեսակ բարդ արտադրանքների թողարկումը, եռապատկվեց արտասահման արտահանվող արտադրանքի քանակը։

Աշխատանքի հաջողությանը նպաստում էր արտադրության նորարարների ստեղծագործական նախաձեռնությունը։ Յոթնամյակի ընթացքում գործարանում ներդրվել էր 1540 ռացիոնալիզատորական առաջարկություն։ Այնտեղ աճել էր արտադրության առաջավորների մի մեծ ջոկատ։ Նրանցից շատերը, այդ թվում՝ հավաքող փականագործ Ս. Մխիթարյանը, մոնտաժող-փականագործ Վ. Մնացականյանը, կաղապարող Ի. Իսպիրյանը, փաթաթող բանվորուհի Վ. Գոլոշչապովան, բանվոր Ա. Կիրակոսյանը, զոդող Ժ. Հովհաննիսյանը և ուրիշներ արժանացան կառավարական բարձր պարգևների, իսկ փականագործ-գործիքաշինարար Ռոլանդ Մովսիսյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Յոթնամյակը արտադրական բարձր ցուցանիշներով ավարտեց նաև Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը, որը 1966 թվականի հունիսին պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի

շքանշանով։ Հեշտ ու հարթ չի եղել կոլեկտիվի անցած ուղին։ Ավելի քան չորս տասնամյակ Լենինականի տեքստիլագործները քայլ առ քայլ, բնագծից բնագիծ հասել են նոր հաջողությունների, ընդլայնել արտադրությունը, բարելավել արտադրանքի որակը։ Դժվարությունների ու թերությունների հաղթահարման համար մղված պայքարի ընթացքում դաստիարակվեցին բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների նորանոր կադրեր։ Կառավարական բարձր պարգևը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանը, ոչ միայն յոթնամյակում տեքստիլագործների կոլեկտիվի հերոսական ջանքերի և հաջողությունների ճանաչումն էր, այլև բոլոր այն մարդկանց աշխատանքի արժանի գնահատականը, ովքեր կոմբինատի ծննդյան օրերին կյանք էին տվել նորակառույց կորպուսներին, շահագործման հանձնել առաջին դազգահները, արտադրական տեղամասերը։ Այստեղ ծառայություն ունեին նաև Իվանովո-Վոզնեսենսկի տեքստիլագործները, որոնք 1922 թվականին Ալեքսանդրապոլի աշխատավորությանը նվիրեցին մի ամբողջ տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում և նրան հաղորդեցին իրենց հարուստ փորձը։

Կոմբինատը տարեկան թողարկում էր 85 միլիոն մետր գործվածք։ Կոլեկտիվի ձեռք բերած հաջողություններում մեծ էր շքանշանակիրներ՝ ջուլհակուհի Աշխեն Գրիգորյանի, մանող բանվորուհի Լենա Գասպարյանի, ենթավարպետ Արմենակ Ալեքսանյանի, ջուլհակուհի Եվգենիա Պապիկյանի վաստակը։

Շքանշանակիր դարձավ նաև Հայկական ՍՍՀ շինարարության մինիստրության Երքիմշին տրեստը։ Տրեստի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կոլեկտիվի ջանքերով են բարձրացել Ս. Մ. Կիրովի անվան գործարանի արտադրական նոր կորպուսները, պոլիվինիլացետատ գործարանը և մեծ քիմիայի այլ օբյեկտներ։

Արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի զարգացման հետ մեկտեղ աճեց բանվոր դասակարգը։ Յոթնամյակի առաջին տարում Հայաստանում հաշվվում էր 248.700 բանվոր։ Նրանցից արդյունաբերության, տրանսպորտի ու շինարարության մեջ աշխատում էր ավելի քան 218 հազար մարդ։ Հանրապետության արդյունաբերական-տրանսպորտային և շինարարական բանվորների մեկ հինգերորդ մասը կանայք էին[1]։

Արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի բանվորների ընդհանուր թվից շուրջ 108 հազար մարդ, այսինքն՝ ավելի քան կեսը՝ երիտասարդներ էին. այս փաստի մեջ արտահայտված է հանրապետության բանվոր դասակարգի աճման ու թարմացման օրինաչափ ընթացքը։

1965 թվականին Հայաստանում բանվորների թիվը հասավ 350 հազարի, երիտասարդ բանվորների տեսակարար կշիռը 1959—1965 թվականներին աճեց 21,5 տոկոսով[2]։ Հանրապետության բանվոր դասակարգի զարգացումն ընթանում էր բանվորական կադրերի տեղաբաշխման փոփոխություններով՝ պայմանավորված գերազանցապես արտադրության այս կամ այն ճյուղի

---

[1] Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1959 г., Армянская ССР», էջ 53—60, 66—70։

[2] Տե՛ս ՀՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ, ամփոփման բաժնի 1959—1965 թվականների նյութերը։

աճով։ 350 հազար բանվորից 1965 թվականին արդյունաբերության մեջ ընդգրկված էր 160 հազար, շինարարության մեջ՝ մոտավորապես 60 հազար, ավելի քան 40 հազար՝ տրանսպորտում և կապի սիստեմում և շուրջ 70 հազար բանվոր՝ գյուղատնտեսության մեջ[1]։ Գյուղատնտեսական բանվորների թվի աճը բացատրվում է մեծ քանակությամբ կոլտնտեսությունների վերակառուցումով սովխոզների, ինչպես նաև վերջին տարիներին քաղաքամերձ սովխոզների ցանցի զգալի ընդլայնումով։

Արդյունաբերության տեխնիկական առաջադիմությանը, արտադրության ավտոմատացմանը զուգընթաց յոթնամյակի ընթացքում փոխվեցին հանրապետության բանվոր դասակարգի շարքերը համալրող աղբյուրները։ Դրանց մեջ հիմնականը միջնակարգ դպրոցների շրջանավարտներն են, պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների ցանցը, որը տալիս է հազարավոր որակյալ բանվորներ՝ արդյունաբերության տարբեր ճյուղերի համար։ Յոթնամյակի սկզբում Հայաստանում կար 12 պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարան, որտեղ սովորում էր 2700 մարդ, իսկ յոթնամյակի վերջում գործում էր 35 ուսումնարան, որոնցում սովորում էին ավելի քան 11 հազար երիտասարդներ։ Այդ ուսումնարանները կադրեր էին պատրաստում ավելի քան 110 մասնագիտության գծով։ Յոթնամյակի տարիներին հանրապետության քիմիական, մեքենաշինական և մետալուրգիական արդյունաբերության համար բանվորական կադրերի շուրջ 60 տոկոսը տվել են պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանները[2]։

Հանրապետության բանվոր դասակարգի որակական աճի կարևոր ցուցանիշ էր նաև արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի թվի անշեղ ավելացումը։ Ժողովրդական տնտեսության մեջ 1965 թվականին հաշվվում էր ավելի քան 40 հազար ինժեներա-տեխնիկական աշխատող, որից շուրջ 30 հազարը ինժեներներ ու տեխնիկներ էին։ Յոթնամյակի ընթացքում ինժեներա-տեխնիկական անձնակազմը աճեց 40 տոկոսով[3]։

Հայաստանի բանվոր դասակարգի համար բնորոշ է այն, որ նրա աճը տեղի է ունենում ազգային կադրերի հաշվին։ 1965 թվականի վերջին բանվորների 82 տոկոսը հայեր էին, մյուսները՝ ռուսներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ և ուրիշ ազգությունների ներկայացուցիչներ։

Բարձր արտադրական ցուցանիշների համար արդյունաբերության տարբեր ճյուղերի, տրանսպորտի և շինարարության հարյուրավոր բանվորներ արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, կառավարական բարձր պարգևների, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերի։ Արարատի ցեմենտա-թերթաքարային կոմբինատի վերանորոգող փականագործների բրիգադավար Մինաս Խաչերեսովը, Լենինականի մասնագիտացված շինարարական-մոնտաժային վարչության մոնտաժող-փականագործների բրիգադավար Միքայել Պետրոսյանը, Անդրկովկասյան երկաթուղու Լենինականի ազդանշանային կապի ավագ էլեկտրամեխանիկ Սարգիս Գևորգյանը,

---

[1] Տե՛ս ՀՍՍՀ Կենտրոնական վիճակագրական վարչության ընթացիկ արխիվ, ամփոփման բաժնի 1959—1965 թվականների նյութերը։

[2] Տե՛ս նույն տեղում։

[3] Տե՛ս նույն տեղում։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի երկրաբանական վարչության Մեղրու երկրաբանական-հետախուզական խմբի հորատող Վլադիմիր Ամիրխանյանը, Երևանի գինու կոմբինատի բրիգադավար Արփիկ Ֆրանգուլյանը, Երևանի մետաքսի կոմբինատի ջուլհակուհի Մաղկանուշ Գալեմերյանը և ուրիշներ արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Արտադրական ուռաջադրանքների գերակատարում, արտադրանքի գերազանց որակ, մասնագիտական որակավորման շարունակաբար բարձրացում—ահա այն ընդհանուրը, որ բնորոշ էր յոթնամյակի հերոսների համար։

Յոթնամյակում որոշակի հաջողություններ հասան նաև Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսության ճակատի աշխատողները։ 11,2 հազար հեկտարով ընդլայնվեցին խաղողի և 15,8 հազար հեկտարով՝ պտղատու այգիները։ Ջրարբիացվեց 144 հազար հեկտար խոտհարք[1]։

Յոթնամյակի վերջին երկու տարում գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացավ 19,6 տոկոսով, բարձրացավ մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների, այդ թվում՝ հացահատիկի, խաղողի և շաքարի ճակնդեղի բերքատվությունը։

Գյուղատնտեսության հարյուրավոր առաջավորներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։ 1965 թվականին կառավարական բարձր պարգևների արժանացավ Ախուրյանի և Սպիտակի շրջանների ճակնդեղագործների մի մեծ խումբ։ Ախուրյան գյուղի կոլտնտեսության ճակնդեղագործուհի Մարուսյա Շահբազյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Հոկտեմբերյանի շրջանի «Նաիրի» սովխոզի երիտասարդ այգեգործ Աղվան Մնացականյանը գլխավորում էր սովխոզի ետ մնացող բրիգադներից մեկը։ Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, անձնական օրինակը օգնեցին նրան՝ բրիգադը դուրս բերելու առաջավորների շարքը։ Աղվան Մնացականյանի բրիգադը հինգ տարի շարունակ՝ 1961—1965 թվականներին, անընդմեջ եղել է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի մասնակից։ 1963-1965 թվականներին նրա բրիգադը յուրաքանչյուր հեկտարից ստացավ 153 ցենտներ միրգ։ Բարձր ցուցանիշների համար բրիգադի շատ անդամներ արժանացան կառավարական պարգևների, իսկ բրիգադավար Աղվան Մնացականյանը՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Հայաստանում հանրային հոտի գլխաքանակը յոթնամյակում աճեց՝ խոշոր եղջերավոր անասուններինը՝ 1,1, իսկ մանրինը՝ մոտ 11 տոկոսով[2]։ Լավ ցուցանիշներ ունեին Ստեփանավանի, Կալինինոյի, Շահումյանի, Ղուկասյանի, Գուգարքի և Մարտունու շրջանների կոլտնտեսություններն ու սովխոզները։ Նրանք գերակատարեցին մսի, կաթի ու բրդի մթերման յոթնամյա պլանը։ Հանրապետության առաջավոր անասնապահների մի մեծ խումբ արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Դրանց մեջ էին՝ Թալինի շրջանի Ալագյազի սովխոզի ավագ հովիվ Մնացա-

---

1 Տե՛ս Բ. Հ. Մուրադյան, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿՊ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, էջ 7։

2 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», էջ 119։

կան Առաքելյանը, Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղի կոլտնտեսության կթվորուհի Լենա Ասատրյանը, Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի կոլտնտեսության ավագ հովիվ Մելիք Թունյանը, Ղուկասյանի շրջանի Ղազանչիի սովխոզի կթվորուհի Աստղիկ Հովյանը, Կալինինոյի շրջանի Սարատովկա գյուղի կոլտնտեսության հորթապահ Տատյանա Յակուշևան, Բասարգեչարի շրջանի Զարբխանդ գյուղի կոլտնտեսության ավագ հովիվ Նաբի Մամեդովը։

Յոթնամյակի տարիներին տեղի ունեցավ կոլտնտեսային-սովխոզային մասնագիտական կադրերի հետագա աճ, բարձրացավ գյուղատնտեսության աշխատողների դիտելիքների մակարդակը, հարստացավ նրանց աշխատանքի փորձը։ 1965 թվականին կոլտնտեսություններում աշխատում էր ավելի քան 1970 գյուղատնտես, անասնաբույծ, ագրոտեխնիկ, ինժեներ և տեխնիկ։ Կոլտնտեսությունների նախագահների 70 տոկոսն ուներ բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթություն։

Յոթնամյակի վերջում Հայաստանի ամբողջ գյուղատնտեսության մեջ ընդգրկված էր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ ավելի քան վեց հազար մասնագետ, որոնցից մոտավորապես չորս հազարն ուներ գյուղատնտեսական կրթություն։

Կուսակցական ու սովետական մարմինները զգալի աշխատանք կատարեցին կոլտնտեսությունները փորձված ղեկավար կադրերով ապահովելու համար։ Գյուղատնտեսության լավագույն կազմակերպիչներից է Շամշադինի շրջանի Մոլսեսգեղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսության նախագահ Սեդրակ Պապյանը։ Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի սանը 1964 թվականի հունվարին ընտրվեց այդ կոլտնտեսության նախագահ։ Կոլտնտեսությունը ետ էր մնում։ Համառ աշխատանքը, կոլտնտեսային արտադրության խելացի կազմակերպումը տվեցին դրական արդյունքներ։ Նույն թվականին կոլտնտեսության ծխախոտագործները 150 հեկտար պլանտացիաներից պետությանը վաճառեցին 452 տոննա հումք, մեծ չափով գերակատարելով պլանային նախատեսումները։ Կոլտնտեսության տարեկան ընդհանուր եկամուտը կազմեց 1 միլիոն 120 հազար ռուբլի։ Հաջորդ տարին կոլտնտեսության ցուցանիշներն ավելի աճեցին։ Նրա դրամական եկամուտը հասավ մեկ միլիոն 160 հազար ռուբլու։ Յոթնամյակի վերջին երկու տարում աշխատանքի դիմաց մեկ կոլտնտեսականին տրված միայն դրամական վարձատրությունը ամսական կազմեց 110—120 ռուբլի[1]։ Կոլտնտեսության ղեկավարի անձնվեր աշխատանքն արժանացավ բարձր գնահատականի։ 1966 թվականի մայիսին Սեդրակ Պապյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Իրենց լավագույն աշխատանքով աչքի ընկան նաև Կալինինոյի շրջանի Նորաշեն գյուղի կոլտնտեսության նախագահ Անդրանիկ Մանուկյանը, Վեդու շրջանի Ս. Մ. Կիրովի անվան սովխոզի դիրեկտոր Վազգեն Ստեփանյանը, Նոյեմբերյանի շրջանի «Հաղթանակ» սովխոզի բրիգադավար Սոսիկ Բեջանյանը, Մեղրիի կոլտնտեսության օղակավար Հակոբ Ջավադյանը, որոնք պարգևատրվեցին Լենինի շքանշանով։

---

[1] Տե՛ս «Коммунист», 1966, 28 մայիսի։

9. ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

ՍՍՀՄ զարգացման նոր փուլը բնութագրվում է նրանով, որ արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքը հնարավորություն է տալիս անընդհատ ընդարձակել ժողովրդի բարեկեցության բարելավման բազան։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը կարևոր միջոցառումներ իրագործեցին ժողովրդի նյութական և կուլտուրական բարեկեցության բարձրացման բնագավառում։ Ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը պայմանավորված է երկրի ազգային եկամտի աճով։ 1958 թվականին ՍՍՀՄ ազգային եկամուտը 1950 թվականի համեմատությամբ աճեց 249 տոկոսով։ Սովետական պետությունը երկրի ազգային եկամտի երեք քառորդը տրամադրեց ծախսերի, իսկ մեկ քառորդը՝ եկամուտների ֆոնդին։ Բնակչության ռեալ եկամուտների աճման համար էական դեր խաղաց հարկերի հետևողական իջեցումը։ Առաջին հերթին իջեցվեցին գյուղատնտեսական հարկերը։ Սոցիալիստական շինարարության նախորդ տարիներին բնակչությունը բաժնեգրվում էր պետական փոխառությանը։ Սովետական քաղաքացիները բաժնեգրումը դիտում էին որպես քաղաքացիական վեհ պարտականություն։ Սոցիալիստական արտադրության վերելքի շնորհիվ փոխառության բաժնեգրումը աստիճանաբար կորցրեց իր կարևորությունը։ Այսպիսի պայմաններում անհրաժեշտություն զգացվեց վերացնել պետական փոխառության բաժնեգրությունը։ 1958 թվականից պետական փոխառության թողարկումը դադարեցվեց։ Դրան զուգընթաց ավելացավ ռեալ աշխատավարձի ֆոնդը։ Նյութական բարեկեցության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեցավ պետական ձեռնարկությունների աշխատողների պարգևատրման ֆոնդի մեծ աճը։ Այդ ֆոնդի գումարը 1958 թվականին կազմեց շուրջ 29 միլիարդ ռուբլի, իսկ յոթնամյակի վերջում հասավ 35 միլիարդ ռուբլու։

Միլիոնավոր աշխատավորների կենսամակարդակի բարձրացման կարևոր միջոցառումներից էր թոշակների արմատական կարգավորումը։ ՍՍՀՄ Գերագույն սովետը 1956 թվականի հունիսի 14-ին ընդունեց օրենք, որի շնորհիվ մեծ չափով ավելացավ թոշակավորման ֆոնդը։ Մերության համար նույնպես սահմանվեցին թոշակի համապատասխան չափեր։ Պետական թոշակների վճարման նոր օրենքը մեծապես բարելավեց աշխատանքային և պատերազմի հաշմանդամների նյութական վիճակը։

Բնակչության ռեալ եկամուտների աճման գործում կարևոր նշանակություն ունեցավ սովետական կառավարության քաղաքականությունը գների իջեցման բնագավառում։ 1956—1965 թվականներին իջեցվեցին մանկական և բամբակե գործվածքից հագուստի, ալյումինե ամանեղենի, ռադիոապարատների, հեռուստացույցների, ֆոտոապարատների, դեղորայքի, ժամացույցների, ձկան և բանջարեղենի պահածոների, խոզի ապուխտի, հացի հատային տեսակների և այլ ապրանքների գները, որի շնորհիվ միայն 1956—1965 թվականներին բնակչության օգուտը կազմեց ավելի քան 50 միլիարդ ռուբլի։

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ցայտուն ապացույց է աշխատավորների պահանջների անընդհատ աճը։ Բանվորների ընտանիքներում միայն 1956—1957 թվականներին մսի սպառումը աճեց ավելի քան 25,

ձկնեղենինը՝ 11, կաթնեղենինը՝ 36, շաքարինը՝ 15, ձվինը՝ 46 տոկոսով։ Հետագա տարիներին նշված մթերքների պահանջն էլ ավելի աճեց։ Թեև արդյունաբերության և լայն սպառման ապրանքների արտադրությունը զգալի չափով ավելացավ, բայց և այնպես առանձին ապրանքների (սառնարաններ, հեռուստացույցներ, լվացքի մեքենաներ, կահույք և այլն) նկատմամբ բնակչության պահանջը լրիվ չէր բավարարվում։ Մեծ աշխատանք կատարվեց նաև բնակարանային շինարարության, բնակչության կուլտուր-կենցաղային, բժշկական սպասարկման և ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման ուղղությամբ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մի շարք միջոցառումներ իրագործեցին բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձի բարձրացման և կոլտնտեսականների եկամուտների ավելացման ուղղությամբ։ Այդ տեսակետից ուշագրավ են հատկապես ցածր վարձատրվող բանվորների ու ծառայողների աշխատավարձը բարձրացնելու, կենսաթոշակներն ավելացնելու և փոխառության վճարումները նվազեցնելու միջոցառումները, որոնց շնորհիվ Հայկական ՍՍՀ աշխատավորների եկամուտը միայն 1957 թվականին ավելացավ 365 միլիոն ռուբլով[1]։

Զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև կոլտնտեսականների կյանքում։ Միայն գյուղատնտեսական մթերքների մթերումների չափերն իջեցնելու, մթերման ու գնման գները բարձրացնելու շնորհիվ հանրապետության կոլտնտեսությունների և կոլտնտեսականների եկամուտները 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, ավելացան մի քանի տասնյակ միլիոն ռուբլով։

Սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը հատուկ ուշադրություն ցուցաբերեցին հայրենադարձ հայերի նկատմամբ։ Ձիջվեց հայրենադարձների անհատական բնակարանային շինարարության համար տրամադրված վարկերի ապառքը 140 միլիոն ռուբլի գումարով։

Աշխատավորների ռեալ եկամուտների ավելացման շնորհիվ զգալի չափով բարձրացավ հանրապետության բնակչության գնողունակությունը։ Մանրածախ ապրանքների շրջանառության ծավալը 1957 թվականին աճեց 23,3 տոկոսով։ Ըստ որում ապրանքաշրջանառության մեջ ավելացավ բարձրորակ և թանկարժեք ապրանքների վաճառքը։ 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, հանրապետությունում մանրածախս ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը աճեց 322 միլիոն ռուբլով[2]։

1956 թվականից սկսած հանրապետությունում արագ ծավալվեց բնակարանային շինարարությունը։ Միայն 1956—1958 թվականներին Սովետական Հայաստանի պետական ձեռնարկություններն ու հիմնարկները կառուցեցին ու շահագործման հանձնեցին 398 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Նույն ժամանակամիջոցում գյուղական վայրերում կառուցվեց ավելի քան 27,7 հազար բնակելի տուն[3]։ «ՍՍՀՄ-ում բնակարանային շինարարությունը զարգացնելու մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարու-

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան» 1958, 26 հունվարի։

[2] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», էջ 209։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 181։

թյան որոշման համապատասխան մշակվեց 1956—1960 թվականներին Սովետական Հայաստանում բնակարանային շինարարությունը ընդլայնելու ծրագիր։

Զգալիորեն բարելավվեց հանրապետության բնակչության բժշկական սպասարկումը։ Միայն 1956—1957 թվականներին Հայաստանի քաղաքներում կառուցվեց 7 նոր հիվանդանոց՝ 870 մահճակալով, գյուղական վայրերում՝ 19 հիվանդանոց՝ 450 մահճակալով։ Հիվանդանոցային մահճակալների քանակը 1958 թվականին ավելացավ 950-ով. յուրաքանչյուր 10 հազար մարդուն հասնում էր 86 մահճակալ՝ 1955 թվականի 58-ի դիմաց[1]։

Զգալիորեն աճեց Հայկական ՍՍՀ պետական բյուջեն, որը 1958 թվականին եկամուտների գծով կազմում էր 2.577.340 հազար, իսկ ծախսերի գծով՝ 2.554.064 հազար ռուբլի։ 1957 թվականի կատարողականի համեմատությամբ 1958 թվականին պետական բյուջեն աճեց 13,6 տոկոսով[2]։ 1958 թվականին սոցիալական ապահովագրության և կուլտուր-կենցաղային միջոցառումների համար Հայկական ՍՍՀ բյուջեով նախատեսվող հատկացումներն աճեցին 12,7 տոկոսով։

Հատկապես բարձրացավ աշխատավորների նյութական բարեկեցությունը և կուլտուրական մակարդակը։ Բանվորների և ծառայողների թիվը յոթնամյակում աճեց 267 հազարով կամ 74 տոկոսով, 1965 թվականին հասնելով 628 հազարի[3]։

Յոթնամյակում ազգային եկամուտն աճեց 76 տոկոսով[4], որը հնարավորություն տվեց ավելացնել ժողովրդի բարեկեցության բարձրացման նպատակին ուղղված հատկացումները։ Միջին հաշվով 26,2 տոկոսով աճեց ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող ավելի քան 162 հազար բանվոր-ծառայողների աշխատավարձը։ Աշխատավորների դրամական եկամուտներն ավելացան 1,9 անգամ[5]։

Յոթնամյակը բնակարանային և կոմունալ-կենցաղային ձեռնարկությունների ծավալուն շինարարության ժամանակաշրջան էր։ Այդ տարիներին Հայաստանում կառուցվեց մոտ 4,3 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն[6]։

1965 թվականին Հայկական ՍՍՀ բնակչության թիվը 2,2 միլիոն էր, այսինքն՝ 500 հազարով ավելի, քան 1959 թվականի հունվարին[7]։ Այդ հավելումը տեղի էր ունեցել գերազանցապես բնական աճի հաշվին, որը բնակչության բարեկեցության բարձրացման արդյունք էր։

---

[1] Տե՛ս «Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը», «Սովետական Հայաստան», 1958, 31 հունվարի։

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1958, 31 հունվարի։

[3] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1965, 6 փետրվարի։

[4] Տե՛ս Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 44.

[5] Տե՛ս Բ. Հ. Մուրադյան, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿՊ XXIII համագումարի դիրեկտիվների նախագծի մասին, էջ 8։

[6] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», էջ 181։

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 340։

* * *

Ամբողջ սովետական ժողովրդի համար յոթնամյակը աշխատանքային նոր հաղթանակների ժամանակաշրջան էր։ Կառուցվեցին հազարավոր կիլոմետր երկաթուղային մագիստրալներ, նավթամուղներ, գազամուղներ և էլեկտրահաղորդման բարձր լարվածության գծեր։ Շարք մտավ շուրջ 5,5 հազար արդյունաբերական նոր ձեռնարկություն։ Սովետական Միությունը առաջատար դիրքեր գրավեց տիեզերական տարածության հետազոտություններում, միջուկային ֆիզիկայի, մաթեմատիկայի, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի, մետալուրգիայի, ինքնաթիռաշինության և գիտության ու տեխնիկայի մի շարք այլ ասպարեզներում։ Սովետական գիտնականների, ինժեներների և տեխնիկների ջանքերով մշակվեցին և արտադրության մեջ ներդրվեցին մեծ քանակությամբ տեխնիկական նոր սարքավորումներ՝ մեքենաներ, հաստոցներ, ավտոմատիկ հարմարանքներ, կոնվեյերային սիստեմներ։ Արդյունաբերության արտադրության ծավալը, յոթնամյա պլանով նախատեսված 80 տոկոսի փոխարեն, աճեց 84 տոկոսով, 1,9 անգամ ավելացան ժողովրդական տնտեսության հիմնական արտադրական ֆոնդերը։

Սոցիալիստական աշխատանքի հերոս
Հ. Սիճաեյան

Աճել էր նաև գյուղատնտեսության արտադրանքը, չնայած իր զարգացման տեմպերով յոթնամյակի տարիներին այն զգալիորեն ետ էր մնում արդյունաբերությունից։

Յոթնամյակի տարիներին ՍՍՀՄ քաղաքներում և գյուղերում կառուցվեցին մոտ 17 միլիոն բնակարաններ և անհատական տներ, որը կազմում է յոթնամյակի սկզբում երկրում եղած բնակարանային ֆոնդի շուրջ 40 տոկոսը։

Ամփոփելով ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի կատարման արդյունքները, 1966 թվականի մարտ-ապրիլին տեղի ունեցած ՍՄԿԿ XXIII համագումարը նշեց, որ ձեռք բերած հաջողությունների շնորհիվ «կարևոր քայլ արվեց կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին»[1]։ Ավելի ամրապնդվեց Սովետական Միության միջազգային դիրքն ու հեղինակությունը։

---

[1] «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 297։

Այդ հաջողություններին զուգընթաց յոթնամյա պլանը մի շարք կարևոր ցուցանիշների գծով թերակատարվեց։ Դա առաջին հերթին վերաբերում է գյուղատնտեսությանը, որի արտադրանքը յոթնամյակի ընթացքում ավելացավ միայն 14 տոկոսով[1]։ Գյուղատնտեսության ետ մնալը սկսել էր նկատելիորեն դանդաղեցնել տնտեսության առաջընթացը, բացասաբար էր ազդում թեթև ու սննդի արդյունաբերության աճի տեմպերի վրա, դժվարացնելով ժողովրդի կենսապայմանների բարելավմանը նպաստող ավելի լայն միջոցառումների իրականացումը։

Յոթնամյա պլանի իրագործման ընթացքում ծանր արդյունաբերության առանձին ճյուղերի զարգացման մեջ ի հայտ եկավ որոշ անհամամասնություն, որը հասցրեց քիմիական արդյունաբերության մի շարք արտադրանքների, քարածխի, մեքենաների և սարքավորումների, ժողովրդական սպառման որոշ ապրանքների պլանի թերակատարման։ Թերակատարվեց նաև արդյունաբերության մի շարք ճյուղերում նոր ձեռնարկությունները ժամանակին շահագործման հանձնելու պլանը, որը հանգեցրեց աղգային եկամտի աճի տեմպերի իջեցման։

Համագումարը նշեց, որ չնայած այդ ամենին, յոթնամյակը կարևոր էտապ հանդիսացավ կոմունիստական շինարարության մեջ։ Յոթնամյակի հաջողությունները հնարավորություն տվեցին մշակելու ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման նոր ծրագիր։

ՍՄԿԿ XXIII համագումարը քննարկեց և ընդունեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի դիրեկտիվները։ Նոր հնգամյակում նախատեսվում է հասնել ժողովրդական տնտեսության զարգացման, բոլոր ճյուղերի աճման, սովետական ժողովրդի կուլտուր-կենցաղային մակարդակի հետագա բարձրացման։

Նոր հնգամյակի ընթացքում Հայաստանում տեղի է ունենալու գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, ճշգրիտ մեքենաշինության, թեթև և սննդի արդյունաբերության հետագա զարգացում։ Արդյունաբերության արտադրանքի ծավալն ավելանալու է մոտավորապես 1,8, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 2,3 անգամ[2]։

Իրագործվելու է խաղողի, մրգերի, բանջարեղենի, էֆիրայուղային մշակույթների և ծխախոտի արտադրության ավելացում, ոռոգելի հողերի հետագա ընդարձակում։

Սովետական ամբողջ ժողովուրդը, այդ թվում Հայաստանի աշխատավորությունը պայքար ծավալեց ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումների կենսագործման համար։

---

1 Տե՛ս «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 55։

2 Տե՛ս «Известия», 1966, 10 ապրիլի։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհը 1938 թվականի նոյեմբերին հատուկ որոշում ընդունեց «Սոցիալիստական քաղաքների և ավանների շինարարության և հին քաղաքների վերակառուցման մասին»։ Այդ որոշման մեջ նշված են հանրապետության հին քաղաքների վերակառուցման և սոցիալիստական նոր քաղաքների ստեղծման ու հետագա զարգացման հիմնական խնդիրները։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին Երևանում զարգացավ քիմիական, մեքենաշինական, թեթև ու սննդի արդյունաբերությունը, Լենինականում՝ տեքստիլ, Կիրովականում՝ քիմիական, իսկ Ալավերդում և Ղափանում՝ պղնձարդյունաբերությունը։ Հանրապետությունում տարեցտարի ավելացավ քաղաքային բնակչությունը։

Նախապատերազմյան տարիներին բուռն զարգացում ապրեցին և քաղաքների վերածվեցին Կիրովականը, Ալավերդին, Ղափանը, Գորիսը, Դիլիջանը, Ստեփանավանը և Էջմիածինը, իսկ Անիպեմզան, Արզնին, Ախթալան, Քոլագերանը և Շամլուղը դարձան քաղաքատիպ ավաններ։

Արդյունաբերության զարգացման շնորհիվ հանրապետության քաղաքներում և բանվորական ավաններում տարեցտարի աճում էր բնակչությունը, իսկ եղած բնակարանային ֆոնդը չէր բավարարում բանվոր-ծառայողների պահանջները։ Այդ պատճառով քաղաքաշինության հիմնական հարցը դառնում էր բնակարանային շինարարությունը։

1921—1928 թվականներին Հայաստանում բնակարանային շինարարությանը հատկացվել է 3,1 միլիոն ռուբլի։ Այդ գումարով Երևանում, Լենինականում, Ղափանում և այլ վայրերում կառուցվեցին մեծ մասամբ երկու և երեք հարկանի բնակելի շենքեր՝ ավելի քան 200 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։

Առաջին հնգամյակում հանրապետության բնակարանային շինարարությանը հատկացվել է 4,4 միլիոն, իսկ երկրորդ հնգամյակում՝ 19,6 միլիոն ռուբլի։

Նախապատերազմյան տարիներին հիմնադրվեցին Երևանի Կիրովի անվան գործարանի, Լենինականի Մայիսյան ապստամբության և Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատների բանվորական ավանները, որոնք հետագա տարիներին արագ կերպով զարգացան։ 1921—1941 թվա-

կաններին կառուցվել է 1.120 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն[1]։

Պետական միջոցներով կառուցվող բնակարանային շինարարությանը զուգընթաց լայն ծավալ ստացավ անհատական բնակարանային շինարարությունը։ Պետական և անհատական բնակարանային շինարարության հետ նախապատերազմյան տարիներին շահագործման հանձնվեցին բազմաթիվ հասարակական շենքեր՝ ակումբներ, գրադարաններ, կուլտուրայի պալատներ, կինո-թատրոններ, հիվանդանոցներ, ինչպես նաև առևտրական օբյեկտներ և կենցաղ-սպասարկման արհեստանոցներ։ Լայն ծավալ ընդունեց դպրոցաշինարարությունը։

Ժողովրդական տնտեսության արագ զարգացման կապակցությամբ 1931 թվականի հունիսին Համկ(բ)կ Կենտկոմի պլենումը որոշեց արագացնել քաղաքային տնտեսության զարգացման տեմպերը։ Ելնելով կուսակցության այդ կարևոր պահանջից, Հայկական ՍՍՀ-ում քաղաքաշինության հիմնական հարցը դարձավ ոչ միայն բնակարանային և հասարակական շենքերի շինարարությունը, այլև քաղաքային տնտեսության զարգացումը։

Հանրապետության քաղաքներում և քաղաքատիպ ավաններում ջրատարի փողոցային միագիծ երկարությունը հասավ 122, իսկ կոյուղունը՝ 36 կիլոմետրի։ Շահագործման հանձնվեցին բաղնիքների, լվացքատների, հյուրանոցների բազմաթիվ շենքեր։ Հանրապետության քաղաքներում և բանվորական ավաններում ընդարձակվեց կապի ցանցը, սահմանվեց էլեկտրաքարշային և ավտոբուսային երթևեկությունը։ Տարեցտարի բարեկարգվեցին, լուսավորվեցին և կանաչապատվեցին փողոցներն ու հրապարակները։ Որոշ քաղաքների շուրջը ստեղծվեցին անտառային գոտիներ։

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանում չդադարեցին շինարարական աշխատանքները։ Կառուցվեցին արդյունաբերական մի շարք խոշոր ձեռնարկություններ, որոնք աշխատում էին ռազմաճակատի համար։ Շահագործման հանձնվեց 75 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Պատերազմի տարիներին Երևանում կառուցվեցին «Արարատ» տրեստի դինու գործարանի պահեստները, «Հաղթանակ» կամուրջը Հրազդան գետի վրա, Սպանդարյան փողոցից դեպի մանկական երկաթուղի տանող թունելը։

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո սովետական ժողովուրդն արագ կերպով վերականգնեց գերմանա-ֆաշիստական զավթիչների կողմից ավերված քաղաքները, բանվորական ավաններն ու գյուղերը։

Արդյունաբերության զարգացման շնորհիվ Հայաստանում ստեղծվեցին սոցիալիստական նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ։ Շարունակվում էր ավելի վաղ ծնունդ առած քաղաքների զարգացումը։ Ավելանում էր քաղաքային բնակչությունը, աճում բանվոր-ծառայողների տեսակարար կշիռը քաղաքային բնակչության մեջ։

Ետպատերազմյան հնգամյակների տարիներին Երևանում զարգացան քիմիական արդյունաբերությունը, սարքաշինությունը, հաստոցաշինությունը,

---

[1] Այս գլխի որոշ տվյալներ վերցված են Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչությունից։

ճշգրիտ մեքենաշինությունը, մասնավորապես էլեկտրամեքենաշինությունը։ Երևանը դարձել է ինդուստրիալ խոշոր կենտրոն, որը տալիս է հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 70 տոկոսը։ Երևանում արտադրվող զանազան տիպի կոմպրեսորներ, տրանսֆորմատորներ, գեներատորներ, հիդրոտուրբիններ և հաստոցների բազմաթիվ տեսակներ ուղարկվում են ոչ միայն մեր եղբայրական սովետական հանրապետությունները, այլև արտասահման։

Լենինականում հիմնադրվեց մեքենաշինական, սարքաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերություն։

Կիրովականում զարգացան քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, ավտոմատիկան, ճշգրիտ հաստոցաշինությունը և արհեստական մետաքսաթելի արտադրությունը։ Արդյունաբերական ձեռնարկությունների հիմնադրման շնորհիվ երկու հազար բնակիչ ունեցող նախկին Մեծ Ղարաքիլիսա գյուղը դարձավ սոցիալիստական բարեկարգ քաղաք՝ 70 հազար բնակչով։ Կիրովականը հանրապետության արդյունաբերական և տեխնիկական առաջադիմության կարևորագույն կենտրոններից է։

Պղնձա-մոլիբդենային և մասամբ քիմիական արդյունաբերության զարգացման կապակցությամբ Ալավերդի և Ղափան բնակավայրերը դարձան քաղաքներ, իսկ Շամլուղն ու Ախթալան՝ քաղաքատիպ ավաններ։ Զանգեզուրի լեռների լանջերին ծնվեցին ու զարգացան Քաջարան քաղաքը, Ագարակ և Դաստակերտ բանվորական ավանները, որոնց արդյունաբերությունն ունի միութենական նշանակություն։

Տուֆ քարի արտադրության կապակցությամբ Արթիկ վոքրիկ գյուղը վերածվեց սոցիալիստական քաղաքի։ Ցեմենտ-շիֆերի, հրակայուն աղյուսի և շինարարական այլ նյութերի արտադրության աճման հիման վրա առաջացան ու զարգացան Արարատ քաղաքը, Անիպեմզա, Թումանյան և Պեմզաշեն քաղաքատիպ ավանները։

Սննդարդյունաբերության ընդլայնումը խթանեց Էջմիածնի, Արտաշատի, Աշտարակի, Հոկտեմբերյանի, Սպիտակի, Սևանի, Մեղրու, Ստեփանավանի և Կալինինոյի զարգացմանը։

Ավարտվեց Սևանի կասկադի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ Սևան և Հրազդան բնակավայրերը վերածվեցին քաղաքների, իսկ ամայի տարածություններում առաջացան ու զարգացան Չարենցավան (նախկին Լուսավան), Աբովյան քաղաքները, Արզնի, Նոր Հաճըն, իսկ Զորագեսի շուրջը՝ Թումանյան և Քոլագերան քաղաքատիպ ավանները։ Արդյունաբերական կենտրոնների հետ միասին Հայաստանում զարգացան Դիլիջան, Ջերմուկ կուրորտային քաղաքները և Արզնի, Ծաղկաձոր և Հանքավան կուրորտային ավանները։

Սովետական Հայաստանի 23 քաղաքներից Երևանը, Լենինականը, Կիրովականը, Դիլիջանը, Ալավերդին, Ղափանը, Արթիկը, Կամոն, Հրազդանը, Հոկտեմբերյանը, Սևանը, Ջերմուկը և Էջմիածինը հանրապետական ենթակայության քաղաքներ են, իսկ Արարատը, Ստեփանավանը, Գորիսը, Իջևանը, Սպիտակը, Քաջարանը, Չարենցավանը, Արտաշատը, Աշտարակը և Աբովյանը՝ շրջանային ենթակայության քաղաքներ։ Վերոհիշյալ քաղաքներից բացի,

առաջացան 27 քաղաքատիպ ավաններ՝ Անիպեմզա, Ազիզբեկով, Ապարան, Ագարակ, Արզնի, Ախթալա, Այրում, Բերդ, Գագարին, Դաստակերտ, Եղեգնաձոր, Թումանյան, Կալինինո, Քոլագերան, Լուսակերտ, Մարտունի, Մարալիկ, Մեղրի, Նոր Հաճըն, Նոր Կյանք, Պեմզաշեն, Սիսիան, Սովետաշեն, Վեղի, Ծաղկաձոր, Շամլուղ և Վերին Թալին։

Տարեցտարի աճում է Հայկական ՍՍՀ քաղաքային բնակչությունը։

1920 թվականին քաղաքային բնակչությունը կազմում էր Հայաստանի բնակչության 17, 1939 թվականին՝ 29, իսկ 1965 թվականին՝ 55 տոկոսը։ Այդ աճը որոշ չափով տեղի է ունեցել գյուղից եկածների և ներգաղթի հաշվին։ Սովետական իշխանության տարիներին աշխարհի տարբեր երկրներից հայրենիք վերադարձան 130 հազար հայեր, որոնք տեղավորվեցին Երևան, Լենինական, Կիրովական, Ալավերդի, Քաջարան, Հրազդան, Չարենցավան, Հոկտեմբերյան և այլ քաղաքներում։

1965 թվականին Հայաստանում կար 9 քաղաք՝ յուրաքանչյուրը մինչև 10 հազար բնակչությամբ, 9 քաղաք՝ մինչև 20 հազար, 2 քաղաք՝ մինչև 25 հազար, 2 քաղաք՝ մինչև 100 հազար և ավելի բնակչությամբ։ Երևանը հանդիսանում է Միության 25 խոշոր քաղաքներից մեկը՝ 700 հազարից ավելի բնակչությամբ։

Ժողովրդական տնտեսության զարգացման շնորհիվ հանրապետությունում աճել է բանվոր-ծառայողների թիվը, ինչպես նաև փոխվել է նրանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության մեջ։ Եթե 1925 թվականին Հայաստանում կար 32 հազար բանվոր-ծառայող, 1940 թվականին՝ 142 հազար, ապա 1965 թվականին նրանց քանակը հասավ 582 հազարի, այսինքն 20 տարում ավելացավ 15 անգամ։ Այդ թվից մոտ 200 հազարը կանայք են։

Մեծ չափով աճել են քաղաքների զարգացման համար պետության կողմից ներդրվող գումարները։ Եթե 1923 թվականին հանրապետության բյուջեն կազմել է մի քանի հարյուր հազար ռուբլի, ապա 40 տարի հետո՝ 1963 թվականին, միայն քաղաքների բյուջեն հասել էր 160 միլիոն ռուբլու, որից կոմունալ շինարարությանը հատկացվել է 59 միլիոն, լուսավորությանը՝ 62 միլիոն, առողջապահությանը՝ 30 միլիոն ռուբլի։ Միայն Երևանի 1965 թվականի բյուջեն կազմում էր 65 միլիոն ռուբլի[1]։ Բյուջեի այդպիսի ավելացումը ոչ միայն քաղաքների բարգավաճման, այլև աշխատավորության նյութական ապահովության կարևոր ցուցանիշներից մեկն է։

Ետպատերազմյան տարիներին Սովետական Հայաստանում լայն ծավալ ստացավ պետական բնակարանային շինարարությունը։ Եթե 1946—1950 թվականներին բնակարանային շինարարությանը հատկացվել է 40 միլիոն ռուբլի, 1951—1955 թվականներին՝ 60 միլիոն, ապա 1956—1958 թվականներին՝ մոտ 75 միլիոն ռուբլի։ Յոթնամյակի տարիներին բնակարանային շինարարությանը հատկացվել է 378 միլիոն ռուբլի, որով կառուցվել է 4,3 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն, այսինքն՝ մոտ 1,5 անգամ ավելի, քան սովետական իշխանության նախորդ տարիներին։

---

[1] Նոր դրամով։ Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ ֆինանսների մինիստրությունից։

Բնակարանային շինարարությունը լայն թափ ստացավ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1957 թվականի հուլիսի 31-ի «ՍՍՀՄ-ում բնակարանային շինարարության զարգացման մասին» որոշումից հետո։

Վերջին տարիներին ավարտվեց մի քանի խոշոր շենքերի շինարարությունը՝ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի շենքերի կոմպլեքսը Աշտարակում, շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտի, պետական



Երևանի պետական համալսարանի գլխավոր շենքը

համալսարանի և ուսանողական հանրակացարանի շենքերի կոմպլեքսը Երևանում, արհեստական մետաքսաթելի գործարանի շենքերի կոմպլեքսը Կիրովականում, կոմպոզիտորների տան շենքերի կոմպլեքսը Դիլիջանում և այլն։

1957—1967 թվականներին Հայաստանի քաղաքներում և ավաններում շահագործման է հանձնվել մոտ 5 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն։ Նույն ժամանակամիջոցում գյուղերում պետության օգնությամբ կառուցվել է 80 հազար տուն։ 1950 թվականին շահագործման է հանձնվել 70 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, 1964 թվականին՝ 450 հազար քառակուսի մետր։ Կառուցվել են բազմաթիվ դպրոցներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, մանկական հիմնարկներ և կուլտուր-կենցաղային օբյեկտներ։

Պետական բնակարանային շինարարության հետ միասին քաղաքներում, քաղաքատիպ ավաններում և գյուղերում լայն ծավալ է ստացել անհատական բնակարանային շինարարությունը, որին կառավարությունը ցույց է տալիս մեծ օգնություն՝ հատկացնելով խոշոր միջոցներ՝ երկարատև վարկի ձևով և

շինանյութերի վաճառումով։ 1946—1955 թվականներին կառուցվել է ավելի քան մեկ միլիոն քառակուսի մետր անհատական բնակելի տարածություն. 1956—1965 թվականներին՝ երեք անգամ ավելի։

Նորակառույցների շնորհիվ քաղաքներում, ավաններում և գյուղերում վերացվում էին հին, խարխուլ տները և գետնափորները։

1960 թվականին հանրապետության 14 քաղաքներում անհատական բնակելի ֆոնդը հասել էր 4,25 միլիոն քառակուսի մետրի, այսինքն 1956 թվականի համեմատությամբ եռապատկվել էր։ Երևանում անհատական բնակելի ֆոնդը 1960 թվականին կազմում էր 2,5 միլիոն քառակուսի մետր, Լենինականում՝ 0,5 միլիոն, Կիրովականում՝ 0,25 միլիոն, Ղափանում, Հոկտեմբերյանում և Էջմիածնում՝ 100 հազար քառակուսի մետր։ Այսպիսով, յոթնամյակի վերջում քաղաքներում և ավաններում բնակելի ֆոնդը հասել էր ավելի քան 10 միլիոն քառակուսի մետրի։ Այդ նշանակում է, որ մեկ շնչին ընկնող բնակելի տարածությունը միջին հաշվով կազմում էր 7 քառակուսի մետր։

Սովետական քաղաքաշինության հիմնական պահանջներից մեկը քաղաքների կանաչապատումն է։ Կանաչ զանգվածները, ջրավազանները ու արհեստական լճերը, գեղեցիկ շենքերի հետ միասին, լրացնում ու հարստացնում են քաղաքների ճարտարապետական անսամբլը, բարելավում կլիման։ 1965 թվականին հանրապետության քաղաքներում կանաչ տարածությունները հասել էին 3970 հեկտարի, որից Երևանում՝ 2360, Լենինականում՝ 323, Կիրովականում՝ 253, Հոկտեմբերյանում՝ 81, Հրազդանում՝ 75, Դիլիջանում՝ 60, Գորիսում՝ 42 հեկտար և այլն։

Երևան, Աբովյան, Ղափան, Քաջարան, Կիրովական, Հրազդան և այլ քաղաքներում ստեղծվել են անտառային զոտիներ։ Երևանի հյուսիս-արևելյան մասում անցկացված է երկրորդ կանաչ գոտին՝ 1575 հեկտար տարածությամբ։ Քաղաքներում մեծ չափով ընդլայնվել են պուրակների և ծաղկանոցների տարածությունները, կանաչապատվել են արդյունաբերական ձեռնարկությունների և խոշոր բնակելի շենքերի բակերը։

Նախագծային ինստիտուտները կազմել են Հայաստանի քաղաքների, քաղաքատիպ ավանների ու շրջանային կենտրոնների առաջիկա 15—20 տարվա պլանավոր հատակագծերը։

Սովետական Հայաստանում կատարվող քաղաքաշինական աշխատանքների ծավալմանը մեծապես նպաստում են տեղում գտնվող քարային շինարարական նյութերը, մասնավորապես հրաբխային տուֆերը, բազալտը, գրանիտը, որոնց պաշարները մեծ են։ Բացի շինարարական քարերից, հանրապետության տերիտորիայում կան ցեմենտի, կրաքարի, գաջի և այլ շինանյութերի՝ արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրեր։

Սովետական իշխանության տարիներին հանրապետության բոլոր քաղաքներում և ավաններում անցկացվեց ջրմուղի լայն ցանց, որի շնորհիվ մեծ չափով ավելացավ օգտագործվող ջրի քանակը։ 1965 թվականին ջրմուղի երկարությունը հասավ 622 կիլոմետրի։ Քաղաքներում կոյուղու մայր գծերի (կոլեկտորի) երկարությունը 1965 թվականին հասավ 47 կիլոմետրի։ Սակայն կոյուղու ցանցի ծավալումը ետ է մնում քաղաքների աճից։ Հանրապետության

15 քաղաքներ և 17 ավաններ դեռևս կոյուղի չունեն, իսկ եղածն էլ անհրաժեշտ չափով կատարելագործված չէ։

Հանրապետության հարուստ էլեկտրաէներգետիկ բազան հնարավորություն է ստեղծել էլեկտրականությունը լայնորեն արմատավորելու ժողովրդական տնտեսության մեջ և կենցաղում։ Էլեկտրիֆիկացված են բոլոր քաղաքներն ու գյուղերը։

Եղբայրական Ադրբեջանից ստացվող բնական գազի շնորհիվ քաղաքներում ծավալվեց գազամուղ մագիստրալների շինարարությունը։ 1960 թվականից սկսած Երևան, Լենինական, Կիրովական, Սևան, Դիլիջան, Իջևան քաղաքներում բնակչությունն օգտագործում է բնական գազ։ Այդ և մյուս քաղաքներում տասնյակ հազարավոր ընտանիքներ օգտագործում են հեղուկ գազ։

Նախասովետական տարիներին Հայաստանի քաղաքները զուրկ էին հասարակական տրանսպորտից։ Միակ բացառությունը Երևանի ձիաքարշն էր, որը գործել է 1906—1918 թվականներին, ընդհատումներով։

Սովետական իշխանության տարիներին քաղաքներում զարգացավ էլեկտրաքարշային, տրոլեյբուսային, ավտոմոբիլային տրանսպորտը։ 1933 թվականին Երևանում շահագործման հանձնվեց էլեկտրաքարշը, որի միագիծ երկարությունը 1965 թվականին հասավ 86 կիլոմետրի, իսկ 1949 թվականին շահագործման հանձնված տրոլեյբուսային տրանսպորտի միագիծ երկարությունը՝ 127 կիլոմետրի։ 1962 թվականին տրոլեյբուսային երթևեկություն սկսվեց նաև Լենինական քաղաքում։ Տարեցտարի ավելանում են երկաթուղային, օդային և մասամբ ջրային տրանսպորտով կատարվող փոխադրումները։

Քաղաքների կառուցապատման բուռն վերելքը և տրանսպորտի բազմաթիվ տեսակների արագ աճը պահանջում են ունենալ լայն մայրուղիներ, ասֆալտապատ, բարեկարգ փողոցներ։ Հայաստանի քաղաքների, քաղաքատիպ ավանների փողոցային միագիծ երկարությունը 1965 թվականին հասնում էր 1543 կիլոմետրի։

Ստալինյան տարիներին խոշոր աշխատանքներ են կատարվել կապի ցանցի ընդարձակման ուղղությամբ։ Քաղաքային հեռախոսային կապի կարողությունը 1965 թվականի վերջերին հասավ հիսուն հազար համարի։ Հանրապետության բոլոր քաղաքները, քաղաքատիպ ավաններն ու շրջանային կենտրոններն ապահովված են բազմաճյուղ հեռախոսային կապով։ Հայաստանի քաղաքները լուսահեռագրային կապ ունեն Երևանի հետ, իսկ վերջինս՝ Միության քաղաքների հետ։ Բոլոր քաղաքներում հեռագրային կապը իրականացվում է ավտոմատ կերպով։

Հանրապետության բոլոր քաղաքներն ու գյուղերը ռադիոֆիկացված են։ 1957 թվականից սկսեց գործել Երևանի հեռուստատեսության կայանը, որը հետագայում մեծ չափով ընդարձակվեց։ Նա սպասարկում է Երևան, Լենինական, Սևան, Հրազդան, Հոկտեմբերյան, Արտաշատ, Էջմիածին, Աշտարակ ու Արարատ քաղաքներին և հանրապետության շատ այլ բնակավայրերի։

1951 թվականին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հաստատեց Երևանի գլխավոր հատակագիծը։ Վերջին 16—17 տարիներին մայրաքաղաքի կառուցապատման աշխատանքները կատարվել են այդ հատակագծով։

1950-ական թվականների վերջերից քաղաքաշինության մեջ սկսվեց ա-

զատ և ընդարձակ տարածությունների օգտագործումը։ Դրա լավագույն օրինակն են Հրազդանի աջափնյակը և Նորքի զանգվածը։ Մի քանի տարում աջափնյակը և Նորքի զանգվածը դարձան մայրաքաղաքի բնակելի խոշոր արվարձաններ։ Հրազդանի աջափնյակը զբաղեցնում է 450 հեկտար, 600 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ և 55 հազար բնակչությամբ։

Վերջին տարիներին խոշոր զանգվածներով բնակարանային շինարարություն է կատարվել նաև Չարբախում, Նոր Ջեյթունում, Արաբկիրում, Կիևյան, Մերեթելի, Չարենցի և այլ փողոցներում։ Լայն թափ ստացավ կոոպերատիվ բնակարանային շինարարությունը։ Միայն 1964 թվականին Երևանում կառուցվել է մոտ 50 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն՝ կոոպերատիվ հիմունքներով։

Բնակարանային շինարարությանը զուգընթաց մայրաքաղաքում մեծ մասշտաբներով կատարվել են բարեկարգման աշխատանքներ, բացվել են նոր պողոտաներ, փողոցներ։ Ավարտվել են Ազատության պողոտայի բարեկարգման աշխատանքները։ Դա Երևանի առաջնակարգ փողոցներից մեկն է՝ երկուատեք երթևեկությամբ, մեջտեղում կանաչ գաղոններով։ Հիմնովին վերակառուցվել և բարեկարգվել է Երևան-Էջմիածին խճուղին, որի շրջակայքում ստեղծվում են հանգստի և կուլտուրայի վայրեր։

Մայրաքաղաքի կենտրոնական մասում Սայաթ-Նովայի պողոտայի բացումը կարևոր նշանակություն ունեցավ։ Այս պողոտան անցնում է քաղաքի կենտրոնով։ Սայաթ-Նովայի պողոտան Չարենցի փողոցը՝ իր շրջապատով, և Գետառը կապեց Լենինի պողոտայի և օպերային թատրոնի հրապարակի հետ։ Ավարտվել է քաղաքի գլխավոր մայրուղիներից մեկի՝ Աբովյան փողոցի վերակառուցումը։ Կառուցապատվել է Կոմիտասի փողոցը, որը մայրաքաղաքի ամենաերկար և գեղեցիկ մայրուղիներից մեկն է։ Խոշոր աշխատանքներ են կատարվում հրապարակների ու փողոցների վերակառուցման ու բարեկարգման, կանաչապատման և կոմունալ ցանցի ընդարձակման ուղղությամբ։ Երևանի տերիտորիան ընդգրկում էր 13.500 հեկտար տարածություն։

1920 թվականին Երևանն ուներ 14 հեկտար, իսկ 1965 թվականին՝ 775 հեկտար կանաչ տարածություն, չհաշված շրջակա այգիներն ու 1500 հեկտար քաղաքի կանաչ գոտին, որը ձգվել է Քանաքեռի և Նորքի սարալանջերով մինչև Սովետաշեն։ Հրազդանի ձորում ստեղծված հանգստյան գոտին միաձուլվել է Ծիծեռնակաբերդի սարահարթի զբոսայգուն։ Հրազդանի դիրճում է գտնվում Խ. Աբովյանի անվան կուլտուրայի և հանգստյան պարկը՝ մանկական երկաթուղով։ Քաղաքում ստեղծվել է արհեստական լճերի մի ամբողջ ցանց։

Երևանի հատակագծման ու բարեկարգման աշխատանքները կատարում է Երևան-նախագիծ ինստիտուտը։ Ինստիտուտի ճարտարապետական-հատակագծային արվեստանոցը, ճարտարապետ Մ. Մազմանյանի ղեկավարությամբ, մշակել է մայրաքաղաքի 1965—1980 թվականների զարգացման հատակագիծը, ըստ որի Երևանը, որպես արդյունաբերական խոշոր կենտրոն, գիտության, արվեստի և հայ ժողովրդի մշակույթի գլխավոր օջախ, ունենալու է մոտ մեկ միլիոն բնակչություն։

Քաղաքի տարբեր մասերում տեղադրված են կինո-թատրոններ, ակումբներ, գրադարաններ, կենցաղ-սպասարկման խոշոր օբյեկտներ և առողջապա-

հական հիմնարկներ, տեխնիկայի և երիտասարդական պալատների բազմահարկ շենքեր։ Մեծ չափերով ընդարձակվում է կոմունալ տնտեսության և առևտրական, ինչպես նաև կապի ցանցը։

Հրազդանի կիրճում կառուցվել է Երևանյան լիճը՝ 65 հեկտար տարածությամբ։ Նրա ջրերը ողողում են քաղաքի հարավ-արևմտյան մասի հովիտը։ Նույն կիրճում ստեղծվեցին բազմաթիվ ջրավազաններ, իսկ Քանաքեռգէսի ամբարտակի մոտ՝ ջրասպորտային պարկ։ Քաղաքի գլխավոր փողոցներում ձգվում են ծառուղիներ։

Բարեկարգված փողոցներն ու պողոտաները, ընդարձակ հրապարակները, բազմաթիվ բնակելի, հասարակական և վարչական շենքերը՝ շրջապատված այգիներով և կանաչ տարածություններով, առավել գեղեցիկ են դարձնում Երևանը, որի հիմնադրման 2750-ամյակը մեծ շուքով նշվեց 1968 թվականին։

Երևանը բաժանվում է վարչական վեց շրջանների՝ Լենինյան, Սպանդարյան, Օրջոնիկիձեի, 26 կոմիսարների, Շահումյանի և Մյասնիկյանի։

Լենինականում նույնպես շարունակվում են կառուցապատման և բարեկարգման աշխատանքները։ Զգալիորեն փոխվել է քաղաքի ճարտարապետական դեմքը։ Վերակառուցվել և բարեկարգվել են Մ. Գորկու, Կալինինի, Սայաթ-Նովայի անվան փողոցները։ Լենինի անվան լայն, ասֆալտապատ պողոտան սկսվում է երկաթուղային կայարանի հրապարակից և հասնում Սայաթ-Նովայի, Կալինինի փողոցների և Թբիլիսիի խճուղու հատման վայրը՝ Լենինի հրապարակ։ Այստեղ է գտնվում Վ. Ի. Լենինի արձանը, որը քանդակել է ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Ս. Մերկուրովը։ Արձանի պատվանդանը կառուցվել է Փամբակի գրանիտից՝ ճարտարապետ Մ. Գրիգորյանի նախագծով։ Կալինինի փողոցը, որը տեքստիլ կոմբինատը կապում է քաղաքի հետ, սկսվում է Աստղի հրապարակից։ Ետպատերազմյան տարիներին Լենինի անվան հրապարակում ստեղծվել է ջրավազան՝ շատրվաններով, մարմարյա տրիբունայով և ծաղկանոցներով։

Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման և բնակարանային շինարարության ծավալման կապակցությամբ քաղաքում առաջացան վեց նոր թաղամասեր՝ Տեքստիլ-պուրակավանը, Երկաթուղայինը, Պոլիգոնի խճուղին, Մարալիկը, Նորավանն ու Պողպատավանը։ Վերջին երկու ավաններում պետական վարկի օգնությամբ իրենց բնակարաններն են կառուցել 500-ից ավելի հայրենադարձ հայեր։ Տարեցտարի բարեկարգվում են այդ ավանները, ուր կառուցվել են դպրոցական շենքեր, կուլտուր-լուսավորական, առողջապահական հիմնարկներ։

Քաղաքի զարդն է Ստ. Շահումյանի անվան հանգստի և կուլտուրայի պարկը, ուր վեր է խոյանում Մայիսյան ապստամբության հերոսների հիշատակին նվիրված կոթողը։

Հայպետնախագիծ ինստիտուտի կազմած 1960—1980 թվականների հատակագծով Լենինականում կառուցվում են արդյունաբերական նոր ձեռնարկություններ, պետական և հասարակական բազմահարկ շենքեր, ընդարձակվում է կոմունալ ցանցը, բարեկարգվում են փողոցներն ու թաղամասերը, ստեղծվում է «Ախուրյան» լիճը։ Նախկին Գյումրին դարձել է արդյունաբերա-

կան կարևոր կենտրոն, սոցիալիստական բարեկարգ քաղաք՝ բազմահարկ բնակելի և հասարակական շենքերով։

Կիրովականում կառուցված արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկությունները կերպարանափոխեցին քաղաքը, այն դարձավ Հայաստանի արդյունաբերական կարևոր կենտրոններից մեկը։

Նախկինում կազմված քաղաքի գլխավոր հատակագիծը վերամշակվեց և 1953 թվականին հաստատվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կողմից։ Այդ հատակագծի համաձայն Կիրովականում կառուցվեցին արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ ու փորձնական բաղաներ։ Վերակառուցվեցին ու բարեկարգվեցին հին փողոցները, բացվեցին նոր փողոցներ, պողոտաներ, ստեղծվեցին մի շարք թաղամասեր։ Խնձորուտ և Ժդանով գյուղերը ձուլվեցին քաղաքին։ Քաղաքի զբաղեցրած տարածությունը հասավ 1500 հեկտարի։

Քաղաքի կենտրոնում է գտնվում Ս. Մ. Կիրովի անվան հրապարակը՝ նրա հուշարձանով (հեղինակ՝ Արա Սարգսյան)։ Հրապարակի շուրջը բարձրացել են վարչական, հասարակական և բնակելի բազմահարկ շենքեր։ Վերակառուցվել և բարեկարգվել են Մարքսի, Երևանյան, Աբովյան, Շահումյան փողոցները, քիմիագործների, կայարանի և քաղաքային զբոսայգիները։ Բուսաբանական այգին հարստացել է նոր ծառատեսակներով, որոնք բերված են աշխարհի բազմաթիվ երկրներից։ Քիմիագործների թաղամասում բացվել են նոր փողոցներ, իսկ անտառի տակ բնակելի նոր թաղամաս է առաջացել։ Փամբակ գետի ձախ ափին կառուցվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ և բնակելի շենքեր։ Այդ մասում բարձրացել են արհեստական մետաքսաթելի գործարանի արտադրական և բնակելի շենքերը։

Պետական բնակելի շենքերը Կիրովականում կառուցվում են նաև ազատ հողամասերում՝ Դիլիջանի խճուղու վրա, սանատորիայի շրջակայքում և Դիմացի թաղամասում։ Քաղաքում կառուցվում են 10—12 հարկանի շենքեր։

Կիրովականցիները սահմանեցին երգի և ծաղկի տոնակատարության օրեր։ Այդ նախաձեռնությանը արձագանքեցին հանրապետության այլ քաղաքներ։

Կառուցապատման համար դժվարին ու բարդ տեղանք ունեն Ալավերդի, Ղափան և Քաջարան քաղաքները, որոնք աճել ու զարգացել են լեռնալանջերին, քաղաքաշինության համար միանգամայն աննպաստ պայմաններում։

Ալավերդին յուրահատուկ է իր աշխարհագրական դիրքով։ Քաղաքի թաղամասերը միմյանցից կտրված են, ընկած են իրարից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, տարբեր սարալանջերում ու սարահարթերում, իսկ քաղաքի կենտրոնը գտնվում է Դեբեդի նեղ կիրճում։ Ալավերդու կառուցապատման, մասնավորապես կոմունալ տնտեսության զարգացման աշխատանքները կապված են մեծ ծախսերի ու դժվարությունների հաղթահարման հետ։ Էնգելսի թաղամասում բարձրացել են բազմահարկ բնակելի շենքեր։ Անհատական բնակարանների շինարարությունը կենտրոնացավ Շահումյանի թաղամասում։ Արդյունաբերական և բնակարանային շինարարության հետ միասին, Ալավերդում կատարվել են այնպիսի կառուցումներ, ինչպիսիք են ծածկած շուկան,

երկաթուղային կայարանի շենքը, պղնձադործների կուլտուրայի պալատը, Դերեկ գետի մեծ կամուրջը և այլն։

Պղնձարդյունաբերության զարգացման հետ միասին քաղաքաշինական զգալի աշխատանքներ կատարվեցին Ղափանում։ Քաղաքային բնակչությունը հասավ 25 հազարի։ Արագ տեմպերով աճող բնակչության բնակարանային և կոմունալ պահանջները բավարարելու նպատակով Ղափանում ծավալվեց պետական և անհատական բնակարանային շինարարություն։ Քաղաքում առաջացան մի շարք նոր թաղամասեր։



Սենիկական Վ. Ի. Լենինի անվան հրապարակը

1940-ական թվականների վերջերին, երբ հիմնադրվեց պղնձա-մոլիբդենային կոմբինատը, Ողջի գետի ափերն ամայի սարալանջեր էին։ Տեղանքի բարդ պայմաններում, բարձր սարերի լանջերին բացվեցին ապագա արդյունաբերական կարևոր կենտրոն՝ Քաջարան նոր քաղաքի փողոցները։ Կոմբինատի կառուցմանը զուգընթաց տարեցտարի աճեց ավանի բնակչությունը։ Այստեղ կառուցվեցին պետական բնակելի և հասարակական շատ շենքեր։ Ստեղծվեցին կուլտուր-լուսավորական և առողջապահական հիմնարկներ։ Անցկացվեց ջրմուղ-կոյուղու ցանց։ Քաղաքը էլեկտրիֆիկացվեց, ռադիոֆիկացվեց։ Ստեղծվեց կապի լայն ցանց։ Կարճ ժամանակամիջոցում բարեկարգվեցին ու կանաչապատվեցին փողոցները։ 30 կիլոմետր երկարությամբ ընդարձակ ասֆալտապատ ճանապարհով Քաջարանը կապվեց Ղափանի հետ։

Սևան, Հրազդան, Չարենցավան, Արովյան քաղաքները դարձան արդյունաբերական նոր կենտրոններ։

Ծտպատերազմյան տարիներին քաղաքաշինական խոշոր աշխատանքներ են կատարվել Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Արտաշատում, Աշտարակում

և Արարատում։ Պետական, բնակելի և հասարակական շենքերի կողքին մեծ չափերով կատարվել է անհատական բնակարանային շինարարություն։

Քաղաքաշինական զգալի աշխատանքներ են կատարվել նաև Արթիկում, Ստեփանավանում, Սպիտակում, Գորիսում, Կամոյում, Իջևանում, ինչպես և կուրորտային քաղաքներ ու ավաններ Դիլիջանում, Արզնիում, Ջերմուկում, Ծաղկաձորում և Հանքավանում։

Դիլիջանը դարձել է քաղաք-առողջարան։ Ընդարձակվել է առողջապահական հիմնարկների ցանցը։ Դիլիջանում և Գոլովինոյում կառուցվել են առողջարանների բազմաթիվ շենքեր, որոնք շրջապատված են գեղեցիկ բնությամբ։ Ծաղկաձոր քաղաքատիպ ավանը դարձել է մանկական քաղաք-առողջարան, ուր կառուցվել են տուֆակերտ բազմաթիվ շենքեր, ստեղծվել է առողջապահական հիմնարկների լայն ցանց։

Հրազդանի գեղատեսիլ ձորում շահագործման են հանձնվել այնպիսի խոշոր կառույցներ, ինչպիսիք են Արզնու կլինիկական սանատորիան և ջրաբուժարանը։

Կուրորտային քաղաքներն ու ավանները միաժամանակ հանքային բուժիչ հատկություն ունեցող ջրերի արտադրության կենտրոններ են։ «Ջերմուկ», «Դիլիջան», «Սևան» և «Հանքասվան» ջրերի գործարանները տարեկան մի քանի միլիոն շիշ հանքային ջուր են արտադրում։

Ջերմուկ առողջարանն ունի միութենական նշանակություն։ Այստեղ կառուցապատման աշխատանքներն սկսվել են հետպատերազմյան տարիներին։

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին արդյունաբերության զարգացման շնորհիվ առաջացան սոցիալիստական նոր քաղաքներ և բանվորական ավաններ։ Հիմնովին կերպարանափոխվեցին հին քաղաքները։